

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՍՊԱՐՏԱԿԻ

**ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ
Ջ. ՕՐՈՒԵԼԻ «1984» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**«Ռոմանագերմանական լեզուներ» (Ժ.02.07) մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար**

**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ Ք. Հ. ՍՈՂԻԿՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ I. ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
Ջ. ՕՐՈՒԵԼԻ «1984» ՎԵՊՈՒՄ	11
1.1 ԽՈՍՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹ.....	14
1.2 ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ	19
1.3 «ԵՐԿՄԻՏՔԸ» ԵՎ «ՆՈՐԽՈՍՔԸ» ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ Զ. ՕՐՈՒԵԼԻ «1984» ՎԵՊՈՒՄ	29
ԳԼՈՒԽ II. ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՆՊԱՏԱԿ.....	38
2. 1 ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՀԱՅԵՑԱԿԵՐՊԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	38
2.2 ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ.....	57
ԳԼՈՒԽ III. ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ «1984»-Ի ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ	67
3.1 «ՆՈՐԽՈՍՔԻ» ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «1984» ՎԵՊԻ ԲՆԱԳՐՈՒՄ.....	71
3.2 ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԽՈՍՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	78
3.3 ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՅՄԱՆ ԱՆՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԽՈՍՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	114
3.4 ՀԱՆՐԱԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ «1984» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ.....	123
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	137
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	143
ՀԱՎԵԼՎԱԾ 1	159
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	167

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մերօրյա աշխարհում կյանքի ընթացքի արագացմանը, հաղորդակցության և կապի ծավալների և միջոցների ավելացմանը զուգընթաց միջազգային և միջպետական հարաբերությունները ձեռք են բերել ավելի բազմաշերտ բնույթ: Քաղաքականությունը՝ որպես վերոնշյալ փոխհարաբերությունների առկայացման ասպարեզ, դարձել է դժվար վերլուծելի մի հարթություն, որտեղ միմյանց են բախվում անհատների, ժողովուրդների, իշխանությունների, պետությունների և անգամ ողջ տարածաշրջանների հետաքրքրությունները, շահերն ու տեսլականները:

Տեղեկատվության համատարած և արագ հասանելիության պայմաններում յուրաքանչյուր անհատ ներքաղաքական զարգացումների և վայրիվերումների մասին իր ականա տեղեկացվածությամբ անուղղակիորեն ազդում է քաղաքական գործիչների կայացրած որոշումների և քաղաքական իրադարձությունների ընթացքի վրա: Իսկ կապի համատարած հասանելիության շնորհիվ այսօր յուրաքանչյուր ոք կարող է քաղաքականության հարափոփոխ ասպարեզում իր կարծիքն ու կարիքները լսելի դարձնել:

Երկրի իշխանությունը, որի նպատակը միշտ չէ, որ ժողովրդի համար բարենպաստ կյանքի ապահովումն է, պատրաստ է գործարկելու ցանկացած լծակ քաղաքական որոշումներում բացարձակ մենիշխանություն ձեռք բերելու համար: Քաղաքական գործընթացների արդարացիությունն ապահովելու լավագույն միջոցը, իհարկե, մտաշահարկումն է՝ մանիպուլյացիան, որը ամենավաղ ժամանակներից եղել է քաղաքականության ոլորտի ամենաառանցքային բնորոշումներից մեկը:

Շահադիտական իշխանության բուն նպատակը ժողովրդի տեղեկացվածության մակարդակի նվազեցումը և քաղաքացիների շրջանում տեղի ունեցող գործընթացների, ինչպես նաև դրանց արդյունքում ձևավորված իրականության մասին թյուր պատկերացում ստեղծելն է: Այս կերպ՝ իշխանությունները կխուսափեն ժողովրդի դիմակայությունից և հնարավորություն կունենան անխափան կերպով իրականացնել իրենց շահադիտական կառավարումը: Ինչպես դեռևս անտիկ ժամանակներում, այնպես և այսօր, այս նպատակի իրականացմանը միտված ամենահզոր միջոցը լեզուն է (Chilton 2004): Լեզվի հստակ կիրառությամբ՝ նպատակահարմար բառերի և

արտահայ-տությունների ընտրությամբ, կոչական մեծ ներուժ ունեցող ոճական և ճարտասանական հնարների կիրառությամբ, օբյեկտիվ իրականությանը և սեփական գործողություններին հղում չանող շարահյուսական կառույցների գործածությամբ և այլ միջոցներով, բռնատիրական իշխանությունները լեզվականորեն շահարկում են մարդկանց աշխարհընկալումն ու իրականության ըմբռնումը՝ ապահովելու շարունակական հանրային ենթակայություն:

Հանրության՝ լեզվի միջոցով իրականացվող քաղաքական մտաշահարկման և դրա կործանարար հետևանքներին լավագույնս անդրադարձել է անգլիացի գրող Ջորջ Օրուելը, ով, ապրելով մեծ ցավ իր իսկ ժամանակների բռնատիրական-մտաշահարկային կառավարությունների պատճառով և ունենալով մեծ անհանգստություն դրա հետևանքով ձևավորվող ապագա աշխարհի վերաբերյալ, իր մանրակրկիտ դիտարկումները մարմնավորել է գրական ստեղծագործությունների հսկայածավալ ժառանգության մեջ: Օրուելի գրական գործերից յուրաքանչյուրը հակաբռնատիրական և հակամտաշահարկային մարգարեություն է: Եվ քանի դեռ քաղաքական մտաշահարկումը շարունակում է մնալ մարդկության ամենախոշոր չարիքներից մեկը, Ջ. Օրուելի ստեղծագործությունները չեն կորցնի իրենց գաղափարական արդիակա-նությունը: Ինչպես նշում է Փոլ Չիլթոնը մեզ ուղղված իր անձնական հաղորդագրության մեջ, «Օրուելի ասածն այսօր ավելի արդիական է, քան երբևէ» (անձնական հաղորդագրություն, հունիսի 5, 2017թ., researchgate.net հարթակում):

Սրա վառ ապացույցն են ոչ միայն մեր ժամանակների «ժողովրդավարական» պետությունների քաղաքական գործիչների կողմից տրվող մտաշահարկային ելույթները՝ այսօր արդեն գերզարգացած զանգվածային լրատվության միջոցներով, այլ նաև այնպիսի պետության գոյությունը, ինչպիսին է, օրինակ՝ Հյուսիսային Կորեան, որը կարծես Օրուելի «1984» մարգարեական վեպում ներկայացված հակաուտոպիստական հասարակության ճշգրիտ ու սահմուկեցուցիչ իրականացումը լինի:

Եվ ինչպես Օրուելի ողջ գրական ժառանգությունը, այնպես էլ դեռևս 1949 թվականին գրված «1984» վեպը, որի հակաբռնատիրական և «ազատարար» ուղերձն

իր ժամանակների ամբողջատիրական իշխանությունների վարած քաղաքականության դեմ էր, չի կորցրել իր արդիականությունը նաև տարածամանակյա կտրվածքով: Ներկայացվող «Երկմտքի» (Doublethink) և «Նորխոսքի» (Newspeak) շնորհիվ վեպը երևան է հանում և լեզվաբանական ճշգրտությամբ մեկնաբանում ժամանակակից քաղաքականության ոլորտում տեղի ունեցող ամենատարբեր շահադիտական երևույթները՝ հանդես գալով որպես բոլոր ժամանակների հզոր հակաբռնատիրական և հակամտաշահարկային պատում:

Վեպն իր հակամտաշահարկային ուղերձը տեղ է հասցնում հատկապես հանրահայտ «նորխոսքի» միջոցով: Նորխոսքը վեպում ներկայացված իշխող կոմունիստական կուսակցության կողմից անգլերենի լեզվական հենքի և օրինաչափությունների այլափոխման միջոցով ստացված քաղաքական լեզու էր, որի նպատակն էր պարզագույն լեզվական կառուցվածքի միջոցով ձևավորել այնպիսի մտածելակերպ և խոսույթ, որոնք կատարելապես կհամապատասխանեին կուսակցության շահադիտական գաղափարախոսությանը՝ բացառելով կուսակցության շահերին դեմ մտքերի կամ մտածողության հնարավոր առաջացումը: Վեպում նորխոսքն արտահայտված է առավելապես բառային միավորների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը, արտահայտելով մտաշահարկված իրականության մաս կազմող կոնկրետ քաղաքական երևույթ կամ գաղափար, վեպում ունի կարևոր հակամտաշահարկային հաղորդակցական նշանակություն:

Որպես առանցքային նշանակության գրական ստեղծագործություն և մտաշահարկային քաղաքական խոսույթը քննադատող հզոր նմուշ՝ մերօրյա մտաշահարկային հասարակություններում ապրող մարդկանց համար վեպի՝ տարբեր լեզուներով հասանելի լինելը կարևոր է և պարտադիր: Վեպի հայերեն տարբերակը, սակայն, Աստղիկ Աթաբեկյանի՝ 2012 թվականին արված թարգմանությամբ, բնագրի հետ համեմատության պարագայում ի ցույց է դնում մտաշահարկային լեզվի, հատկապես նորխոսքի բառային միավորների թարգմանության անհամարժեքության լուրջ դեպքեր, ինչի պատճառով առաջ են գալիս նորխոսքի լեզվամտաշահարկային գործառույթի, և սրա արդյունքում նաև թարգմանվածքում վեպի հաղորդակցական նշանակության համարժեք առկայացման լուրջ խնդիրներ:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ այն ուշադրություն է դարձնում ժամանակակից հասարակություններում իշխանությունների կողմից իրականացվող լեզվական մտաշահարկման բացահայտման և ճանաչման անհրաժեշտությանը, ինչպես նաև միջազգային և միջմշակութային հարաբերությունների խորացման համատեքստում թարգմանության՝ որպես միջլեզվական հաղորդակցության միջոցի կարևորությանը:

Կապի և հաղորդակցության միջոցների կատարելագործմանը և հանրային ու ներպետական հաղորդակցության մեջ դրանց մեծածավալ կիրառությանը զուգընթաց քաղաքական մտաշահարկումը այժմ ձեռք է բերել ավելի բազմաշերտ և համատարած բնույթ: Եթե հնում ժողովրդի՝ իրականության մասին ունեցած պատկերացումը աղավաղելու համար քաղաքական գործիչները կիրառում էին հռետորաբանությունն ու ճառասացությունը՝ դեմ-առ-դեմ հանդիպելով ժողովրդի հետ, ապա այսօր նրանք հնարավորություն ունեն կապի ամենատարբեր միջոցներով ստեղծել մի ողջ խոսույթ, թելադրել այդ խոսույթում քննարկվող և շրջանառվող թեմաները, կառավարել հասանելի ողջ տեղեկատվությունը և դրանով հանրության մոտ ձևավորել իրականության աղճատված պատկեր: Հետևաբար, ժամանակակից քաղաքական խոսույթում մտաշահարկման երևույթի վերհանումն ու դիտարկումն այսօր առավել քան անհրաժեշտ է: Թարգմանությունն էլ, որպես ներկայիս միջլեզվամշակութային հարաբերությունների անփոխարինելի միջնորդ, համամարդկային ժառանգության, արժեքների և փորձառության տարածման գործում անփոխարինելի գործիք է, որի որակյալ իրականացումն այսօր միջազգային զարգացման կարևոր նախապայման է:

Աշխատանքի **ուսումնասիրության առարկան** մտաշահարկային լեզվական կառույցների լեզվագործաբանական առանձնահատկություններն են և թարգմանության մեջ դրանց համարժեք պահպանման խնդիրները: Քաղաքականության ոլորտում լեզվի միջոցով իրականացված մտաշահարկումը ենթադրում է լեզվական կառույցների այնպիսի կիրառություն, որն ուղղված է շահարկելու օբյեկտիվ իրականությունը՝ ստեղծելով գոյություն ունեցողին չհամապատասխանող, միանգամայն այլ մտացածին իրականություն:

Երկու լեզուների միջև գոյություն ունեցող կառուցվածքային անհամապատասխանությունների պատճառով յուրաքանչյուր լեզվում գործաբանական իմաստը ստանում է տարբեր լեզվական արտահայտում: Մի լեզվում շարահյուսական կառույցի միջոցով արտահայտված ներիմաստը մեկ այլ լեզվում կարող է իր լավագույն համարժեքը գտնել բառային միավորի կամ ոճական հնարի կիրառության միջոցով: Այս միջլեզվական անհամապատասխանության պատճառով էլ մտաշահարկային լեզվական կառույցների թարգմանությունն արժանի է առանձնակի ուշադրության:

Աշխատանքի **նպատակն** է վերլուծել քաղաքական մտաշահարկման լեզվական արտահայտչամիջոցների գործաբանական առանձնահատկությունները և թարգմանության մեջ դրանց համարժեք պահպանման խնդրի քննության հիման վրա առաջադրել այս կառույցների համարժեք և պատշաճ փոխադրման համար կիրառելի թարգմանական մոտեցում և ռազմավարություն: Մտաշահարկային լեզվական կառույցները մարդկային մտքի և ճանաչողության շահարկումն իրականացնում են ոչ միայն իրենց արտահայտած գործաբանական իմաստներով, այլ այդ իմաստների արտահայտման լեզվական և կառուցվածքային առանձնահատկություններով: Հետևաբար, թարգմանության գործում վերոնշյալ կառույցների թե՛ իմաստային (բովանդակային) կողմը, և թե՛ լեզվական արտահայտման կողմը թարգմանչի թարգմանական ռազմավարության անբաժանելի մասերն են:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել քաղաքական մտաշահարկման լեզվական, հասարակական-մշակութային, մտային-հոգեբանական և այլ առանձնահատկությունները,
2. ուսումնասիրել թարգմանության համարժեքության գաղափարի շուրջ առաջադրված առկա տեսական դրույթները,
3. առաջադրել մտաշահարկային խոսույթի թարգմանական համարժեքության քննության մեթոդաբանական շրջանակ,
4. քննել մտաշահարկային լեզվական միջոցների առանձնահատկությունները անգլերենում,

5. համեմատականորեն վերլուծել բնագրում («1984» վեպում) առկա մտաշահարկային լեզվական կառույցները և դրանց հայերեն թարգմանությունները,
6. հայտնաբերված թարգմանական անհամարժեքությունների դեպքում առաջադրել թարգմանության այլ տարբերակներ,
7. կատարված վերլուծության հիման վրա առաջարկել մտաշահարկային լեզվական կառույցների համարժեք թարգմանության ռազմավարություն:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար սույն աշխատանքում կատարված հետազոտությունն անցկացվել է մի շարք **մեթոդների** համադիր կիրառությամբ: Կիրառվել են մասնավորապես.

- համակարգային վերլուծության վերլուծական և համադրական դիտարկման մեթոդները,
- լեզվագործաբանական վերլուծության մեթոդը,
- նկարագրական և զուգադրական վերլուծության մեթոդները,
- բառակազմական վերլուծության մեթոդը,
- լեզվաոճական վերլուծության մեթոդը,
- լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդը
- գրականագիտական վերլուծության մեթոդը:

Աշխատանքի **մեթոդաբանական հենքը** թարգմանական համարժեքությանը՝ որպես թարգմանական գործունեության վերջնանպատակի, ինչպես նաև թարգմանության որակի դիտարկման գործում վերջինիս առանցքային կարևորությանը նվիրված աշխատություններում արծարծված դրույթներն են:

Աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվում է քաղաքական խոսույթում մտաշահարկային լեզվական կառույցների հայերեն թարգմանությունը, քննվում են թարգմանության ժամանակ կիրառված կոնկրետ ռազմավարությունը և թարգմանական հնարների համակազմը: Թարգմանական հետազոտության արդյունքում աշխատանքում առաջադրվում է մտաշահարկային խոսույթի լեզվական միավորների համարժեք թարգմանություն ապահովող նոր թարգմանական մոտեցում:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է թարգմանության որակի գնահատմանը, ինչպես նաև թարգմանության գործընթացում համարժեքության պահպանմանը վերաբերող տեսական շրջանակների համեմատական վերլուծությամբ: Բացի այդ՝ թարգմանաբանությունը, որպես հարաբերականորեն նոր առաջ եկած և դեռևս զարգացման ու իմաստավորման փուլում գտնվող գիտակարգ, կարիք ունի ինչպես գոյություն ունեցող տեսական դրույթների շարունակական համակարգման և փորձարկման, այնպես և նոր տեսական դրույթների առաջադրման: Այս խնդիրների լուծմանն էլ իր օժանդակությունն է բերում սույն աշխատանքը:

Աշխատանքի **գործնական արժեքն** այն է, որ մտաշահարկային լեզվական կառույցների թարգմանությունների վերլուծության արդյունքում մեր կողմից առաջարկված թարգմանական ռազմավարությունը հետագայում կարող է հիմք դառնալ ոչ միայն մտաշահարկային լեզվական միավորների, այլև գործաբանական առանձնահատուկ նշանակություն ունեցող ցանկացած լեզվական միավորի համարժեք և պատշաճ թարգմանության համար: Իսկ վեպի հայերեն թարգմանվածքի՝ սույն աշխատանքում ներկայացված թարգմանական վերլուծությունը հետագայում կարող է հիմք հանդիսանալ գրքի վերախմբագրման և բարելավված տարբերակի վերահրատարակման համար:

Վերլուծության **փաստական նյութը** Ջ. Օրուելի «1984» վեպում առկա մտաշահարկային լեզվական միավորների՝ նորխոսքի բառային միավորների հայերեն թարգմանությունն է:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Առաջին գլխում ներկայացված են խոսույթի, քաղաքական խոսույթում մտաշահարկման և վերջինիս լեզվագործաբանական առանձնահատկությունների մասին տեսական դրույթները, ինչպես նաև մտաշահարկային խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում ներկայացվում են թարգմանության որակի գնահատմանը և համարժեքությանը՝ որպես թարգմանության վերջնանպատակին վերաբերող

տեսական դրույթները, որոնց վերլուծության հիման վրա կառուցվում է մտաշահարկային լեզվի թարգմանության մեթոդաբանական հենք:

Երրորդ գլուխը նվիրված է նորխոսքի բառային միավորների և վեպում տեղ գտած հանրալեզվական կառույցների հայերեն թարգմանության վերլուծությանը, դրա շրջանակում թարգմանական անհամարժեքությունների հայտնաբերմանն ու համարժեք տարբերակների առաջադրմանը:

Ատենախոսության «Եզրակացության» մեջ ամփոփվում են աշխատանքում կատարված վերլուծության ընդհանուր և մասնավոր արդյունքները, որոնք բխում են սահմանված խնդիրներից:

Ատենախոսության վերջում տրված է գրականության ցանկը:

**ԳԼՈՒԽ I. ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Զ. ՕՐՈՒԵԼԻ «1984» ՎԵՊՈՒՄ**

Զ. Օրուելի «1984» վեպի բովանդակային առանցքը ամբողջատիրական կառավարությունների կողմից բնակչության քաղաքական մտաշահարկումն է: Վեպը, լինելով համաշխարհային գրականության նշանավոր ստեղծագործություն, հեղինակի՝ բռնատիրական հասարակարգերի վարած մտաշահարկային քաղաքականության դեմ տարած գաղափարական և ստեղծագործական պայքարի վերջին ամենահզոր հարվածն է: Վեպում հեղինակը բավականին պատկերավոր կերպով առաջադրում է քաղաքական մտաշահարկման գործընթացի ներակա գործոնները՝ բռնի ուժի գործադրումից մինչև խեղաթյուրված լրատվություն և մարդկային կյանքերի անխափան ու ամենահաս վերահսկողություն: Սակայն շատ ավելի նշանակալի են քաղաքական մտաշահարկման լեզվական արտահայտման յուրահատկությունները, որոնց վեպում հեղինակը արժանացրել է մանրակրկիտ մեկնաբանության:

Օրուելը լեզուն դիտում է որպես քաղաքական մտաշահարկման ամենահզոր գործիք և «ի ցույց է դնում, որ լեզուն կարող է գործածվել քաղաքական նպատակներով՝ մարդկանց մոլորեցնելու և մտաշահարկելու համար ձևավորելով այնպիսի մի հասարակություն, որում մարդիկ աներկբայորեն կհնազանդվեն իրենց իշխանությանը և անգիտակցաբար կընդունեն ողջ քաղաքական քարոզչությունը որպես փաստացի իրականություն» (Berkes 2000): Օրուելն, ըստ էության, մտաշահարկումը ներկայացնում է «լեզու-միտք-իրականություն» եռամիասնության միջոցով՝ գտնելով, որ մարդն իրականությունն ընկալում, ճանաչում և ըմբռնում է լեզվի միջոցով, և որ լեզվի միջոցով կարելի է խեղաթյուրել ճշմարտությունն ու կատարելապես շահարկել մարդու միտքը, այսինքն՝ լեզվականորեն միջամտել մարդու աշխարհընկալման և իրականության ճանաչման բնականոն գործընթացին մտացածին, ոչ իրական և թյուր մեկնաբանված իրողությունների կանխամտածված և շահադիտական հրամցման միջոցով: «Քաղաքականությունն ու անգլերենը» հոդվածում խոսելով քաղաքական և հասարակական նպատակներով լեզվի միտումնավոր կերպով աղճատված, անհստակ, այլակերպված կիրառության մասին՝ գրողը նշում է, որ «եթե միտքն աղավաղում է

լեզուն, լեզուն էլ կարող է միտքն աղավաղել» (Orwell 1946): Հենց այս առանցքային փոխազդեցության վրա է հիմնվում Օրուելը քաղաքական մտաշահարկման իր ուսումնասիրության ժամանակ:

Լեզվի այսպիսի մեկնաբանությամբ Օրուելն, ըստ էության, հարում է լեզվաբանական հարաբերականության տեսության այն հիմնական գաղափարին, համաձայն որի լեզուն և նրա կառույցները սահմանում են մարդկային մտածողությունը՝ այդպիսով ունենալով նաև մտքի սահմանափակման, այսինքն՝ աշխարհաճանաչման և քննադատական ու վերացարկված մտածողության սահմանափակման ներուժ:

Լեզվի՝ մարդու միտքը և մտածողությունը ձևավորելու և սահմանելու հնարավոր կարողության մասին խոսվել է դեռ 20-րդ դարի 30-ական թվականներից: Է. Սեպիրի և Բ. Լ. Ուորֆի կողմից առաջադրված տեսությունը, որը նաև անվանում են Սեպիր-Ուորֆի հիպոթեզ (Whorf 1940 և 1956), առաջարկում է այն դրույթը, որ լեզվի ներակա կառույցները անմիջականորեն սահմանում և կանխորոշում են մարդկային մտածողությունն ու աշխարհայացքը: Հետևաբար, որքան հագեցած է լեզուն բարդ քերականական կառույցներով (որոնք իրենց հերթին արտացոլում են տարբեր վերացական կարգեր), եղանակավորում և վերաբերմունք արտահայտող միջոցներով (վերաբերականներ, մակբայներ, ինչպես և ոչ նյութական և զգացմունք-հույզ արտահայտող բառային միավորներ), այնքան բազմակողմանի և բազմաշերտ է լեզվակրի կողմից աշխարհի և իրողությունների ճանաչումը և դրանց տրվող գնահատականը՝ պայմանավորված այդ երևույթների և հասկացությունների անվանման համար լեզվում առկա ատաղձով և նյութով: Վերջիններիս բացակայությունը կամ աղավաղումը, հետևաբար, հանգեցնում է իրականության թյուր կամ թերի ընկալման և աղճատված աշխարհայացքի ձևավորման: Ի դեպ, ըստ լեզվաբանական հարաբերականության տեսության, լեզուն կարող է ազդել մարդկային մտքի և ճանաչողության 3 տարբեր ոլորտների վրա՝

- մարդու ընկալումների ու ճանաչողության վրա, ինչպիսիք են *գույնի, ժամանակի, տարածության, չափի* և այլ երևույթների ընկալումը,
- անհատի ճանաչողության կառուցվածքի և նրա մոտ ձևավորված աշխարհայացքի վրա,

- բուն տրամաբանության կառուցվածքի և տրամաբանական համարվող ցանկացած երևույթի ընկալման վրա (Rogers & Steinfatt 1999):

Եվ իրոք՝ լեզուն մարդկային ըմբռնողականության և աշխարհընկալման այնպիսի միջոց է, որն ի զորու է կողավորելու, պարունակելու և հաղորդելու թե՛ օբյեկտիվ իրականությունն ու բացարձակ ճշմարտությունը, թե՛ շահադիտական և մտաշահարկային նպատակներով ձևակերպված կեղծիքը: Քանի որ լեզուն մարդկային հաղորդակցության, ինչպես նաև տեղեկատվության պահպանման և փոխանցման թերևս ամենահզոր համակարգն է, դրա միջոցով կարելի է այլափոխել ոչ միայն ներկա իրականությունը, այլ նաև խմբագրել անցյալը, ձևափոխել պատմությունը և «նորաստեղծ իրականությունը» հաղորդել մարդուն իբրև իրողություն: Եվ քանի որ լեզուն համարվում է մարդկային մտածողության բնատուր և ամենախորը կառույցը, մարդը մտածում և որպես իրողություն է ընդունում այն, ինչ իրեն հաղորդվում և փոխանցվում է լեզվի միջոցով: Նման լեզվական ներազդման արդյունքում էլ ձևավորվում է որոշակիորեն քարտեզագրված աշխարհայացք և մտածելակերպ, որն էլ կանխորոշում է մարդու սոցիալական վարքագիծն ու գործունեությունը (Տե՛ս Sapir and Whorf, Chomsky, Chilton, Foucault և այլք):

Հենց այս հիմնական գործընթացն էլ ընկած է լեզվական մտաշահարկման հիմքում, և Ջ. Օրուելը փորձում է լեզվականորեն արտապատկերել մտքի վրա լեզվի ներազդման հենց այս յուրահատկությունները: Լեզվական ներազդման այս մեխանիզմը բավականին խրթին երևույթ է և անցնում է առկայացման բավականին բարդ ուղի: Լեզուն, լինելով վերացական համակարգ, մարդու մտքի վրա ներազդում է հաղորդակցման մեջ իր կիրառական առկայացման, այսինքն՝ խոսքի միջոցով: Արդյունքում ձևավորվում է այնպիսի մի խոսույթ, որում կարող է առկայանալ և գործարկվել նպատակային մտաշահարկումը: Հետևապես կարելի է ասել, որ մտաշահարկումը (և հատկապես քաղաքական մտաշահարկումը) լեզվագործաբանական երևույթ է, որի իրացման գործում իր լուրջ դերակատարումն ունի ինչպես լեզուն, այնպես էլ վերջինիս կիրառությունը պայմանավորող և կանխորոշող խոսույթային-գործաբանական միջավայրը:

1.1 ԽՈՍՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹ

20-րդ դարի լեզվահասարակագիտական մտածողության սրընթաց զարգացման արդյունքում լայնածավալ միջգիտակարգային ուշադրության է արժանանում «խոսույթ» երևույթը, որը, սակայն, որպես գիտական կարգ, ունի զարգացման բավականին երկարատև պատմություն՝ սկիզբ առնելով դեռևս հին հունական ճարտասանությունից և հասնելով մինչև մեր օրերը: Ժամանակի ընթացքում, հասարակական կյանքի զարգացմանը և միջգիտակարգային շփումների խորացմանը զուգընթաց՝ «խոսույթը» դուրս է գալիս սոսկ լեզվաբանական ուսումնասիրության դաշտից: Տեսաբանները սկսում են մեծ ուշադրություն դարձնել երևույթի գործաբանական առանձնահատկություններին, հասարակական նշանակությանն ու արտահայտմանը, ինչպես նաև դրա արտալեզվական առանձնահատկություններին (Չոմսկի, Ջի, Ֆուկո, Հելիդեյ, Ֆեյրբլաու, Վոդակ, Քրեսս և այլն): Ժամանակի ընթացքում ավելի ակնհայտ են դառնում խոսույթի գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական, ինչպես նաև քաղաքական գործառույթները հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներում և այն, գրավելով հատկապես քաղաքագետների, հասարակագետների, գրականագետների և գրողների ուշադրությունը, սկսում է դիտարկվել և ուսումնասիրվել տարբեր գիտակարգերի կողմից և ստանում բազմաթիվ և տարաբնույթ սահմանումներ: Արդյունքում խոսույթին տրված սահմանումներից մի քանիսը լեզվաբանական են, մի քանիսը՝ առավելապես հասարակագիտական, իսկ մի քանիսն էլ՝ վերացական-փիլիսոփայական:

«Խոսույթը լեզվի կիրառումն է» (Chilton 2004: 16): «Խոսույթը ցանկացած բան է, որը գրված, ասված կամ փոխանցված է նշանների միջոցով» (Fillingham & Süsser 1993: 100): «Խոսույթը գիտելիքի հոսքն է ժամանակի միջով» (Jäger 2004: 129): «Խոսույթը խոսքի և տեքստերի համադրությունն է որպես հասարակական գործունեության մաս» (Potter 1996: 105): «Խոսույթային ակտերը հասարակական ըմբռնումներ են, հասարակական ընթացակարգերը հասկանալու հասարակական հստակ ուղիներ» (van Leeuwen 2008: 6):

Քանի որ «խոսույթ» հասկացությունը ծնունդ առավ և սկսեց ուսումնասիրվել տեքստի տեսության շրջանակներում, այն սկզբնապես նույնացվում էր տեքստի հետ և ուսումնասիրվում տեքստային վերլուծության պայմաններում և՛ գրավոր, և՛ բանավոր կերպերով (Հարիս, Կարասիկ, Նիկոլանա, Արուտյունովա և այլն):

Խոսույթի ուսումնասիրությունների առաջխաղացմանը զուգահեռ զարգացավ խոսույթի ինչպես գրավոր (տեքստային), այնպես և բանավոր (խոսքային) դրսևորումների համադրման միտումը, ինչը ենթադրում էր ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական իրողությունների և գործոնների հաշվառումը: Որոշ տեսաբաններ (Բենվենիստ, Սերիո, Չիլթոն, Բորբոտկո և այլն) խոսույթի իրենց սահմանումներում, տեքստից բացի, տեղ են հատկացնում նաև խոսքին. «Խոսույթը արտալեզվական՝ գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոնների հետ սերտ առնչություն ունեցող կապակցված տեքստն է, իրադրային կապի մեջ վերցրած տեքստը, խոսքը, որը դիտվում է որպես նպատակաուղղված հասարակական գործողություն՝ որպես մարդկանց և նրանց գիտակցության փոխհարաբերությանը մասնակցող բաղադրիչ» (Арутюнова 1990: 136-137): Խոսույթի խոսքային սահմանում է ներկայացնում նաև Է. Աղայանը արդի հայերենի բացատրական բառարանում՝ «Տվյալ հաղորդակցման պահին ասածը, լեզվի իրական դրսևորումը կազմող խոսք» (Աղայան 1976: 597):

Այսպիսով՝ խոսույթի՝ որպես խրթին և բազմաշերտ հաղորդակցական երևույթի արտալեզվական յուրահատկությունների երևան գալուն պես այն սկսեց դիտարկվել այլ գիտակարգերի կողմից ևս՝ ենթարկվելով բոլորովին այլ վերլուծական մեթոդաբանության և, ըստ էության, դուրս եկավ զուտ լեզվաբանական վերլուծության շրջանակներից: Խոսույթի արտալեզվական յուրահատկություններով հետաքրքրված գիտնականները (Ֆուկո, Չիլթոն, Սերիո, վան Լեուվեն, Չոմսկի, Թոմաս, Պիեչի, Շեֆներ, վան Դիյկ և այլն) սկսեցին խոսույթի ուսումնասիրության գործում ցուցաբերել լեզվագործաբանական մոտեցում. խոսույթի վերլուծության գործընթացում մեծ ուշադրություն սկսեց հատկացվել խոսքային ակտի հանգամանքներին, պայմաններին, հստակ խոսքային իրադրությանը, ժամանակային և տարածական առանձնահատկություններին, խոսույթի սուբյեկտների (մասնակից կողմերի) տվյալ

իրադրության վերաբերյալ իրազեկվածությանը, մասնակիցների ունեցած նախագիտելիքի խնդրին, մասնակիցների համոզմունքներին, այսինքն՝ խոսույթային ակտի իրականացման յուրահատկությունների համակազմին:

Այսպես՝ խոսույթի ուսումնասիրության կարևոր հանգամանք է վերջինիս հարաբերությունը հաղորդակցական ակտի մասնակիցների՝ խոսողի և լսողի հետ (Բենվենիստ, վան Լեուվեն և այլն): Է. Բենվենիստը, հետագայում նաև Մ. Ֆուկոն և ոլորտի այլ ուսումնասիրողներ (վան Դիյկ, Քրեսս) ընդգծում են խոսույթային ակտի մասնակիցների ունեցած դիրքի և արտահայտած գաղափարախոսության կարևորությունը՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն խոսքին կամ տեքստին, այլև դրանց իրացման հասարակական հայեցակերպերին:

Նմանապես՝ հոլանդացի գիտնական Թ. վան Դիյկը խոսույթ է համարում այն բարդ հաղորդակցական երևույթը, որն ընդգրկում է նաև հասարակական համատեքստը, ինչը հնարավորություն է տալիս գաղափար կազմել ոչ միայն հաղորդակցության ակտի մասնակիցների առանձնահատկությունների, այլև ընկալման և արտահայտման յուրահատկությունների վերաբերյալ (van Dijk 1989):

Խոսույթի նմանատիպ տարբերակում է առաջադրում նաև Զ. Փ. Ջին, ով տարբերակում է խոսույթը մեծատառով և փոքրատառով, որտեղ «խոսույթը» լեզուն է և դրա կիրառությունը պայմանավորող արտալեզվական երևույթները, իսկ «խոսույթը» լեզուն է իր կիրառության մեջ՝ պատումների կամ երկխոսությունների տեսքով (Gee 1999: 17):

Ջիի՝ «խոսույթ» եզրույթի տառագրային տարբերակմամբ առաջարկված սահմանումներին համահունչ, սակայն լրացուցիչ և միջանկյալ օղակի ներառմամբ, հետաքրքրական դասակարգում է առաջարկում Չիլթոնը, ով առանձնացնում է լեզուն՝ որպես մարդկային կարողություն (*լեզու*)՝ տարբերակելով այն մասնավոր լեզուներից՝ ինչպիսիք են, օրինակ՝ չինարենը կամ ֆրանսերենը (*լեզու*), և լեզվի գործածությունից (*լեզու*), որը նա անվանում է «խոսույթ» (Chilton 2004: 16):

Զուտ լեզվական միջոցներով առկայացող և արտալեզվական գործոնների վրա կենտրոնացման պարագայում խոսույթը մի շարք գիտնականների կողմից ավելի ընդգրկուն գնահատականի է արժանանում: Այս ընդգրկունությունը ենթադրում է, որ

լեզվական/խոսքային միջոցներից բացի, խոսույթի շրջանակներում ակտիվ ուղերձակիր տարրեր են նաև այնպիսի նշանային, խորհրդանշանային և ոչ խոսքային իրողություններ, ինչպիսիք են ծայները, պատկերները, նկարները, ֆիլմերը, խաղերը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, երաժշտությունը, համերն ու հոտերը:

Այսպիսի բազմակերպ խոսույթի (multimodal discourse) (Kress & van Leeuwen 2001, van Leeuwen 2008) դեպքում ուշադրություն է դարձվում այն բովանդակությանը, որը պարունակվում և փոխանցվում է ոչ լեզվական միջոցներով:

Լեզուն, այդուհանդերձ, խոսույթի ուսումնասիրության շրջանակներում իր ուրույն տեղն է ստանում և ուսումնասիրության է արժանանում տարբեր տեսաբանների կողմից (Բենվենիստ, Ֆուկո, Ֆեյրբլաու, Սքոթ, Քրեսս, Չոմսկի, Հելիդեյ, Չիլթոն, վան Դիյկ, Շեֆներ, Սիմփսոն և Մայեր և այլն), որոնց բնորոշմամբ լեզվի և խոսքի միջև կապն առկայանում է լեզվի՝ խոսույթի տիրույթ անցմամբ, որի դեպքում «...լեզուն նախադասության մեջ այլևս չի ծառայում որպես նշանային համակարգ, այլ անցում է կատարում խոսույթի ոլորտ, որտեղ էլ գործածվում է որպես հաղորդակցության միջոց» (Бенвенист 1974: 139):

Լեզու և խոսույթ հասկացությունների բավականին ըմբռնելի և ընդգրկուն սահմանում են ներկայացնում Փ. Սիմփսոնն ու Ա. Մայերը՝ ասելով, որ «խոսույթն այն է, ինչ պատահում է, երբ լեզուն «իրականանում է» (gets done)»: Նրանք լեզուն սահմանում են որպես կանոնների և կաղապարների առավել վերացական ամբողջություն, որոնք միաժամանակ գործում են համակարգի տարբեր մակարդակներում (օրինակ՝ քերականական, իմաստային և հնչյունաբանական մակարդակներում), այնինչ խոսույթը վերաբերում է վերոնշյալ կաղապարների առկայացմանը դրանց կիրառության իրական համատեքստերում: Այլ կերպ ասած՝ խոսույթը գործում է քերականության և իմաստաբանության մակարդակներից վեր՝ ի ցույց դնելով, թե ինչ է տեղի ունենում, երբ այս լեզվական կառույցները խաղարկվում են տարաբնույթ հասարակական, քաղաքական և մշակութային ասպարեզներում: Ըստ նրանց՝ խոսույթ հասկացության շուրջ կա ընդհանուր կարծիք առ այն, որ խոսույթը հաջողությամբ մատնանշում է լեզվի կիրառության և՛ նշանակությունը, և՛ ազդեցությունը, ինչպես նաև տարբեր անհատների և խմբերի կողմից իրական տեքստերի ստեղծման և

մեկնաբանության ժամանակ գործածվող երկխոսական ռազմավարությունները (Simpson and Mayr 2010: 5):

Խոսույթի վերաբերյալ բոլոր սահմանումներն անդրադառնում են խոսույթի ինչպես բուն լեզվական (որպես համակարգ) և խոսքային (որպես առկայացում), այնպես էլ հասարակական՝ արտալեզվական չափումներին: Մեր ուսումնասիրության առանցքային խնդրով պայմանավորված՝ ուշադրության բևեռն այստեղ խոսույթի մեծ տարածում և հասարակական նշանակություն ունեցող տեսակներից մեկն է միայն՝ քաղաքական խոսույթը, որն էլ մտաշահարկային գործողությունների իրականացման հիմնական տիրույթն է:

Խոսույթի ընդհանուր նկարագրի անքակտելի առանձնահատկությունները՝ *լեզվի առկայացման հաղորդակցային կոնկրետ իրադրությունը, դրա կիրառության հասարակական համատեքստը, խոսքային ակտի մասնակիցների անհատական և հասարակական դերակատարության առանձնահատկությունները, մասնավորապես՝ նրանց գաղափարախոսությունը, հասարակական ներգրավվածության նպատակը, հեղափոխությունները, շահերը և այլն* նաև քաղաքական խոսույթի հիմնական գործաբանական բաղադրիչներն են:

1.2 ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Քաղաքականությունը հասարակական կյանքի այն տիրույթն է, որտեղ առկայանում է քաղաքական խոսույթը: Նմանապես՝ գիտական խոսույթը, կրթական խոսույթը և իրավական խոսույթը համապատասխանաբար նկարագրում են գիտության, կրթության և իրավական տիրույթները: Վան Դիյկը քաղաքական խոսույթը սահմանում է որպես քաղաքական գործիչների խոսույթ՝ համարելով, որ «քաղաքականություն» եզրույթին ամեն քաղաքագետ կարող է տալ իր սեփական սահմանումը՝ այս կերպ հանգեցնելով եզրույթի բազմաքանակ մեկնությունների (van Dijk 2002: 19-20):

Նա նշում է, որ քաղաքական խոսույթը նախևառաջ բացատրվում է իր դերակատարներով կամ հեղինակներով, այսինքն՝ քաղաքական գործիչներով՝ շեշտելով, որ քաղաքական խոսույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում է քաղաքական գործիչների կամ քաղաքական հաստատությունների փոխշփումներին, օրինակ՝ նախագահների, վարչապետների, կամ կառավարության այլ անդամների, խորհրդարանների և կուսակցությունների միջև հաղորդակցությանը (van Dijk 1997: 12):

Հիմնվելով Ա. Բառանովի և Ե. Շեյգալի քաղաքական հաղորդակցության սահմանումների վրա (Баранов 2001, Шейгал 2004)՝ Ա. Չուդինովը նկարագրում է այն որպես հաղորդակցություն, որը վերաբերում է քաղաքական խնդիրներին, ինչպես նաև հաղորդակցություն, որի սուբյեկտները քաղաքական գործիչները կամ քաղաքականության մասին գրող լրագրողներն են: Առավել լայն մոտեցմամբ՝ քաղաքական հաղորդակցությունն այն հաղորդակցությունն է, որը նվիրված է քաղաքական խնդիրներին կամ որում քաղաքական սուբյեկտները քաղաքական տեքստի հեղինակը կամ հասցեատերն են զուտ կառավարական, ոչ հանրային շրջանակներում (Чудинов 2012 և 2006):

Վան Դիյկը, սակայն, նշում է, որ չնայած քաղաքական գործընթացներում իրենց խաղացած առանցքային դերին, քաղաքական գործիչները քաղաքականության ոլորտի

միակ դերակատարները չեն: Նա կարևոր տեղ է հատկացնում նաև քաղաքական հաղորդակցության վերջնական հասցեատերերին՝ հանրությանը, ժողովրդին, քաղաքացիներին, լայն զանգվածներին և այլն (van Dijk 1997: 13):

Ուստի քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ, ըստ Չուդինովի, յուրաքանչյուր առանձին քաղաքական տեքստ հարկ է գնահատել խոսույթի շրջանակներում, այսինքն՝ հաշվի առնել դրա ստեղծման և գործադրման հստակ հանգամանքները: Ըստ նրա՝ առանձնապես կարևոր են տեքստի հեղինակը և հասցեականությունը, դրա ստեղծման ժամանակը, վայրը և նպատակները, ինչպես նաև հեղինակի հաղորդակցական ռազմավարությունն ու մարտավարությունը: Այս մոտեցմամբ քաղաքական հաղորդակցության խոսույթային յուրահատկություններին անդրադառնալիս նա նկատում է, որ քաղաքական հաղորդագրությունը միշտ իր մեջ կրում է ոչ միայն տեղեկատվություն, այլև իրականությանը տրվող գնահատական: Եվ սա բացատրվում է նրանով, որ քաղաքական հաղորդակցության իրական նպատակը ոչ թե իրադրության օբյեկտիվ նկարագրությունն է, այլ հասցեատիրոջը համոզելը և նրան քաղաքական գործողությունների դրդելը (Чудинов 2012): Այս հանգամանքի դիպուկ դրսևորումն ենք տեսնում նաև Սիմփսոնի և Մայերի կողմից դեռևս անտիկ դարաշրջանի հռետորների (Պլատոն, Տիցերոն, Արիստոտել) այն կարծիքի մեջբերման մեջ, թե քաղաքական գործիչները մշտապես գործածել են համոզիչ և մտաշահարկային ճարտասանությունը հանրությանը խաբելու և մոլորեցնելու համար՝ քաղաքական գործիչների և հաստատությունների նկատմամբ ավանդաբար և անգամ մինչ օրս տիրող հանրային անվստահության պայմաններում (Simpson and Mayr 2010: 43):

Քաղաքական հարաբերություններում, գործընթացներում, ինչպես նաև քաղաքական խոսույթում առկա հաղորդակցության մտաշահարկային առանձնահատկություններն էին, որ գրավեցին քաղաքական խոսույթի վերլուծության տեսաբանների ուշադրությունը (վան Դիյկ, Մունի և Էվանս, Շեֆներ, Մեյլաթ և Օսվալդ, Ռիգոտտի, Թոմաս, Փոլ և Էլդեր, Լիսկովսկի, Օրուել և այլն):

Է. Ռիգոտտին, օրինակ, հաղորդագրությունը համարում է մտաշահարկային, եթե «այն հասցեատիրոջ մտքում աղավաղում է աշխարհի մասին պատկերացումը՝ խաթարելու որոշում կայացնելու համար նրա ողջամիտ դատողությունը և ստիպելու

ծառայել մտաշահարկողի շահին՝ սեփական շահին հետամուտ լինելու թվացյալության ներքո» (Rigotti 2005: 68):

Վան Դիյկը, շեշտելով գաղափարախոսության դերը քաղաքական խոսույթում, ասում է, որ «եթե կա հասարակական գործունեության մի տիրույթ, որը լի է գաղափարախոսությամբ, դա, իհարկե, քաղաքականությունն է»: «Եվ քանզի գաղափարախոսությունը սահմանվում է որպես կոնկրետ խմբի անդամներին հատուկ հիմնական համոզմունք, սա նաև նշանակում է, որ քաղաքական խոսույթն այն միջավայրն է, որտեղ վավերացվում է քաղաքական գործիչների գաղափարախոսական ինքնությունը (van Dijk 2002: 22):

Խոսելով մտաշահարկման մասին՝ վան Դիյկը սահմանում է այն որպես հաղորդակցական գործելակերպ, որում մտաշահարկողը փորձում է կառավարել այլ մարդկանց, սովորաբար իրենց կամքին և ցանկությանը հակառակ: Ըստ նրա՝ «մտաշահարկումը պայմանավորված է ոչ միայն իշխանական դիրքի առկայությամբ, այլ ենթադրում է նաև վերջինիս չարաշահում»: Նրա կարծիքով, մտաշահարկումը ենթադրում է խոսույթի միջոցով իրականացվող ոչ իրավաչափ ներազդում: Այս դեպքում մտաշահարկողները ներազդում են մարդկանց վրա՝ ստիպելով նրանց հավատալ ինչ-որ բանի կամ ձեռնարկել քայլեր, որոնք շահեկան են մտաշահարկողի համար և չեն բխում մտաշահարկվողի շահերից: Նա, հիմնվելով այլ տեսաբանների դիտարկումների վրա (Dillard and Pfau 2002, O’Keefe 2002), նաև շեշտում է, որ մտաշահարկումը կարող էր նաև լինել իրավաչափ համոզչական գործողություն, սակայն ընդգծում է, որ մտաշահարկման և համոզման գործելակերպերի միջև գոյություն ունեցող նկատելի տարբերությունն այն է, որ համոզման դեպքում խոսակիցները ազատ են հավատալու կամ գործելու ըստ իրենց ցանկության, անկախ նրանից՝ ընդունում են համոզող կողմի փաստարկները, թե՛ ոչ: Այնինչ մտաշահարկման դեպքում, ըստ վան Դիյկի, հասցեատերերն ավելի պասիվ դեր են խաղում. նրանք դառնում են մտաշահարկման զոհեր (van Dijk 2006: 360):

Մտաշահարկման իր ուսումնասիրության մեջ նա որդեգրում է եռաստիճան մոտեցում՝ դիտարկելով այն 1. հասարակական (քանի որ այն կապ ունի հասարակական խմբերի և դերակատարների միջև տեղի ունեցող շփման և

իշխանության չարաշահման հետ), 2. իմացական/ճանաչողական (քանի որ մտաշահարկումը ենթադրում է ազդեցություն հաղորդակցման մասնակիցների մտքի վրա), և 3. խոսույթային (քանի որ մտաշահարկումը գործադրվում է գրավոր և բանավոր խոսքի և տեսողական հաղորդագրությունների միջոցով (van Dijk 1998, 2001, 2006):

Առավել հետաքրքրական է վան Դիյկի կողմից մտաշահարկման ուսումնասիրության իմացական-ճանաչողական հայեցակերպը: Խոսելով մտաշահարկման՝ մարդու մտքի վրա ունեցած ազդեցության մասին, նա գտնում է, որ թե՛ խոսույթն առհասարակ, և թե՛ մտաշահարկային խոսույթը մասնավորապես, առաջնայնորեն ազդում են մարդու կարճաժամկետ հիշողության վրա, ինչի արդյունքում բառերը, նախադասությունները, արտահայտությունները, ինչպես նաև արտալեզվական ազդանշանները ընկալվում են որպես պատրաստի տրվող «իմաստներ» կամ «գործողություններ»: Նա շեշտում է, որ իմացական տեսանկյունից մտաշահարկումը որևէ արտառոց և գերբնական գործողություն չի պահանջում, այլ պարզապես կիրառում է խոսույթին բնորոշ ամենահիմնական բաղադրիչները: Եվ քանի որ կարճաժամկետ հիշողության մեջ խոսույթի ըմբռնումը ենթադրում է հնչյունային, ձևաբանական, շարահյուսական և բառիմաստային վերլուծության գործընթացներ, տարբեր լեզվական կառույցների միջոցով կարելի է այս կամ այն կերպ ազդել այդ շերտերից յուրաքանչյուրի վրա. օրինակ՝ ավելի հստակ, դանդաղ արտասանությունը, ավելի պարզ շարահյուսությունը և ավելի պարզ բառային միավորների կիրառումը օժանդակում են ըմբռնմանն ու հասկացմանը: Եվ ընդհակառակը. արագ, ոչ հստակ խոսքը, խրթին բառերով կազմված բարդ նախադասությունները, օրինակ՝ բժշկական խոսույթում, նպատակ ունեն անհասկանալի մնալու հիվանդների համար: Հետևաբար, այս դեպքերում հասկացմանն ու ըմբռնմանը խոչընդոտելը կրում է հստակ դիտավորություն:

Վան Դիյկը նաև նշում է, որ մտաշահարկումն առավելապես ուղղված է մարդկանց կողմից մտաշահարկողին ձեռնտու արձագանքի շարունակականության և տևականության ապահովմանը, և այդ պատճառով էլ մտաշահարկման վերջնական թիրախը, այնուամենայնիվ, երկարաժամկետ հիշողությունն է: Մտաշահարկման

իմացաճանաչողական գործընթացները ենթադրում են, որ երկարաժամկետ հիշողությունը ոչ միայն պահպանում է սուբյեկտիվորեն մեկնաբանված անձնական փորձառությունը՝ որպես մտային կաղապարներ, այլև այնտեղ պահպանվող առավել կայուն, տևական, ընդհանրական և հասարակայնորեն ընդունված համոզմունքները և գաղափարախոսությունները: Ըստ նրա՝ մտաշահարկային խոսույթի գլխավոր նպատակն է կառավարել մարդկանց հավաքական հասարակական պատկերացումներն ու համոզմունքները, քանի որ հենց դրանք են կառավարում մարդկանց վարքն ու խոսքը տևականորեն և բազմապիսի իրավիճակներում (van Dijk 2006):

Դ. Մեյլաթն ու Ս. Օսվալդը, տալով նմանատիպ սահմանում, նշում են, որ թեև մտաշահարկման ուսումնասիրության ժամանակակից մոտեցումներն առաջ են քաշել խոսույթը մտաշահարկային որակելու մի շարք չափանիշներ, խնդիրը դեռևս շատ հեռու է լուծված համարվելուց: Ահա այդ չափանիշներից մի քանիսը՝

1. *Ճշմարտության խաթարում/պայմանականությունների խախտում,*
2. *Խոսողի շահի առկայություն,*
3. *Հաղորդակցական նպատակի ոչ բացահայտ, այլ ծածուկ լինելը,*
4. *Սոցիալական անհավասարության նախապայմանը և*
5. *Մտաշահարկման դիտավորությունը (Maillat և Oswald 2009: 349):*

Ինչպես արդեն նշել ենք, լեզուն այն հզոր գործիքն է, որը, շահադիտական նկատառումների համաձայն, նպատակային գործածությամբ շրջանառվելով խոսույթում, իրականացնում է մտաշահարկային գործառույթ: Փ. Չիլթոնն ու Բ. Շեֆները գտնում են, որ քաղաքական գործունեության մեջ լեզուն մասնակցություն ունի իր բոլոր մակարդակներով և կողմերով՝ գործաբանական մակարդակ (շփումը խոսողի և լսողի միջև), իմաստաբանական մակարդակ (իմաստը, բառապաշարի կառուցվածքը), շարահյուսություն (նախադասությունների ներքին դասավորվածությունը), ինչպես նաև հնչյունական կողմ, որոնց համալիր դիտարկումն էլ կարևորվում է քաղաքական տեքստերի լեզվաբանական քննության գործում (Chilton and Schäffner 2011): Քաղաքական գործունեությունը չի կարող գոյություն ունենալ առանց լեզվի կիրառության, իսկ լեզվի դերը, մասնավորապես՝ դրա գործածությունը

բառերի ընտրության ու ձևակերպումների իմաստով, քաղաքական գործիչների համար ունի ռազմավարական նշանակություն, որքան էլ որ վերջիններս ժխտեն այդ փաստը (Chilton 2004, Chilton and Schäffner 2011): Նույն կարծիքին է նաև Օրուելը: Նա գտնում է, որ սխալ է կարծել, որ «լեզուն պարզապես բնական աճ է, այլ ոչ գործիք, որը մենք ձևափոխում ենք՝ ըստ մեր սեփական նպատակների» (Orwell 1946):

Քաղաքական նպատակներով իրականացվող լեզվական մտաշահարկման մեջ տեսաբանները առանձնացնում են մի շարք ռազմավարական քայլեր, որոնք իրականանում են ամենատարբեր լեզվաբանական կառույցների միջոցով: Վան Դիյկն, օրինակ, առանձնացնում է դրական ինքնաներկայացումը (positive self-presentation) և այլոց բացասական ներկայացումը (negative other-presentation)՝ որպես հասցեագրողի օգտին փաստերի վերապահորեն և կողմնակալ կերպով ներկայացման և բացասական իրադարձությունների և երևույթների մեղքը հակառակորդի վրա բարդելու տիպիկ միջոցներ: Այս երևույթը «քաղաքական բևեռացում» անվանելով՝ վան Դիյկն այն համարում է մտաշահարկային խոսույթի հիմնական ռազմավարություն (տե՛ս նաև Paul & Elder 2006: 4), որի շրջանակներում առանձնացնում է այնպիսի լեզվական միջոցներ, ինչպիսիք են.

- խոսքային մակրո ակտերը, որոնք շեշտում են «մեր՝ լավ» և «նրանց՝ վատ» կողմերը, օրինակ՝ մեղադրանք նրանց դեպքում, պաշտպանություն մեր դեպքում,
- բառապաշարի ընտրությունը (*դրական* բառեր ինքնաներկայացման և *բացասական* բառեր մյուս կողմին ներկայացնելու համար),
- շարահյուսական կառույցները՝ *ներգործական* և *կրավորական* կառույցների կիրառությունը որպես լեզվական միջոցներ, որոնք կիրառվում են համապատասխանաբար մտաշահարկող կողմի դրական գործունեությունը և հակառակ կողմի բացասական գործողությունը մատնանշելու և պատասխանատվությունը քողարկելու համար,
- ոճական միջոցները և հնարները (չափազանցությունների (hyperbole) և մեղմասությունների (euphemism) գործածությունը դրական և բացասական իմաստներ արտահայտելու համար, ինչպես նաև փոխանունության և փոխաբերության կիրառությունը մտաշահարկող

կողմի դրական և հակառակ կողմի բացասական հատկությունները շեշտելու համար),

- ձայնային և տեսողական արտահայտչամիջոցները (բարձր ձայնը կամ խոշոր և թավ գրվածքը դրական կամ բացասական իմաստների շեշտադրման համար) (van Dijk 2006: 373, 2003):

Նա առանձնացնում է մտաշահարկային ռազմավարության ևս մի միջոց՝ «մտաշահարկային նախատիպերը»՝ որպես հատուկ տիպի կեղծիքներ (fallacy), (օրինակ՝ հեղինակության կեղծիքը), որոնք դրդում են մարդուն հավատալ կամ կատարել որոշակի քայլեր. օրինակ՝ կաթոլիկներին դիմել, ասելով, որ Հռոմի Պապը հավատում է կամ խորհուրդ է տալիս որևէ գործողություն, կամ մուսուլմաններին դիմելիս շեշտել, որ Ղուրանը խորհուրդ է տալիս կոնկրետ գործողություն (van Dijk 2006):

Զիլթոնը, դիտարկելով մտաշահարկումը հաղորդակցական ակտերի հիմնական տեսությունների շրջանակներում, առանձնացնում է քաղաքական ռազմավարության մի քանի օրինակ՝ հարկադրումը/պարտադրումը (coercion), օրինականացումն ու ապօրինականացումը (legitimization and deligitimization), ներկայացումն ու խեղաթյուրումը (representation and misrepresentation) (Chilton 2004, Chilton and Schäffner 2011, տե՛ս նաև Simpson and Mayr 2010): Նա, ուշադրություն դարձնելով Գրայսի՝ քանակի, որակի, համապատասխանության և ձևի չորս հաղորդակցական սկզբունքներին, ինչպես նաև Հաբերմասի իմացաբանական շրջանակին ու վավերականության չորս պնդումներին, նշում է, որ վերոնշյալ քաղաքական մտաշահարկային ռազմավարությունները գործնականում փոխկապակցված են և որ ուղղակիորեն ոտնահարում են խոսքային ակտի վերոնշյալ սկզբունքները: Որպես այդ ռազմավարությունների ազդեցության հիմնական ոլորտ՝ նա առանձնացնում է նախ երկարաժամկետ գիտելիքը՝ անվանելով այն «շրջանակ» (frame) և սահմանելով որպես մի կառույց, որը «կապ ունի իրադրությունների ըմբռնման (conceptualization) և լեզվում դրանց արտահայտման հետ (Chilton 2004):

Մտաշահարկային քաղաքական խոսույթի իր վերլուծության մեջ նա նաև ուշադրություն է դարձնում այնպիսի առանցքային գործոնների, ինչպիսիք են խոսույթի

դերակատարները, իրադարձությունները, ժամանակը, տարածությունը և հասարակությունը, իրականությունն ու բարոյականությունը և այլն, որոնք դրսևորվում են լեզվական արտահայտման միջոցով և որոնք առանցքային դեր ունեն իր նշած քաղաքական ռազմավարությունների լեզվական առկայացման գործում (Chilton 2004):

Ա. Մունին և Բ. Էվանսը, մեջբերելով Արիստոտելի՝ լսարանին համոզելու երեք հայտնի գործոնները՝ լոգոսը, պաթոսը և էթոսը, որտեղ լոգոսը բառերն են և հենց ինքը՝ փաստարկը, պաթոսը՝ էմոցիաները կամ էմոցիոնալ կապը կոնկրետ գաղափարի կամ խնդրի հետ, իսկ էթոսը՝ հասցեագրող անձնավորության անձի դերի ազդեցությունը, գտնում են, որ քաղաքական համոզումը, ինչպես համոզման մնացած բոլոր կերպերը, հենվում են վերոնշյալ երեք գործոնների վրա: Քաղաքական մտաշահարկման լեզվական միջոցների՝ նրանց կողմից առաջարկվող ցանկը քիչ է տարբերվում վերոնշյալ տեսաբանների ներկայացրած միջոցներից: Նրանք, ինչպես վան Դիյկը, քաղաքական համոզման ամենակիրառելի գործիքներից են համարում քաղաքական հակադրությունը՝ մեր և նրանց գործելակերպերի, քայլերի, ունեցած դերակատարության և նպատակների դրական և բացասական բևեռացումը: Առանձնացված այլ միջոցներից են եռամաս թվարկումը՝ նույն շարահյուսական կառույցի եռակի կիրառումը նույն նախադասության մեջ, որն, ըստ նրանց, բավականին հաճախ է հանդիպում մտաշահարկային տեքստերում, զուգահեռ կառույցները (parallelism), կրկնությունը, կրավորական կառույցները՝ որպես քերականության մակարդակի մտաշահարկային միջոց, դերանունների՝ հատկապես առաջին և երկրորդ դեմքերի դերանունների կիրառությունը, ինչպես նաև փոխաբերությունը, միջտեքստայնությունը և այլն (Mooney and Evans 2015):

Զ. Ջոնսն ու Զ. Պիեչին էլ մտաշահարկային խոսույթին իրենց անդրադարձում երևան են հանում մտաշահարկային լեզվի կիրառության գործաբանական առանձնահատկությունները, ընդգծելով կանխենթադրույթն (presupposition) ու ներիմաստը (implicature) որպես լսարանին համոզելու և վերջինիս վրա ներազդելու միջոց, և վերոնշյալ միջոցներին ավելացնում նաև ածականների՝ հատկապես համեմատական աստիճանի ածականների կիրառությունը, սեռական հոլովի

կիրառությունը, ստորադասական կառույցները և հարցերը՝ տրված հաստատական կառույցների փոխարեն (Thomas et al 2005):

Խոսելով քաղաքական խոսույթում անգլերենի աղավաղված կիրառության մասին՝ Ջ. Օրուելն առանձնացնում է այնպիսի լեզվական կառույցներ, ինչպիսիք են «մեռնող» (գործածությունից դուրս եկող) փոխաբերությունները (*Dying Metaphors*), գործարկիչները կամ բայական «կեղծ վերջույթները (*operators or verbal false limbs*)», ցուցադրական առոգանությունն ու անիմաստ բառերը: «Մեռնող» փոխաբերությունների շարքում նա առանձնացնում է այնպիսի բառեր և արտահայտություններ, ինչպիսիք են, օրինակ՝ hotbed, Achilles' heel, on the order of the day, stand shoulder to shoulder, ring the changes on արտահայտությունները, որոնք, ըստ հեղինակի, «մաշված փոխաբերությունների մի հսկայական կույտ են, որ կորցրել է ողջ զուգորդային ներուժը», և «պարզապես գործածվում է այն պարզ պատճառով, որ հնարավորություն է տալիս խոսողին խուսափել սեփական խոսքը ձևակերպելու համար արտահայտություններ հորինելու անհրաժեշտությունից» (Orwell 1946: 255): Նա նաև շեշտում է, որ այս արտահայտությունները հաճախ կիրառվում են առանց խոսողի կողմից դրանց բուն իմաստի գիտակցման: Գործարկիչները կամ «բայական կեղծ վերջույթները» կառույցներ են, որոնք խոսքը լցնում են հավելյալ վանկերով՝ վերջինիս հաղորդելով համաչափ արտահայտություն: Այս դեպքում հստակ իմաստ արտահայտող պարզ բայերը (օրինակ՝ kill, mend, spoil, break, stop) փոխարինվում են գործողության կամ երևույթի բուն իմաստը մեղմացնող արտահայտություններով, ինչպիսիք են, օրինակ, make contact with, be subjected to, give rise to, give grounds for, have the effect of, play a leading part (role) in, make itself felt, take effect արտահայտությունները: Նմանատիպ լեզվական կառույցները, որպես կանոն, ասվածին լրացուցիչ կարևորություն են հաղորդում: Մտաշահարկային լեզվական կառույցների այս կարգում Օրուելն անդրադառնում է նաև բայի ներգործական սեռի փոխարեն կրավորական սեռի կառույցների կիրառությանը:

Ցուցադրական առոգանությունը ենթադրում է այնպիսի բառերի կիրառություն, որոնք կանխակալ դատողությանը հաղորդում են գիտական անկողմնակալություն և արդարացնում այն: Հեղինակն անիմաստ բառեր է համարում այն բառերը

(հիմնականում որակական ածականները), որոնք ցույց չեն տալիս որևէ հստակ որակական հատկանիշ, այլ երևույթին տալիս են չեզոք և վերացական որակում: Այս տիպին են պատկանում հատկապես արվեստի քննադատության մեջ կիրառվող խիստ վերացական բառերը, որոնց շարքում առանձնացնում է, օրինակ՝ sentimental, plastic, dead, natural միավորները (Orwell 1946):

Քաղաքական ճշգրտության (political correctness) ապահովման և քաղաքական մտաշահարկման նպատակով կիրառվող լեզվական հնարների ցանկը չի սահմանափակվում վերոբերյալով: Այստեղ կարելի է ավելացնել այնպիսի ոճական հնարներ, ինչպիսիք են, օրինակ՝ կրկնությունը, բառախաղը, նույնաբանությունները, բաղաձայնայթը, ժարգոնային բառերի գործածումը, ընդհանրացումը, համեմատությունը (Paul & Elder 2006: 16) և այլն:

Սահմանափակվելով մտաշահարկման խոսույթային-գործաբանական առանձնահատկությունների և դրանք իրականացնող մտաշահարկային լեզվական հնարների վերոնշյալ ուսումնասիրությամբ՝ կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես իրավացիորեն փաստում է վան Դիյկը, նմանատիպ լեզվական կառույցները ինքնին մտաշահարկային չեն, այլ մտաշահարկային գործառույթ են իրականացնում որոշակի հասարակական/քաղաքական համատեքստում և հստակ գործաբանական հարաչափերի առկայության դեպքում միայն (van Dijk 2006): Իսկ տեքստը մտաշահարկային գործառույթ է իրականացնում իր լեզվական և գործաբանական առանձնահատկությունների փոխգործակցության շնորհիվ: Լեզվական ներազդման գործում կարևոր է ոչ միայն այն, թե ի՞նչ է ասվում, այլև այն, թե ո՞վ է ասողը և ովքե՞ր են լսողները, ի՞նչ հասարակական դիրք ունեն նրանք, հաղորդակցական ինչպիսի՞ պայմաններում և արտալեզվական ի՞նչ համատեքստում է ասվում խոսքը և այլն:

1.3 «ԵՐԿՄԻՏՔԸ» ԵՎ «ՆՈՐԻՆՈՍՔԸ» ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ Զ. ՕՐՈՒԵԼԻ «1984» ՎԵՊՈՒՄ

Զ. Օրուելի «1984» վեպում քաղաքական մտաշահարկման նկարագրման հիմքում ընկած է ճշգրիտ և հիմնավորված լեզվական կառույցը: Այս յուրահատկության շնորհիվ էլ վեպը խոսույթի քննադատական վերլուծության տեսանկյունից մշտապես ունեցել է խոշոր գիտական և տեսական արժեք: Վեպում իրականության խիստ հոռետեսական արտապատկերումը (նախարարությունների մեծությունը, ավերված շենքերը, կեղտոտ փողոցները), մշտական պատերազմական վիճակը, հասարակության նկատելի շերտավորումը՝ արտահայտված վեպի կերպարների վարքագծային և խոսքային վարվեցողությամբ (ներքին կուսակցության, արտաքին կուսակցություն, պրոլետեր (աշխատավոր դասակարգ)), առօրյա կյանքի վերահսկողությունն ու բռնի ուժի կիրառումը մտքի ոստիկանության կողմից, ինչպես նաև կուսակցության տարածած գաղափարախոսությունը հենց այն համատեքստն է, որում առկայանում և իրենց մտային ներազդման գործառույթն են իրականացնում մտաշահարկային լեզվական կառույցները: Լեզվական արտահայտման յուրահատկությունների հետ միասին մտաշահարկումը վեպում ներկայացվում է փոխներազդող և փոխպայմանավորող երկու երևույթների՝ երկմտքի¹ (Doublethink) և նորխոսքի² (Newspeak) միջոցով:

Երկմիտքը, ըստ էության, մտաշահարկային խոսույթի արդյունքում ձևավորված մտավոր կարողություն կամ վիճակ է՝ միաժամանակ հավատալու երկու հակադիր գաղափարների: Ահա թե ինչպես է հեղինակը սահմանում երկմիտքը վեպում. *«Երկմիտքը մտքում միաժամանակ երկու հակադիր համոզմունք ունենալու և դրանց միաժամանակ հավատալու կարողությունն է...: Դիտավորյալ սպեր ասել՝ դրանց անկեղծորեն հավատալով, մոռանալ ցանկացած փաստ, որն այլևս ձեռնտու չէ, և հետո, երբ դրա կարիքը նորից զգացվի, մոռացության գրկից ետ քաշել այն՝ որքան ժամանակով որ անհրաժեշտ է, ժխտել օբյեկտիվ իրականության գոյությունը՝ շարունակաբար հաշվի նստելով դրա հետ: Այս բոլորը անժխտելիորեն պարտադիր են:*

^{1,2} Վեպի հայերեն թարգմանվածքում Doublethink և Newspeak բառերը համապատասխանաբար թարգմանվել են «կրկնամիտք» և «նորալեզու»: «Երկմիտք» և «նորխոսք» բառերը բնագրային բառերի թարգմանության մեր առաջարկած տարբերակներն են, որոնց ընտրության հիմնավորումը կքննարկվի ստորև (տե՛ս էջ 84-89)

Անգամ երկմիտք բառը գործածելու համար անհրաժեշտ էր երկմտքի կիրառություն, քանի որ այս բառը գործածելով՝ մարդն ընդունում է, որ խաղ է անում իրականության հետ. երկմտքի մի նոր ակտով մարդը ջնջում է այս գիտելիքը, և այսպես շարունակ՝ սույր ճշմարտությունից միշտ մեկ քայլ առաջ գցելով»³ (Orwell 2012: 244):

«Իմանալ և չիմանալ, գիտակցել ողջ ճշմարտացիությունը, բայց և ասել զգուշորեն մտածված ստեր, միաժամանակ ունենալ երկու իրարամերժ կարծիք՝ գիտակցելով, որ դրանք բացառում են միմյանց, բայց հավատալ երկուսին էլ, կիրառել տրամաբանությունն ընդդեմ տրամաբանության, ժխտել բարոյականությունը՝ միաժամանակ ընդունելով այն, հավատալ, որ ժողովրդավարություն չի կարող լինել և որ հենց Կուսակցությունը ժողովրդավարության հովանավորն է, մոռանալ՝ ինչ պարտավոր ես մոռանալ, հետո, անհրաժեշտ պահին վերականգնել այն հիշողությանդ մեջ, և հետո նորից արագ մոռանալ, և որ ամենակարևորն է՝ նույն գործընթացը կիրառել հենց բուն գործընթացում. սա էր ամենակարևոր նրբությունը՝ գիտակցաբար անգիտակցություն առաջացնել, և հետո, կրկին, չճանաչել հիպնոսի այն քայլը, որ հենց նոր կատարեցիր: Անգամ «երկմիտք» բառը հասկանալը պահանջում էր երկմտքի կիրառում»⁴ (Orwell 2012: 40-41):

Երկմտքի մտային ներազդման մեխանիզմը բավականին բարդ և բազմաչափումային երևույթ է. կեղծված, մտացածին, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունը, խոսույթային հստակ պայմաններում լեզվական տարբեր կառույցների միջոցով փոխանցվելով մարդուն, վերջինիս գիտակցության մեջ առաջացնում է հակադրություն հիշողության մեջ արդեն իսկ ամրագրված տեղեկույթի հետ: Այնուհետև, իշխանական ուժի ազդեցության տակ, շարունակական քարոզչության միջոցով վավերացվելով՝ երկմիտքն աստիճանազրկում է արդեն իսկ գոյություն ունեցող տեղեկույթը և սկսում է վերջինիս հետ զբաղեցնել հավասար դիրք՝ աստիճանաբար ներազդելով այնպիսի խորքային մակարդակների վրա, ինչպիսիք են մարդու համոզմունքներն ու արժեհամակարգը: Արդյունքում մարդու մոտ տեղի է ունենում արժեքների փոխզիջում (compromization of values), նոր ստացված արժեքը

^{3,4} Պարբերությունների թարգմանությունը մերն է:

հիմք է դառնում նոր համոզմունքի համար, որի հիման վրա էլ ձևավորվում է հասարակական վարքը և քայլերը կանխորոշող այլափոխված մտածելակերպը:

Երկմիտքը՝ որպես մտածական և ճանաչողական վիճակ, համեմատվել է ճանաչողական աններդաշնակության (cognitive dissonance) հետ, քանի որ վերջինս նույնպես կապված է երկու հակադիր գաղափարների փոխգործակցության հետ: Ճանաչողական աններդաշնակությունը երկու հակադիր գաղափարների ազդեցությամբ ձևավորված ճանաչողական անհամապատասխանությունն է, որի արդյունքում մարդն ունենում է մտավոր լարվածություն և անհարմարության զգացողություն: Երաժշտության համանմանությամբ, միաժամանակ հնչող երկու հնչյունները (ինտերվալ կամ միջակայք), լսողի կողմից կարող են ընկալվել որպես *համահունչ* և *տարահունչ*: Համահնչության (consonance) դեպքում այս միաժամանակյա հնչողությունը դուրեկան է և ընդունելի: Տարահնչության (dissonance) դեպքում միջակայքը լսողի մոտ առաջացնում է լարվածություն և սպասում՝ լսելու տարահունչ հնչյունների լուծումը համահունչ ինտերվալի մեջ: Երկմտքի դեպքում, ի հակադրումն ճանաչողական աններդաշնակության, գաղափարների հակադրության արդյունքում առաջացող լարվածություն կամ որևէ այլ ֆիզիկական-հոգեբանական հակազդեցություն չի ենթադրվում. գաղափարները համահունչ են, համագոյակցում են և հավասարապես ընդունվում և ըմբռնվում են մարդու կողմից:

Վեպում երկմիտքը ներկայացվում է նաև որպես անցյալի ու պատմության կեղծման և մարդկային հիշողության այլափոխման հիմնական միջոց: «Եվ ինչպե՞ս կարող ես հաստատել ամենաակներև փաստը, եթե սեփական հիշողությունիցդ դուրս դրա մասին որևէ հիշատակում գոյություն չունի:»⁵ (Orwell 2012: 41): Օվկիանիայում քաղաքական ռեժիմը վերացրել էր տեքստի՝ որպես տեղեկույթի և հատկապես՝ անցյալի, ժամանակագրության, փաստերի արձանագրման, պահպանման և փոխանցման գործառույթը: Ավելին, լեզուն նույնպես ամլացված էր այդ նույն գործառույթից: Հետևաբար, այլևս անհնար էր վավերացնել անցյալը և դրա հետ կապված մարդկային հիշողությունը: Անցյալի հիշողության և ներկայացվող այլափոխված իրականության հակադրության արդյունքում նկատվող ճանաչողական

⁵ Պարբերության թարգմանությունը մերն է:

աններդաշնակությունը բավականին լավ է պատկերված հենց գլխավոր հերոսի մտավոր-հոգեբանական ապրումների միջոցով. «Կուսակցությունն ասում էր, որ Օվկիանիան երբեք էլ Եվրասիայի հետ դաշինքի մեջ չի եղել: Բայց ինքը՝ Ուինսթոն Սմիթը, գիտեր, որ Օվկիանիան ընդամենը չորս փարի առաջ Եվրասիայի դաշնակիցն էր: Բայց որտե՞ղ էր այդ գիտելիքը: Միայն իր սեփական գիտակցության մեջ, որն ամեն դեպքում վաղ թե ուշ պետք է ոչնչացվեր»⁶ (Orwell 2012: 40): «Ուինսթոնը չէր կարողանում հստակ մտաբերել մի ժամանակահատված, երբ երկիրը պատերազմի մեջ չէր եղել: Բայց ակնհայտ էր, որ իր մանկության փարիներին խաղաղության մի բավականին փրկական ընթացք է եղել, քանի որ մտաբերում էր բոլորին ապշահար արած օդային հարձակման դեպքը»⁷ (Orwell 2012: 38): «Պահանջվում էին միայն անթիվ հաղթանակներ սեփական հիշողությանդ նկատմամբ: «Իրականության կառավարում» էին ասում դրան, նորխոսքում՝ «երկմիտք»⁸ (Orwell 2012: 40):

Գործադրվելով որոշակի մտաշահարկային կառույցների միջոցով՝ երկմիտքը գործածվում էր նաև ներկա իրականության ընկալումն աղավաղելու նպատակով: Երկմտքի գործադրման լեզվական կառույցների իր դասակարգմամբ նմանվելով Օրուելին՝ Ու. Լուտցն, օրինակ, առանձնացնում է չորս հիմնական լեզվական միջոց՝ մեղմասությունները, ժարգոնային բառապաշարի կիրառությունը, «gobbledygook»-ն ու «beurocratese»-ը, որոնք նա պարզապես սահմանում է որպես լսարանին բառերի մեծ քանակով ճնշելը, բառերի մեծ կուտակումով բուն միտքը հստակ չհայտնելը, և ուռճացված լեզուն, որը խոսքին ավելացնում է չափազանցված լրջություն և կարևորություն (Lutz 1997):

Օվկիանիայի չորս նախարարությունների անվանումները՝ **Ճշմարտության նախարարությունը, Սիրո նախարարությունը, Առատության նախարարությունը և Խաղաղության նախարարությունը**, լեզվի միջոցով իրականության այլափոխված, հեզնական արտապատկերման տիպիկ օրինակներ են: Դրանցից յուրաքանչյուրն իրականում պատասխանատու էր ամբողջովին հակառակ գործառույթների համար: Սիրո նախարարությունն, օրինակ, զբաղվում էր քաղաքական այլախոհների

^{6,7,8} Պարբերությունների թարգմանությունը մերն է:

խոշտանգմամբ, Ճշմարտության նախարարությունն ապահովում էր քաղաքական քարոզչությունը, կառավարում էր լրատվությունը, և զբաղվում էր փաստաթղթերի փոփոխմամբ՝ այդ կերպ խմբագրելով պատմությունը, Առատության նախարարությունը զբաղվում էր սովի և աղքատության միջոցով բնակչության կառավարմամբ, իսկ Խաղաղության նախարարությունն, իհարկե, զբաղված էր պատերազմով: Քաղաքական հեգնանքի (political irony) միջոցով իրականությունն աղճատված կերպով ներկայացնող արտահայտություններ են նաև Ճշմարտության նախարարության երեք կարգախոսները՝ «Պատերազմը խաղաղություն է», «Ազատությունը ստրկություն է», «Տգիտությունն ուժ է», ինչպես նաև «Զինացությունն ուժ է», Երկու գումարած երկու հավասար է հինգ» քարոզչական արտահայտությունները:

Վեպում երկմիտքը լեզվականորեն արտահայտվում է նաև նորխոսքի որոշ միավորներում: Այդպիսիք են, օրինակ՝ **goodsex**, **joycamp**, **ownlife**, **goodthinkful** բառերը, որոնցում դրական իմաստ արտահայտող բառերի օգնությամբ հեգնականորեն քողարկվում է իրականում խիստ բացասական իրականությունը: **Joycamp** բառը, որը նշանակում է «ուրախության ճամբար», իրականում վայր էր, որտեղ մարդկանց ստիպում էին զբաղվել տանջալից ֆիզիկական աշխատանքով: Նմանապես՝ **goodthinkful** բառը, որը նշանակում է «բարի կամ լավ բաներ մտածող», որպես որակում տրվում էր այն մարդուն, ով մտածում էր Կուսակցության մտաշահարկային գաղափարախոսությանը համաձայն, այլ ոչ երբեք՝ դրան դեմ:

Ի ամփոփումն, քաղաքական հեգնանքի միջոցով զուգահեռաբար համադրելով հակադիր գաղափարները, իրողություններն ու տեղեկությունները՝ երկմիտքն իր լեզվական կառույցների միջոցով հնարավորություն էր տալիս շահարկել մարդու աշխարհընկալումն ու օբյեկտիվ իրականության ըմբռնումը՝ ապահովելով արդյունավետ, սակայն հակադրության մեջ օբյեկտիվ իրականության մասին գոյություն ունեցող պատկերացման պատճառով վտանգված հարաբերական ենթակայությունը: Սակայն երկմտքին փոխարինելու է գալիս «նորխոսքը», որը, հիմնված լինելով լեզվի՝ մարդու միտքը և մտածողությունը ձևավորելու բացառիկ կարողության վրա, ապահովում է վերջիններիս բացարձակ ու կատարյալ շահարկում՝ դրա միջոցով ապահովելով նաև մարդու կատարյալ և անխախտ ենթակայությունը:

Մտաշահարկման միջոցով հանրության կատարյալ և անխափան հպատակություն ապահովելու նպատակով (որը երկմտքի գործադրման դեպքում կարող էր կասկածի տակ դրվել մարդու գիտակցության մեջ իրականության արդեն իսկ շահարկված ըմբռնման հետ զուգահեռաբար գոյակցող օբյեկտիվ իրականության պատճառով) Օրուելը վեպում մտաշահարկումը խոսույթային մակարդակից տանում է ավելի խորքային, լեզվական մակարդակ՝ ներկայացնելով մտաշահարկումը լեզվի՝ որպես համակարգի միջոցով իրականացվող երևույթ, որը և անվանում է «Newspeak», մեր թարգմանությամբ՝ **«նորխոսք»**:

Վեպում նորխոսքը, ինչպես արդեն նշել ենք, ամբողջատիրական կառավարության կողմից ստեղծված և պարտադրված կերպով հանրային գործածության մեջ դրված կոդ էր, նշանային համակարգ, լեզու, որն ուղղված էր լեզվական մտաշահարկման միջոցով երաշխավորելու հանրության կողմից «Անգլիական սոցիալիզմի» գաղափարախոսության անխափան ընդունումը: Կառավարության տեսլականն էր կիրառությունից դուրս մղել *«հինխոսքը» (Oldspeak), այսինքն՝ անգլերենը* և մարդկային կյանքի բոլոր ոլորտներում գործածության մեջ մտցնել նորխոսքը: Այս նախաձեռնության իրականացման հիմնական ներուժը նորխոսքի կարողությունն է սահմանափակել մարդկային մտածողությունը՝ դարձնելով այն կուսակցության մտաշահարկող գաղափարախոսության գործադրման համար նպաստավոր միջավայր: Հիմնվելով այն գաղափարի վրա, որ լեզուն կարող է կառուցել և ձևավորել մարդկային մտածողությունը, Օրուելը սրանով ուղղակիորեն ի ցույց է դնում լեզվի ներգրավվածությունն իշխանական ուժի չարաշահման և հանրային մտաշահարկման գործում: Նա կարծում է, որ մտածական և ճանաչողական շրջանակի ընդգրկունությունն ուղիղ համեմատական է լեզվահամակարգի բարդությանը:

Ըստ Չիլթոնի՝ նորխոսքը «նվազեցված բարդությամբ, քիչ վերացարկումներով ու առանց ինքնահղման (self-reference) լեզու է» (Chilton 1988: 37): Այստեղ տեղին է մեջբերել նաև Չիլթոնի կողմից Մ. Էդելմանի՝ «սահմանափակող լեզվի» սահմանման մեկնաբանությունը. «Սահմանափակող հանրային լեզվի հիմնական միտումը խոսույթի շրջանակի նեղացումն է, երբ թույլ է տրվում քննարկել միայն կոնկրետ թեմաներ (հաճախ այդ թեմաներն առասպելական են իրենց բնույթով)՝ իրական գործընթացին,

պատճառականությանը և պատասխանատվությանն արվող աղոտ հղումներով, ինչպես նաև չթույլատրելով որևէ քննադատություն: Այս նպատակին կարելի է հասնել լեզվական միջոցներով՝ կոնկրետ բառապաշարի ընտրության կամ ստեղծման, ոչ հստակ քերականական կառույցների ընտրության, ինչպես նաև այլոց հետ հաղորդակցման ընթացքում որոշակի մարտավարության կիրառության միջոցով» (Chilton 1988: 37, Edelman 1977): Լեզվաբանական հարաբերականության հիմունքից բխող այս գաղափարի հիման վրա էլ Օրուելը մարմնավորել է լեզվագործաբանական սկզբունքների այս միահյուսումը մեկ լեզվական մարմնի՝ նորխոսքի մեջ՝ փորձելով ցույց տալ, թե ինչպես է լեզուն ծառայում որպես գործիք՝ մտաշահարկելու մարդկանց և ուղղորդելու նրանց մտքերն ու գործողությունները նախասահմանված նպատակին:

Իր գործառույթով նորխոսքը նման է համակարգչային ծրագրավորման լեզվի, որի օգտագործման հիմքում ընկած են հրամանների շղթաները, օր.՝ «*find somewhere options | tr '/' '\n' | sort | uniq -c | sort -k1.1nr | head -10*»: Հետաքրքիր է այն փաստը, որ յուրաքանչյուր հրաման կոչված է կատարելու մեկ հստակ գործողություն և բերելու կոնկրետ արդյունք: Հրամանի կողմից հրահանգված գործողությունից բացի, համակարգիչը այլ գործողություն չի կարող իրականացնել: Եվ ինչպես համակարգիչը չի կարող կատարել հրաման, որն իրեն չի տրվել, նորխոսք խոսողներն էլ չեն կարող գործել, մտածել կամ ապրել այն ճանաչողական կաղապարից դուրս, որը հաղորդում է նրանց Կուսակցությունը նորխոսքի միջոցով: Օժտված պարզեցված քերականությամբ, իմաստներով և արտասանությամբ՝ նորխոսքը նախագծված է ներկայացնելու որոշակի հրամաններ՝ հօգուտ Կուսակցության մտաշահարկային գաղափարախոսության՝ երաշխավորելով կատարյալ հպատակություն ու հավատարմություն ոչ միայն խոսքով, այլև գործով:

Որպես միտքը սահմանափակող լեզու՝ նորխոսքը ստեղծվել է անգլերենի ձևաբանական, քերականական, և արտասանական կանոնների զանգվածային վերափոխման միջոցով, և համընդհանուր պարզեցումը կարելի է համարել վերջինիս ստեղծման առանցքային սկզբունքը: Վեպի վերջին՝ «Հավելված» կոչվող գլխում հեղինակը համակարգված կերպով ներկայացնում է նորխոսքի լեզվաբանական և մտաշահարկային առանձնահատկությունները:

Նորխոսքի քերականական կառուցվածքն, օրինակ, չափազանց պարզունակ է: Այն ենթադրում է խոսքի մասերի փոխակարգում (conversion) առանց որևէ սահմանափակման, որի համաձայն գոյականն, օրինակ, կարող է գործածվել որպես բայ, ածական, մակբայ և այլն: Բացակայում է բայերի անկանոնությունը. արդյունքում բոլոր բայերի վաղակատար դերբայը (participle II) կազմվում է *-ed* (*goodthinked*) վերջավորությամբ: Նմանապես, բոլոր մակբայները կազմվում են *-wise* (*fullwise, constructionwise, speedwise, goodthinkwise, etc.*), իսկ բոլոր ածականները *-ful* (*goodthinkful, speedful, etc.*) վերջածանցով: Այսպիսով, նորխոսքում լիովին վերացված է անկանոնության ցանկացած դրսևորում:

Պարզեցման նույն սկզբունքի համաձայն՝ նորխոսքի բառապաշարը խիստ աղքատիկ է: Այս լեզվում բառերը դասակարգվում են 3 խմբի՝ ա) առօրյա կյանքում կիրառվող բառեր, բ) քաղաքական նպատակների համար ստեղծված բառեր, և գ) գիտական և տեխնիկական եզրույթներ (Orwell 2012: 344-355): Բառերը, որոնք արտահայտում էին հակիմաստ, «ընդդիմադիր» իմաստներ, այսինքն՝ իմաստներ, որոնք դեմ էին Կուսակցության գաղափարախոսությանը, անցանկալի էին և դուրս էին հանվում լեզվի բառապաշարից: Մնացած բառերը, ինչպես նաև այն բառերը, որոնք դեռ պետք է ստեղծվեին, բացառապես մենիմաստ էին: Բազմիմաստությունը բացառվում էր՝ լիովին պարզեցնելով լեզվի իմաստային շրջանակը: Յուրաքանչյուր բառ ուներ իր հստակ, ուղիղ իմաստը. «Դրա բառապաշարն այնպես էր կառուցված, որ Կուսակցության անդամի նկատի ունեցած ցանկացած իմաստի հաղորդեր ճշգրիտ և հաճախ նրբագույն արտահայտում՝ մինչև նույն ժամանակ բացառելով բոլոր այլ իմաստները, ինչպես նաև դրանց հանգելու անուղղակի մեթոդները: Սա մասամբ արվում էր նոր բառեր ստեղծելու, բայց առավելապես անցանկալի բառերը հեռացնելու միջոցով, ինչպես նաև այն բառերի բացառմամբ, որոնց իմաստները դեմ էին Կուսակցության գաղափարախոսությանը: Եվ առհասարակ, հնարավորինս վերացվում էին բոլոր երկրորդական իմաստները»⁹ (Orwell 2012: 343-344):

Սակայն իմաստային (semantic) սահմանափակումը, որն արտահայտվում է բացարձակ մենիմաստությամբ, Օրուելի կողմից նախատեսված միակ լեզվաբանական

⁹ Պարբերության թարգմանությունը մերն է:

փոփոխությունը չէ: Իմաստային սահմանափակման հիման վրա նա ներկայացնում է նաև նորխոսքի սահմանափակ գործաբանական առանձնահատկությունները. ««Ազատ» բառը դեռ պահպանվում էր նորխոսքում, բայց այն կարող էր կիրառվել միայն այնպիսի դատողություններում, ինչպիսիք են «Այս շունն ազատ է ոջիլներից» կամ «Այս դաշտն ազատ է մոլախոտից»: Այն չէր կարող գործածվել իր հին՝ «քաղաքականապես ազատ» կամ «մտքով ազատ» իմաստներով, քանի որ քաղաքական և մտավոր ազատությունն այլևս գոյություն չունեին անգամ որպես գաղափարներ, այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար անանուն էին»¹⁰ (Orwell 2012: 318):

Սա խոսում է այն մասին, որ փաստացիորեն Կուսակցության գաղափարախոսությունից բացի, գոյություն չունեի որևէ այլ համատեքստ, իրադրություն կամ իրականություն, որում բառերը կարող էին այլ բան նշանակել: Ըստ էության, գոյություն ուներ միայն մեկ բառային, քերականական և արտալեզվական համատեքստ, որում նորխոսքի բառերն արտահայտում էին բացառապես մեկ իմաստ:

Նորխոսքի վերոնշյալ լեզվական (բառակազմական, քերականական, արտասանական) և գործաբանական առանձնահատկություններն առանձնակի հետաքրքրություն են հաղորդում վերջինիս քննությանը թարգմանության տեսանկյունից այն պատճառով, որ նորխոսքի թարգմանությունն, ըստ էության, մի ողջ լեզվահամակարգի թարգմանություն է և ենթադրում է դրա համարժեք վերաստեղծումը թիրախ լեզվի կառույցների և սկզբունքների հիման վրա:

¹⁰ Պարբերության թարգմանությունը մերն է:

ԳԼՈՒԽ II. ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՆՊԱՏԱԿ

2. 1 ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՀԱՅԵՑԱԿԵՐՊԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային և միջլեզվական շփումների ավելացմանը զուգընթաց՝ թարգմանությունը, որպես միջլեզվական հաղորդակցության միջոց, ձեռք է բերում առանձնահատուկ հաղորդակցական նշանակություն: Ժամանակի ընթացքում մեծանում են կատարվող թարգմանությունների ծավալները, ընդլայնվում է հասարակական կյանքի այն տիրույթների ցանկը, որոնցում թարգմանությունը սկսում է գործածվել որպես միջազգային շփման միջոց՝ առևտրից մինչև գրականություն: Արդյունքում թարգմանությունը հաստատվում է որպես լեզվական և հաղորդակցական գործունեություն, և որակյալ ու հաջող թարգմանության ապահովումը դառնում է բոլոր ժամանակների թարգմանիչների գերխնդիրը (Thi Thuy 2013):

Թարգմանության հաջող կամ համապատասխան (adequate) լինելը, որն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել բնագրի հաղորդակցական գործառույթի համարժեք պահպանմամբ, ուշադրության կենտրոնում է եղել թարգմանության՝ և՛ որպես գործընթացի, և՛ որպես միջլեզվական փոխադրման արդյունքի մասին դատողությունների տեսականացման ամենավաղ շրջանից սկսած և այսօր էլ, իր տեսական զարգացման պատմության ընթացքում ենթարկվելով տարակերպ եզրութաւորման (translation adequacy, translation quality, translation equivalence, correct or appropriate translation), արժանացել է մեծածավալ և միջգիտակարգային ուսումնասիրությունների և շարունակում է մնալ թարգմանության գրեթե բոլոր տեսությունների ուշադրության կենտրոնում (Տե՛ս Pinchuk 1968, Reiss 1976, Machulskaya 2015, Frank 1976, Denkowski 2010, Федеров 2002, Виноградов 2001, Սողիկյան և Շահբազյան 2015, Գասպարյան 2008, Գաբրիելյան 2014, Զաքարյան 2014, Համբարձումյան 2013 և այլք):

Ցիցերոնից և Հիերոնիմոսից սկսած՝ թարգմանությունը դիտարկվել է բառ-առ-բառ (word-for-word) կամ բառացի թարգմանություն և իմաստային (sense-for-sense)

կամ «ազատ» թարգմանություն հակադրության շրջանակներում: Նախապատվությունը տալով իմաստային թարգմանությանը՝ անտիկ շրջանի մտածողները նշում էին, որ «թարգմանության գործում աղբյուր տեքստի լեզվական արտահայտմանը խստագույնս հարելը հանգեցնում է անհեթեթ թարգմանության, որը խեղաթյուրում է բնագրի արտահայտած իմաստը» (Munday 2012: 31): Վերոնշյալ տարբերակումն առաջին հայացքից կարող է տարրական և միանշանակ թվալ, սակայն սրանով ուշադրության են արժանանում իմաստի և վերջինիս լեզվական արտահայտման յուրահատկությունները: Ըստ էության, թարգմանության, հետագայում նաև թարգմանական համարժեքության դիտարկման գործում հատուկ ուշադրության է արժանանում լեզվի բովանդակության և արտահայտության տիրույթների միջև գոյություն ունեցող բարդ փոխհարաբերությունը (Barkhudarov 1973), և թարգմանության վերլուծության առանցք է դառնում այն կենտրոնական գաղափարը, որ ցանկացած միտք երկու տարբեր լեզուներում կարող է ստանալ տարբեր լեզվական արտահայտում: Այս առանցքային դիտարկումը հիմք է դառնում թարգմանության տեսության հետագա զարգացման համար՝ ուղղորդելով այն շուրջ երկու հազարամյակ: Ինչպես մեկնաբանում է Ս. Բասնետը՝ թարգմանության տեսության զարգացման ընթացքում բառացի և ազատ թարգմանությունների այս հակադրությունը «շարունակաբար երևան է գալիս՝ ստանալով զանազան շեշտադրում՝ կախված նրանից, թե լեզվի և հաղորդակցության ինչ գաղափարի շուրջ է այն քննվում» (Bassnett 2002: 50):

Ուշ միջնադարում արդեն թարգմանությունը ստանում է ավելի համակարգված մոտեցում՝ «գիտակցված, հիմնավոր պնդումներով՝ ճշգրիտ նպատակի և իմաստի մեջ» (տե՛ս Munday 2012: 41): Այս միտմամբ, որոշ թարգմանաբաններ, մասնավորապես՝ Զ. Դրայդենը, Է. Դոլեն և Ա. Ֆ. Թայթերը իրենց աշխատություններում հանդես են գալիս թարգմանության խիստ կարգադրական (prescriptive (տե՛ս Munday 2012, Pym 2016, House 2015)) մոտեցմամբ՝ առաջադրելով չափանիշ-դրույթներ, որոնց թարգմանիչը պետք է հետևի՝ հաջող թարգմանություն ստանալու համար: Դոլեն, օրինակ, առանձնացնում է հինգ սկզբունք՝ դասակարգված ըստ կարևորության՝

1. Թարգմանիչը պետք է կատարելապես ըմբռնի բնագրի հեղինակի կողմից արտահայտված միտքն ու բովանդակությունը, սակայն նա իրավունք ունի հստակեցնել անորոշությունները,
2. Թարգմանիչը պետք է կատարելապես տիրապետի թե՛ աղբյուր, թե՛ թիրախ լեզուներին, որպեսզի չկոտրի լեզվի վեհությունը,
3. Թարգմանիչը պետք է խուսափի բառացի թարգմանություններից,
4. Թարգմանիչը պետք է խուսափի լատինակերպ և օտար լեզվական միջոցներից,
5. Թարգմանիչը պետք է վարպետորեն կապակցի բառերը՝ անսովոր հնչողությունից խուսափելու համար (տե՛ս Munday 2008: 27):

Կանոնների ավելի ընդհանրական դասակարգում է առաջադրում Թայթլերը՝

1. Թարգմանիչը պետք է ապահովի բնագրում առկա գաղափարների ամբողջական արձանագրությունը,
2. Գրելաձևն ու գրելաոճը պետք է համապատասխանեն բնագրային գրելաձևին և ոճին,
3. Թարգմանությունը պետք է պահպանի բնագրի անբռնազբոսությունը (տե՛ս Munday 2008: 27):

Հաջող թարգմանության հասնելու համար թարգմանության վերոնշյալ բիհեկորիստական մոտեցման առաջադրած չափանիշները Զ. Հաուզը համարում է «սուբյեկտիվ, ներգգայական և զավեշտային դատողություններ՝ տրված ոչ մասնագետների կողմից, ովքեր փորձում են մեկնաբանել, թե որքան լավը կամ վատն է թարգմանությունը» (House 2015: 8): Վերոնշյալ չափանիշներն, ըստ էության, մշակվել են ոչ միայն ուղղորդելու թարգմանչին հաջող թարգմանության հասնելու գործում, այլ փոխադարձաբար գործածվել են նաև որպես հստակ չափորոշիչներ, որոնցով կարելի է գնահատել կատարված թարգմանության որակը: Սակայն, ինչպես իրավամբ նշում է հենց ինքը՝ Հաուզը, սույն որակումները հիմնված են զուտ անհատական տպավորության և զգացմունքների վրա և հանգեցնում են թարգմանությունների չհիմնավորված, սուբյեկտիվ և վերացական մեկնաբանման, օր.՝ «Թարգմանությունը

չի հաղորդում բնագրի շունչը» կամ «Բնագրի տոնը կարծես թե չի պահպանվել թարգմանության մեջ» և այլն (House 2015: 9, 2001: 244):

Թարգմանության նմանօրինակ ընդհանրական գնահատումը, որը հիմնված է թարգմանությունը բնութագրողի անձնական փորձառության և ըմբռնողականության վրա, գնահատողական արժեք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ այն հիմնավորվում է թարգմանված տեքստի իմաստային և լեզվական արտահայտման տիրույթների օբյեկտիվ դիտարկմամբ: Թարգմանվածքի հաջողվածության վերաբերյալ նմանատիպ ընդհանուր եզրահանգումը կարող է միայն հիմնավորվել վերջինիս՝ որպես տեքստ ընդհանուր ազդեցության գնահատմամբ միայն: Կախված նրանից, թե ընթերցողն ինչպես է ընկալում աղբյուր տեքստը և թարգմանվածքը, ինչ տպավորություն կամ ազդեցություն են դրանք թողնում նրա վրա, նա «հավանում» է թարգմանությունը կամ ոչ, ձևավորվում է որոշակի սուբյեկտիվ գնահատական, որն, ի դեպ, տարբեր մարդկանց դեպքում կարող է խիստ տարբեր լինել: Կարևոր է շեշտել, որ թարգմանության գործընթացում միջլեզվական փոխադրման ենթարկվում է ոչ թե տեքստը՝ որպես մեկ ամբողջություն, այլ նրա բաղկացուցիչ միավորները՝ նախադասությունները, բառակապակցությունները, բառերը և այլն: Այդ իսկ պատճառով թարգմանվածքի՝ որպես թարգմանված տեքստի որակն ու հաջողվածությունն ուղղակիորեն կապված են դրա բաղկացուցիչ միավորների թարգմանության որակյալ կամ հաջող լինելու հետ: Իսկ սա ենթադրում է նման լեզվական միավորների թարգմանության օբյեկտիվ վերլուծություն, ինչին վերոնշյալ կարգադրական մոտեցումները, փաստորեն, ուշադրություն չեն դարձնում:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ չնայած թարգմանության տեսության հետագա համակարգմանն ու մեթոդաբանական հստակեցմանը, նմանատիպ սուբյեկտիվ և ոչ պարզորոշ գնահատումներն ավելի ուշ վերածնունդ են ապրում արդեն թարգմանության նեոհերմենևտիկ մոտեցումներում, որոնց հարող տեսաբանները էապես կարևորում են «թարգմանության արժեքի սուբյեկտիվ մեկնաբանման արդարացիությունը» (House 2015: 9):

Թարգմանության տեսությունների ընդհանուր դիտարկումից պարզ է դառնում նաև, որ թարգմանության ոչ մի տեսություն, անգամ Գ. Թուրիի կողմից առաջադրված՝

թարգմանության նկատմամբ նկարագրական մոտեցումը, իրականում լիովին զերծ չի մնում կարգադրականությունից (prescriptivism): Եվ ինչպես նշում է Է. Փիմը, «եթե հիմնանպատակը միայն նկարագրությունը լիներ, որևէ խոշոր տեսության կարիք չէր էլ լինի» (Pym 2012, Liu 2014):

Քսաներորդ դարի երկրորդ կեսին, երբ թարգմանաբանությունը սկսում է հաստատվել որպես հստակ հետազոտական ուղղություն, թարգմանությունը և դրա որակի, համարժեքության և պատշաճության գաղափարները արժանանում են ավելի խորը տեսականացման: Բառացի և ազատ թարգմանության միջև գոյություն ունեցող երկարատև «հակամարտությունից» հետո այս ժամանակահատվածն աչքի է ընկնում այնպիսի տեսություններով, որոնց տեսական հիմքը դառնում է համարժեքության գաղափարը:


Թարգմանական համարժեքության սուկ լեզվաբանական հայեցակերպի խորը դիտարկում է ներկայացնում Ռ. Յակոբսոնը, որը, հենվելով իմաստի և վերջինիս նշանային արտահայտման հարաբերակցության Սոսյուրի առաջադրած մեխանիզմի վրա, նախ նկատում է, որ երկու լեզվական կոդերի միջև, որպես կանոն, կատարյալ համարժեքություն գոյություն չի կարող ունենալ այն պատճառով, որ յուրաքանչյուր լեզու յուրովի է մեկնում և արտահայտում օբյեկտիվ իրականությունն ու մեզ շրջապատող աշխարհը: Սա խիստ էական եզրահանգում է, քանի որ ինչպես նշում է հենց ինքը՝ Սոսյուրը, նույն նշանակյալը, որը կարող է լինել երևույթ, առարկա, կամ գաղափար, յուրաքանչյուր մարդու ճանաչողության մեջ հանդես է գալիս նույն երևույթի որակապես տարբեր պատկերումների տեսքով: Այսինքն՝ որևէ լեզվով արտահայտված նույն նշանակչի (այլ կերպ ասած՝ լեզվական միավորի, օրինակ՝ «ծաղիկ») զուգորդած նշանակյալները տարբեր մարդկանց մոտ երբեք չեն կարող կատարելապես նույնը լինել: Եվ եթե երևույթի՝ մի լեզվական կոդի միջոցով արտահայտման դեպքում դրա կատարելապես համարժեք ըմբռնմանը հասնելն անհնար է, ապա որքան առավել անիրագործելի է խնդիրը թարգմանության դեպքում, երբ գործ ունենք երկու տարբեր լեզվական կոդերի հետ: Նկատելով նաև, որ լեզվական միավորի միջոցով արտահայտված գաղափարի մասին կարելի է պատկերացում կազմել, անգամ եթե մարդը տվյալ երևույթի հետ որևէ շոշափելի շփում չի ունեցել՝ Յակոբսոնը, ըստ

էության, համարժեքության կարևորություն է վերագրում նշանակչի, այսինքն՝ երևույթն անվանող լեզվական միավորի թարգմանությանը: Դիտարկելով «համարժեքությունը տարբերության մեջ»՝ նա սահմանում է միջլեզվական թարգմանությունը որպես «մեկ լեզվով արտահայատված ուղերձների փոխարինումը ոչ թե լեզվական միավորներով, այլ մեկ այլ լեզվով արտահայտված ամբողջական ուղերձներով» և շեշտում, որ թարգմանությունը «ենթադրում է երկու համարժեք ուղերձ՝ արտահայտված տարբեր լեզվական կոդերի միջոցով»: (Jakobson 2004: 139) Համարժեքության լեզվանշանային իր սահմանման մեջ Համբարձումյանը կարևորում է նաև արտալեզվական նշանները՝ նշելով, որ «երկու տեքստերը՝ արտահայտված տարբեր լեզուներով, կարող են համարժեք համարվել այնքանով, որքանով որ դրանց լեզվական և արտալեզվական նշանները կհամարվեն համարժեք»: Ընդհանրացնելով այս միտքը, նա նշում է, որ «լեզվի միավորները նշանակություն են ձեռք բերում միայն որոշակի մշակութային համատեքստում, և ճիշտ է, որ լեզվի կիրառությունը մշակութային առկայացման մի կերպ է» (Համբարձումյան 2013: 99):

Իմաստի և դրա՝ տարբեր լեզվական կոդերի միջոցով համարժեք արտահայտման խնդիրը դիտարկում է Յու. Նայդան (Nida 1964): Հենվելով Չոմսկու առաջադրած սերող քերականության տեսության սկզբունքների վրա՝ Նայդան նախ իմաստի մեջ տարանջատում է լեզվաբանական իմաստը, հիմնանշանային իմաստը, և «հուզական» (հարանշանակային) իմաստը և առաջադրում իմաստի որոշման մի քանի մեխանիզմներ, որոնք թարգմանչին հնարավորություն են տալիս որոշել տարբեր լեզվական միավորների արտահայտած իմաստները, օրինակ՝ աստիճանակարգային կառուցումը, որի շնորհիվ կարելի է տարբերակել բառաշարքերը՝ ըստ իրենց պատկանելության մակարդակի, բաղադրիչային վերլուծությունը, որի միջոցով կարելի է տարանջատել միմյանց հետ սերտ առնչություն ունեցող բառերի իմաստային առանձնահատկությունները, ինչպես նաև իմաստային կառույցի վերլուծությունը, որը թույլ է տալիս առանձնացնել բառի տարբեր իմաստները՝ ըստ որոշակի առանձնահատկությունների (Nida 1964: 84-107):

Տեսական և գործնական լուրջ արժեք ունի նաև թարգմանության գործընթացի համար Յու. Նայդայի և Չ. Թաբերի առաջադրած մեխանիզմը, որը հիմնված է

Չոմսկու առաջադրած համընդհանուր լեզվի կառույցի երկու մակարդակների՝ խորքային մակարդակի (որն արտահայտվում է բոլոր լեզուների համար համընդհանուր միջուկ նախադասությունների միջոցով) և մակերեսային մակարդակի (որը ստացվում է խորքային մակարդակի միջուկ նախադասությունների փոխակերպման միջոցով) վրա:



(գծ. 1) (Nida and Taber 1969: 33)

Ըստ թարգմանության գործընթացի հաջորդական տրոհման այս մոդելի՝ աղբյուր լեզվով արտահայտված մակերեսային կառույցը, որն, ըստ էության, հենց աղբյուր տեքստն է, հետահայաց փոխակերպման միջոցով վերլուծվում է խորքային մակարդակի տարրական միավորների մեջ: Սրանք իրենց հերթին թարգմանության գործընթացում փոխադրվում են թիրախ լեզու, ինչի հիման վրա էլ վերաձևավորվում է թիրախ լեզվի մակերեսային մակարդակը:

Այս մոդելը նշանակալի է այնքանով, որ բացահայտում է թարգմանության գործընթացի մաս կազմող թերևս ամենահիմնական՝ լեզվական փոխադրման ենթագործընթացը, երբ մտքի՝ աղբյուր տեքստում տեղ գտած լեզվական արտահայտությունը, փաստորեն, վերլուծաբար պարզեցվում է ավելի տարրական լեզվական կառույցների, որոնք կարող են արտահայտել այդ միտքը: Վերջիններս ենթարկվում են միջլեզվական փոխադրման, և արդեն թիրախ լեզվում այդ նույն մտքի

խորքային և տարրական արտահայտման հիման վրա վերակառուցվում է աղբյուր տեքստին լեզվագործաբանորեն համարժեք թիրախ տեքստ:

Համարժեքության դիտարկման հետագա փորձերը՝ ներառյալ Նայդայի առաջադրած իմաստների տարանջատումը, հիմնականում պտտվում են բովանդակության և վերջինիս արտահայտման ձևի միջև գոյություն ունեցող անհամարժեքության հարցի շուրջ: Այս անվերջանալի հակամարտ փոխներգործության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշել ենք, նույն միտքը տարբեր լեզուներում կարող է արտահայտվել բոլորովին տարբեր լեզվական կառույցների և միավորների միջոցով: Փոխադարձաբար՝ երկու՝ լեզվականորեն նույնական արտահայտությունները չեն կարող երաշխավորել մտքի նույնական արտահայտում՝ առանց իմաստի աղճատման և խեղաթյուրման:

Հենց այս կարևոր հանգամանքը հաշվի առնելով էլ՝ Նայդան առաջադրում է համարժեքության երկու հիմնական «մոտեցում» կամ «տեսակ»՝ ձևային (ֆորմալ) համարժեքությունը (formal equivalence) և գործառական կամ դինամիկ համարժեքությունը (dynamic equivalence): Ձևային համարժեքության դեպքում առաջնային ուշադրություն է դարձվում աղբյուր տեքստում մտքի լեզվական արտահայտման յուրահատկություններին (Nida 1964: 159): Այս դեպքում փորձ է արվում հնարավորինս սերտ լեզվական նմանություն պահպանել աղբյուր և թիրախ տեքստերի միջև, որն, ինչպես մեկնում է Ջ. Մանդեյը, «հնարավորություն է տալիս ընթերցողին անմիջականորեն մուտք գործել աղբյուր մշակույթի լեզվի և ավանդույթների տիրույթ» (Munday 2012: 42):

Գործառական կամ դինամիկ համարժեքության դեպքում էլ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է հասցեատիրոջ վրա թարգմանության ունեցած ազդեցության պահպանման վրա: Ինչպես սահմանում է հենց ինքը՝ Նայդան, «թարգմանության և վերջինիս հասցեատիրոջ միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը սկզբունքորեն պետք է համապատասխանի բնագրի և դրա հասցեատերերի միջև առկա փոխհարաբերությանը» (Nida 1964: 159): Այս դեպքում թարգմանությունը ենթադրում է կատարյալ բնականություն (naturalness), որն, ըստ Նայդայի, գործառական համարժեքության պարտադիր նախապայման է, իսկ աղբյուր

լեզվով արտահայտված ուղերձին թիրախ լեզվով ամենամոտ բնական համարժեքը գտնելը նա սահմանում է հիմնականատակ (Nida 1964: 166, Nida and Taber 1969: 12):

Նայդան թարգմանության պատշաճությունն ուղղակիորեն կապում է վերջինիս իրականացրած համարժեք ներագդման հետ, որին և ավելացնում է երեք այլ նախապայմաններ՝ ցուցաբերելով կարգադրական մոտեցում և հանգելով չորս նախապայմանի.

1. իմաստ արտահայտելը,
2. բնագրի շունչն ու ոճը պահպանելը,
3. բնական և հեշտ արտահայտումը,
4. նման արձագանք ապահովելը (Nida 1964: 166):

Համարժեքության՝ Նայդայի սահմանումը մեծ արժեք ունի հատկապես այն պատճառով, որ նա համարժեքությունը, որպես հաջող թարգմանության նախապայման, դուրս է բերում սոսկ լեզվական արտահայտման մակարդակից և այն դիտարկում այնպիսի մի գործառական առանձնահատկության շրջանակներում, ինչպիսին է թարգմանության ազդեցությունը ընթերցողի վրա՝ սրանով թարգմանության արժեքի կարևոր բաղադրիչ համարելով վերջինիս հաղորդակցական գործառույթը: Հետագայում Նայդայի առաջադրած գործառական համարժեքության գաղափարը արժանանում է ծավալուն քննադատության (Lefevere 1993, Broek 1978, Larose 1989, Newmark 1981, 1988), իսկ համարժեքության գաղափարը շարունակական զննության արդյունքում ստանում է այլ սահմանումներ՝ տարբեր հայեցակերպերի վրա կենտրոնացմամբ:

«Արտահայտություն» և «բովանդակություն» հակադրամիասնությունից չի կարողանում «զերծ մնալ» նաև Փ. Նյումարկը, որը, էականորեն հեռանալով Նայդայի առաջադրած՝ ընթերցողի վրա թարգմանության ունեցած կատարելապես համարժեք ազդեցության կարևորությունից, առանձնացնում է երկու տիպի թարգմանություն՝ իմաստային թարգմանություն և հաղորդակցական թարգմանություն՝ նշելով, որ «հավատարմության խնդիրը՝ աղբյուր կամ թիրախ լեզուների շեշտադրման միջև ընկած միջակայքը միշտ լինելու է թարգմանության համար առաջնային խնդիրը թե՛ տեսական, թե՛ գործնական դիտանկյունից» (Newmark 1981: 38): Իմաստային

թարգմանությունը, ըստ էության, հիշեցնում է Նայդայի ձևային համարժեքությունն այն տարբերությամբ, որ, ինչպես նշում է հենց ինքը՝ Նյումարկը, այն մեծ ուշադրություն է դարձնում նաև համատեքստին: Հաղորդակցական թարգմանության դեպքում, որը որոշ չափով նման է Նայդայի գործառական համարժեքությանը, Նյումարկը կատարելապես համարժեք ազդեցությունը համարում է անիրագործելի այն պատճառով, որ բնագրի և դրա թարգմանության հասցեատերերն ունեն տարբեր մշակութային պատկանելություն և ժամանակային ու տարածական տեղակայում: Հետևաբար՝ համարժեք ազդեցության կարելի է հասնել միայն ինչ-որ չափով, որն էլ նա վերագրում է ուղերձի հաղորդակցական գործառույթին, այսինքն՝ միտքը հաղորդելու կարողությանը՝ իրականացված վերջինիս լեզվական արտահայտման միջոցով: Այս մոտեցմամբ Նյումարկը բացահայտում է մտքի և դրա լեզվական արտահայտման նշանակության անբաժան լինելը և լեզվական արտահայտումը համարում է համարժեքության ապահովման հիմնական գործոն (տե՛ս Munday 2012):

Համարժեքության ավելի ընդգրկուն տեսակավորում է տալիս Ու. Քոլլերը, որը տարանջատում է համարժեքությունը լեզվական համապատասխանությունից (correspondence), որի դեպքում հակադրվում են երկու տարբեր լեզվական համակարգերն ու փորձ է արվում նկարագրել վերջիններիս միջև գոյություն ունեցող համակարգային տարբերությունները՝ համարժեքությունը համարելով աղբյուր և թիրախ տեքստերում առկայացած լեզվական տարրերի միջև հաղորդակցական համապատասխանությունը: Նա առաջադրում է համարժեքության հինգ տիպեր կամ մակարդակներ.

1. **հիմնանշանակային (denotative) համարժեքություն**, որի դեպքում ապահովվում է տեքստի արտալեզվական բովանդակությունը, որը և Քոլլերն անվանում է «բովանդակային անփոփոխականություն» (content invariance), (Koller 1979)
2. **հարանշանակային (connotative) համարժեքություն**, որի դեպքում ապահովվում է տեքստի ոճական համարժեքությունը՝ ստացված համապատասխան բառային միավորի ընտրության միջոցով,

3. **տեքստ-նորմատիվ համարժեքությունը**, որի դեպքում կարևորվում են տեքստի ժանրային, ինչպես նաև տեքստի ստեղծման նորմատիվ առանձնահատկությունները,
4. **գործաբանական համարժեքությունը**, որը Քոլլերը կոչում է նաև «հաղորդակցական համարժեքություն», համընկնում է Նայդայի «գործառական համարժեքության» հետ և ուղղված է դեպի տեքստի հասցեատերը:
5. **Ձևային համարժեքություն**, որն էլ կապված է տեքստի ձևային կազմի՝ գեղագիտական, արտիստիկ և այլ արտահայտումների համարժեք փոխադրման հետ (տե՛ս Munday 2012: 47):

Համարժեքության նմանատիպ հնգաստիճան դասակարգում է առաջադրում նաև Վ. Կոմիսարովը, որը համարժեքությունը համարում է աղբյուր և թիրախ լեզուների միջև գոյություն ունեցող իմաստային նմանության չափ: Նա տարանջատում է.

1. **Հաղորդակցական նպատակի համարժեքություն**, որի դեպքում, ըստ էության, թիրախ տեքստը համարժեքորեն պահպանում է աղբյուր տեքստի հաղորդակցական նպատակը, սակայն կարող է վերջինից խիստ տարբերվել իր լեզվական արտահայտման յուրահատկություններով,
2. **Իրադրային համարժեքություն**, որի դեպքում համարժեքորեն թիրախ տեքստ են փոխանցվում է նաև ուղերձի իրադրային յուրահատկությունները,
3. **Իրադրության նկարագրման համարժեքություն**, որի դեպքում թիրախ տեքստում համարժեքորեն պահպանվում են աղբյուր տեքստում առկա իրադրության նկարագրման հիմնական միջոցները, սակայն ընդհանուր լեզվական պլանը կարող է էականորեն տարբեր լինել,
4. **Շարահյուսական կառույցների համարժեքություն**, որի դեպքում համարժեքորեն թիրախ տեքստ են փոխանցվում աղբյուր տեքստում առկա շարահյուսական կառույցները, սակայն կարելի է նկատել բառային արտահայտման անհամապատասխանություն,

5. Բառիմաստային համարժեքություն, որի դեպքում թարգմանությունն իր լեզվական արտահայտման միջոցներով համանման է աղբյուր տեքստի լեզվական արտահայտմանը՝ նաև բառային մակարդակում (Komissarov 1990, 2002):

Փաստորեն, ինչպես Քոլլերի, այնպես էլ Կոմիսարովի դիտարկման մեջ համարժեքությունը ներկայացվում է բովանդակության և դրա լեզվական արտահայտման փոխհարաբերության և փոխներգործության հիման վրա, որի տարբեր մակարդակների դեպքում կարելի է հանգել տարբեր աստիճանի համարժեքության: Համարժեքության՝ Քոլլերի դասակարգման մեջ կարևոր է նաև այն, որ նա ուշադրություն է դարձնում տեքստի արժեքի գաղափարին՝ ասելով, որ «թե՛ տեքստը որպես մեկ ամբողջություն դիտարկելիս, և թե՛ տեքստի հատվածների դիտարկման գործում, թարգմանիչը պետք է սահմանի արժեքների աստիճանակարգություն, որոնք պետք է պահպանվեն և փոխանցվեն թարգմանության գործընթացում: Սրա հիման վրա էլ կարելի է սահմանել դիտարկվող տեքստին համապատասխան համարժեքության պահանջներ» (տե՛ս Panou 2013: 4):

Համարժեքության ուսումնասիրության ժամանակ մեծամասամբ լեզվաբանական կենտրոնացմամբ են հանդես գալիս նաև Ջ. Քեթֆորդը, Փ. Նյումարկը և Ժ. Փ. Վինեն ու Ջ. Դարբելեն, որոնք մեծ ուշադրություն դարձնելով իմաստային ատահայտման միջլեզվական յուրահատկություններին, մասնավորապես՝ այն լեզվաբանական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում թարգմանության ընթացքում, առաջադրում են թարգմանական հնարների բավականին ընդգրկուն դասակարգումներ: Վինեն ու Դարբելեն, օրինակ, տարանջատում են թարգմանության ռազմավարության երկու տեսակ՝ ուղիղ թարգմանություն և անուղղակի թարգմանություն (direct translation and oblique translation): Ուղիղ թարգմանության մեջ՝ որպես ընդհանուր թարգմանական ռազմավարություն, առանձնացնում են փոխառության, պատճենման և բառացի թարգմանության թարգմանական հնարները (translation procedures): Անուղղակի թարգմանությունն էլ իր հերթին ներառում է փոխատեղման, մոդուլացիայի, համարժեքության և հարմարեցման թարգմանական հնարները (Vinay and Darbelnet 1958, Panou 2013): Ի դեպ, ուղիղ թարգմանության ռազմավարությունը կարևորում է աղբյուր լեզվի լեզվական

առանձնահատկությունները, այնինչ անուղղակի թարգմանության ռազմավարությունը շեշտը դնում է թիրախ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների վրա:

Նյումարքը ներկայացնում է թարգմանական հնարների առավել ընդգրկուն տարանջատում, օր.՝ բառ-առ-բառ թարգմանությունը, բառացի թարգմանություն, իմաստային թարգմանություն, դարձվածային թարգմանություն, ազատ թարգմանություն, բնականեցում, հաղորդակցական թարգմանություն, մշակութային համարժեք, նկարագրական համարժեք, գործառութային համարժեք և այլն (Newmark 1988, տե՛ս նաև Սողիկյան և Գիշյան 2014):

Համարժեքության վրա հիմնված տեսությունների զարգացմանը զուգահեռ առաջ են գալիս թարգմանական տեսություններ, որոնցից յուրաքանչյուրի դիտարկման առանցք է դառնում «թարգմանություն» երևույթի այս կամ այն առանձնահատկությունը, ինչի արդյունքում թարգմանությունը դուրս է գալիս սոսկ լեզվաբանական ուսումնասիրության տիրույթից: Ինչպես նշում է Ս. Գասպարյանը, «Թարգմանության տեսության այժմեական խնդիրներից է ոչ միայն աղբյուր լեզվի միջլեզվական համապատասխան տարբերակի համարժեք ընտրությունը թիրախ լեզվում, այլև միջմշակութային հաղորդակցման «բնական» մթնոլորտի ստեղծումը աղբյուր տեքստի և թիրախ տեքստի միջև» (Գասպարյան 2008: 78): Սա նախևառաջ պայմանավորված է թարգմանության՝ այլ գիտակարգերի և հասարակական կյանքի ամենատարբեր տիրույթների հետ ունեցած սերտ առնչության աստիճանական բացահայտմամբ: Այս քայլով, ըստ էության, մեծ ուշադրության են արժանանում թարգմանության հասարակական, հանրամշակութային, հոգեբանական և այլ առանձնահատկությունները, և թարգմանության վերաբերյալ հետագա տեսություններում մեծ ուշադրություն է դարձվում դրա միջգիտակարգային հայեցակերպերին: Ըստ Մանդեյի, «թարգմանաբանության ոլորտում կատարված բոլոր վերջին հետազոտությունները մեծամասամբ միջգիտակարգային կողմնորոշում են ունեցել: Թարգմանաբանությունը դիտարկվել է այլ գիտակարգերի՝ լեզվաբանության, բանասիրության, փիլիսոսփայության, մշակութաբանության, խոսույթի տեսության և այլ գիտակարգերի հետ սերտ փոխգործակցության շրջանակներում» (Munday 2012: 22-24): Այս կարծիքին է նաև Գամբիերը. «Թարգմանաբանությունը նշանակալիորեն փոխ

է առել այլ գիտակարգերից...» (Gambier and Doorslaer 2010) Եվ սա, իհարկե, պայմանավորված է «թարգմանություն» երկույթի բազմակերպ և բազմաշերտ բնույթով:

Բացառապես լեզվաբանական շրջանակից անդին՝ թարգմանության «Սկոպոսի» տեսությունը (Nord 1997, Vermeer 1989, 1996, Chesterman 2010), ինչպես նաև մյուս ֆունկցիոնալիստական տեսությունները (functionalist theories) առավելապես կարևորում էին թարգմանվածքի «սկոպոսը», այսինքն՝ այն գործառույթը, որը թարգմանվածքը կոչված է իրականացնելու թիրախ մշակույթում՝ համարժեքությունը համարելով անկարևոր և ոչ պարտադիր նախապայման: Այս տեսություններով, ըստ էության, տեղի է ունենում նկատելի շեղում թարգմանության առավելապես լեզվաբանական մոտեցումից, որով հետաքրքրված էին թարգմանության՝ համարժեքության վրա հիմնված տեսությունները: Սույն տեսությունների մոտեցման համաձայն՝ թարգմանությունը կարելի է համարել համապատասխան և համարժեք, եթե այն ապահովում է «գործառական համամասնություն» բնագրի հետ, որն էլ, ըստ Փիմի, «համարժեքության գաղափարին թերևս ամենամոտ առանձնահատկությունն է, որը կարելի է առաջադրել» (Pym 2012):

1990-ականներին առաջ եկած թարգմանական տեսությունների համար հիմք է դառնում ժամանակի թերևս ամենախոշոր լեզվական շարժումը՝ խոսույթի վերլուծությունը (Munday & Zhang 2015): Սույն տեսությունների շրջանակներում առավելագույն ուշադրության են արժանանում թարգմանության՝ որպես տեքստի միջլեզվական և միջմշակութային փոխադրման խոսույթային առանձնահատկությունները: Խոսույթի և լեզվի դիտարկման Հելիդեյի առաջադրած մոդելը, որը հիմնված է ժանրի և վերջինս պայմանավորող ռեգիստրի ուսումնասիրության վրա, դառնում է թարգմանության ուսումնասիրության հիմնական մոտեցում, ինչպես նաև հիմք՝ թարգմանության որակի գնահատման տարբեր մոդելների մշակման համար (House 1997, 2015, Volkova 2014 և այլն): Մեծ ուշադրության են արժանանում են նաև թարգմանության գործում տեքստի գործաբանական առանձնահատկությունները: Թարգմանության գործընթացում տեքստի գործաբանական առանձնահատկությունների կարևոր դիտարկման հիման վրա էլ Մ. Բեյքերը՝ համարժեքության բառային, դարձվածային, քերականական և տեքստային մակարդակներին զուգահեռ

դիտարկում է նաև հինգերորդ՝ գործաբանական համարժեքության մակարդակը (Baker: 2011):

Թարգմանության դիտարկման ժանրային/խոսույթային մոտեցումն արժեքավոր է նրանով, որ ուշադրություն է դարձնում տեքստի և լեզվի կիրառության խոսույթային առանձնահատկություններին՝ քննելով տեքստերի ստեղծման և առկայացման իրադրային առանձնահատկությունները, տեքստի հաղորդակցական և դրա հեղինակի և հասցեատերերի դերերի խոսույթային-գործաբանական յուրահատկությունները և այլն:

Թարգմանությանն ավելի բազմակողմանի են մոտենում Ի. Էվեն Զոհարի և Գ. Թուրիի առաջադրած տեսությունները: Էվեն-Զոհարի ներկայացրած Բազմահամակարգության տեսությամբ (Polysystems Theory) թարգմանությունը, մասնավորապես՝ գրական ստեղծագործությունների թարգմանությունները, դիտարկվում են որպես թիրախ լեզվի մշակութային, հասակարակական, պատմական, ազգային մակրոհամակարգի բաղկացուցիչ մաս: Այսինքն՝ գրական ստեղծագործության թարգմանությունը համարելով թիրախ գրականության մի մասը հանդիսացող առանձին համակարգ՝ բազմահամակարգերի տեսությունը դիտարկում է այն այլ՝ մշակութային, հասարակական, պատմական համակարգերի հետ դինամիկ հարաբերակցության մեջ (Even-Zohar 1978):

Նմանապես՝ Թուրիի նկարագրական թարգմանության տեսությունը (DTS), որը նույնպես հիմնված է թարգմանության մակրոհամակարգային դիտարկման Էվեն-Զոհարի առաջադրած տեսության գաղափարների վրա, ի ցույց է դնում թարգմանության դիտարկման առավելապես նկարագրական մոտեցում՝ փորձելով տարբերվել թարգմանաբանության կարգադրական մոտեցումներից (որն, ըստ որոշ տեսաբանների, այս դեպքում լիովին չի հաջողվում (Liu 2014: 13)) և առաջադրել թարգմանության մեկ ընդհանուր տեսություն (Pym 2010):

Այս տեսությունը, փորձելով հանդես գալ որպես «աստիճանակարգային կազմակերպմամբ և հստակ հետազոտական մեթոդաբանությամբ էմպիրիկ գիտակարգ», դիտարկում է թարգմանությունը համակողմանիորեն և տարբեր տեսանկյուններից (Pym 2010):

Ս. Բասնետը պայմանավորում է սա այն հանգամանքով, որ «թարգմանության նախորդ տեսությունների դեպքում չկա թարգմանության ողջ գործընթացը պայմանավորող հասարակական-մշակութային պայմանների նկատմամբ զգայունություն» (տե՛ս Castello 2014: 4): Սույն տեսության շրջանակներում հատուկ ուշադրության են արժանանում թարգմանության ամենատարբեր հայեցակերպերը: Այն նախևառաջ ընդունվում է որպես գործընթաց, որի իրականացրած գործառույթը համարվում է թիրախ մշակույթի անբաժան մաս, ուշադրության է արժանանում թարգմանիչը և թարգմանությունը որպես մտավոր գործունեության երևույթ, դիտարկվում են թարգմանության գործընթացի հասարակական-մշակութային միջավայրն ու պայմանները և այլն: Իսկ համարժեքությունը, ինչպես նշում է Փիմը, թարգմանության նկարագրական տեսության մեջ «համարվում է բացառապես բոլոր թարգմանություններին բնորոշ յուրահատկություն» (Pym 2010, տե՛ս նաև Rosa 2016):

Սահմանափակվելով թարգմանական տեսությունների այս ներկայացմամբ՝ կարող ենք համաձայնել Ա. Չեսթերմանի հետ առ այն, որ «թարգմանաբանությունը մինչ այժմ մեր ուշադրությանն է ներկայացրել միայն հատվածական տեսությունների մի խառնուրդ», որոնցից յուրաքանչյուրը «թարգմանություն» կոչվող բազմաբարդ, բազմակերպ և ոչ ճշգրիտ երևույթին մոտենում է մեկ կամ մի քանի տեսանկյուններից միայն (Chesterman 2010): Յուրաքանչյուր տեսության շրջանակում վերլուծության առանցքը, որպես կանոն, թարգմանության կոնկրետ, եզակի հայեցակերպ է, որը և դառնում է թարգմանության տեսականացման հիմք, իսկ մնացած բոլոր հայեցակերպերն ու առանձնահատկությունները դիտարկվում են հենց այդ լույսի ներքո:

Համարժեքության գաղափարին անդրադարձները նույնպես թարգմանաբանական հատվածական տեսությունների շրջանակներում են: Ինչպես նշում է Հաուզը, համարժեքությունը թարգմանության, ինչպես նաև թարգմանության որակի գնահատման առանցքային գաղափար է (House 2015: 5): Իսկապես, համարժեքությունը, կամ այլ կերպ ասած՝ բնագրի արժեքը նույնությամբ թիրախ լեզվամշակույթ փոխադրելը կարելի է համարել թարգմանության գործընթացի բնական պահանջ և թարգմանչի՝ պատշաճ թարգմանություն ապահովելու ենթագիտակցական միտում:

Թարգմանության գործընթացում այն հանդես է գալիս որպես թարգմանության որակի անխուսափելի չափանիշ և նախապայման: Այս կարծիքին են նաև Է. Լեֆևերն ու Ռ. Բրոքը, որոնք կարծում են, որ «թարգմանությունը կարելի է ամբողջական համարել միայն այն դեպքում, երբ աղբյուր տեքստի հաղորդակցական արժեքն ու ժամանակային և տարածական պատկանելության տարրերը թիրախ տեքստում փոխարինվել են հնարավոր ամենամոտ համարժեքներով» (Lefevere 1975: 102, Broeck 1978: 39):

Համարժեքությանն ուղղված ամենատարբեր մոտեցումների դիտարկումից տպավորություն է ստեղծվում, որ տարակարծությունների պատճառը ոչ այնքան թարգմանական համարժեքության կարևոր կամ անկարևոր լինելն է, որքան այն հանգամանքը, թե որ տեսության շրջանակներում թարգմանության որ հայեցակերպին կամ ներակա առանձնահատկությանն է վերագրվում առավելագույն արժեք: Հետևաբար, համարժեքությունից խուսափել չէր կարող և ոչ մի տեսություն կամ մոտեցում, որովհետև դրանցից ամեն մեկը, առաջնայնություն տալով թարգմանական որևէ բաղադրիչի, ինքնաբերաբար ձևավորում է որոշակի արժեք, որն անխուսափելիորեն պետք է փոխանցվի թիրախ լեզվամշակույթ: Այդ իսկ պատճառով «համարժեքությունը...» (տրամաբանորեն նաև թարգմանական արժեքը) «...հարաբերական հասկացություն է, քանի որ այն ենթարկվում է ամենատարբեր լեզվաբանական և մշակութային գործոնների ազդեցությանը» (տե՛ս Panou 2013: 4): Այս պատճառով էլ հավատացած ենք, որ յուրաքանչյուր տեքստի դեպքում թարգմանական արժեքը տարբեր է, և կախված աղբյուր տեքստի բնույթից և առանձնահատկություններից՝ թարգմանության գործընթացում փոխանցվելիք արժեքը մի տեքստի դեպքում կարող է առավելապես ներառել տեքստի «սկոպոսը», մյուսի դեպքում՝ աղբյուր և թիրախ տեքստերի խոսույթային, գործաբանական, մշակութային առանձնահատկությունները, մեկ այլ տեքստի դեպքում՝ դրա լեզվական արտահայտման առանձնահատկությունները և այլն: Հետևաբար, թարգմանության վերլուծության գործում նախ հարկ է սահմանել այն արժեքը, որը պետք է ենթարկվի համանման միջլեզվական փոխադրման:

Խոսելով թարգմանական արժեքի մասին՝ հարկ ենք համարում նշել նաև, որ թարգմանությունն, անկախ ամեն ինչից, լեզվական կողերի միջև տեղի ունեցող փոխադրային երևույթ է, և որ թարգմանության՝ որպես լեզվական գործունեության գոյությունը պայմանավորված է մեկ լեզվով արտահայտված տեքստը/խոսույթը այդ լեզուն չտիրապետող մարդկանց համար այլ լեզվով հասանելի դարձնելու տարրական պահանջով: Եվ եթե միտքն իր շոշափելի արտահայտումը գտնում է լեզվի միջոցով, ապա դրա միջլեզվական փոխադրումը (այն է՝ թարգմանությունը) չի կարող ուշադրություն չդարձնել լեզվի դերի և մտքի լեզվական արտահայտման հայեցակերպի կարևորության վրա: Հետևաբար մտքի/ուղերձի լեզվական արտահայտումը վերջինիս արժեքի անբաժանելի մասն է, և դրա լեզվաբանական առանձնահատկությունների քննությունը պետք է լինի թարգմանության ուսումնասիրության գործընթացի անբաժանելի մաս: Ինչպես նշում է Գասպարյանը, իմաստի, գաղափարի, երևույթի, իրականության «ընկալումը հենց լեզվի ընկալումն է, քանի որ մարդու մտածողությունն ու աշխարհայացքն էլ ձևավորվում և արտահայտվում են լեզվի միջոցով» (Գասպարյան 2015: 33): Այս կարծիքին են նաև Հաուզն ու Փիմը, որոնք համարժեքության մասին իրենց վերջերս հրապարակված ուսումնասիրություններում ցուցաբերում են նմանատիպ «հավասարակշռված» մոտեցում: Ըստ Հաուզի՝ «Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում թարգմանաբանության ոլորտում տեղի են ունեցել նկատելի տեղաշարժեր, որոնք թարգմանությունը համարում են մեծամասամբ հասարակական, մշակութային, քաղաքական, բարոյագիտական և գաղափարախոսության գերակայության տակ տեղի ունեցող գործողություն: Չնայած որ նման նկատառումներն, անշուշտ, անհրաժեշտ են և արժեքավոր, պետք չէ մոռանալ, որ թարգմանությունն իր բնույթով լեզվական գործողություն է» (House 2015: 2): Փիմը, ուշադրություն դարձնելով թարգմանության լեզվական հայեցակերպի կարևորությանը, առանձնացնում է համարժեքության երկու հիմնական մակարդակ՝ բնական համարժեքություն (natural equivalence) որն, ինչպես մեկնում է Դ. Փանուն, «գոյություն ունի լեզուների միջև նախքան բուն թարգմանության ակտը» (Panou 2013: 5) և ուղղորդված համարժեքություն (directional equivalence), որի դեպքում, ըստ

էության, թարգմանիչն է որոշում այն արժեքը, որը պետք է փոխանցվի թարգմանության ընթացքում:

Այն, որ լեզվական արտահայտման ձևը տեքստի արժեքի անքակտելի մասն է, կարելի է եզրակացնել համարժեքության ավելի վաղ ուսումնասիրություններից ևս: Համարժեքության թե՛ Նայդայի, թե՛ Քոլլերի, և թե՛ Կոմիսարովի դասակարգումներում (հիարկե՝ տարբեր ստորաբաժանմամբ) արժեքը կարծես դիտարկվում է կորդինատային հարթության մեջ, որի մի բևեռը միշտ լեզվական արտահայտումն է (տե՛ս նաև Գասպարյան 2008, 2006, Գաբրիելյան 2014):

Այսպիսով, լեզվական միավորի արժեքի անքակտելի մասն են կազմում ոչ միայն դրա արտահայտած իմաստը՝ այսինքն, արտահայտման բովանդակային տիրույթը, այլ նաև այն լեզվական/ձևային կառույցը, որի միջոցով արտահայտվում է վերոնշյալ իմաստը: Իսկ քանի որ նմանատիպ լեզվական կառույցները հանդիսանում են ավելի մեծ լեզվական միավորի՝ տեքստի անմիջական բաղադրիչները, թարգմանության մեջ դրանց արժեքը ներառում է նաև տեքստի այնպիսի արտալեզվական առանձնահատկությունները, ինչպիսիք են աղբյուր լեզվամշակույթում նույն տեքստի ունեցած հաղորդակցական նշանակությունը, իրականացրած գործառույթը, հասցեագրված լսարանի հասարակական-մշակութային և լեզվական առանձնահատկությունները, և այլն: Լեզվական և արտալեզվական գործոնների այս ամբողջությունն էլ ձևավորում է լեզվական միավորի թարգմանական արժեքը: Հետևաբար, թարգմանվածքի՝ որպես միջլեզվական գործունեության արդյունքի քննության գործում «համարժեքությունը» մեր ընկալմամբ հարկ է դիտարկել վերոնշյալ բոլոր՝ լեզվական և արտալեզվական հայեցակերպերի համադրման պայմաններում:

2.2 ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Թարգմանության որակը պայմանավորող գործոնները բազմաթիվ են և բազմաբնույթ: Թարգմանության՝ որպես վերջնարդյունքի որակը, որի առանցքը համարժեքության ապահովումն է, մեծապես պայմանավորված է նաև թարգմանության գործընթացի, թարգմանչի դերի և գործառույթի, վերջինիս կողմից որդեգրած թարգմանական ռազմավարության, թարգմանական հնարների ընտրության, նրա ֆոնային գիտելիքի և մի շարք այլ գործոնների հետ, որոնց համադրությունն էլ կանխորոշում է թարգմանվածքի՝ որպես միջլեզվական գործունեության արդյունքի որակը և պարտադիր կերպով պետք է ուշադրության արժանանա վերջինիս գնահատման գործում:

Եվ այսպես՝ թարգմանության ողջ գործընթացը, դրա համատեքստում նաև թարգմանչի գործունեությունն ու վարքը, ինչպես նաև թիրախ տեքստի՝ որպես թարգմանության պատշաճ արդյունքի ստացումը նախևառաջ պայմանավորված են այս ողջ գործընթացը կարգաբերող ամենատարբեր լեզվական, մշակութային, հասարակական նորմերով:

Սահմանելով նորմերը միջգիտակարգայնորեն, մասնավորապես՝ մշակութաբանական և հասարակագիտական մոտեցմամբ՝ կարելի է ասել, որ նորմերը «հասարակության անդամների համար սահմանված հասարակական վարքի կաղապարներ են: Եթե մշակութային նորմը խախտվում է, անհատը հասարակայնորեն պատժվում է իր իսկ հասարակության սպասելիքները չարդարացնելու համար» (Rogers and Steinfatt 1999: 85): Հետևաբար՝ վարքը կարող է «նորմալ» համարվել, եթե այն ցուցաբերվում է որոշակի նորմի սահմաններում:

Ինչպես նշում է Շեֆները, «նորմերն ցույց են տալիս հասարակական ճշգրտության և պատշաճության երևույթները, այսինքն՝ այն ամենը, ինչն այդ պահին որոշակի համայնքի կողմից ընդունվում է որպես ճիշտ և պատշաճ»: Ավելին՝ նորմերը վերջնականորեն ամրագրված չեն, այլ ժամանակի ընթացքում կարող են փոփոխության ենթարկվել: «Դրանք սուբյեկտների միջև հարաբերություններում գործում են որպես ճիշտ և պատշաճ վարքի մոդելներ՝ այդպիսով կանոնակարգելով

հասարակական վարքի հետ կապված ակնկալիքները (Schäffner 2010: 237): Նա շեշտում է, որ լեզվական համարժեքության վրա հիմնված մոտեցումների դեպքում, օրինակ, թարգմանական նորմերը հարկադրում են առավելապես լեզվաբանական համարժեքություն ու ճշգրտություն: Հետևաբար, սույն նորմատիվ սահմանագծի շրջանակներում թարգմանչից ակնկալվում է ապահովել լեզվաբանորեն համարժեք և տեքստայնորեն պատշաճ թարգմանություն:

Ամփոփելով կարելի է ասել, որ նորմը որոշակի հասարակական-մշակութային համատեքստում գործող օրինաչափությունների շրջանակ է: Տարբեր թարգմանական մշակույթներում և հանրություններում որոշակի նորմեր կառավարում և կանխորոշում են տվյալ ժամանակահատվածում դրսևորվող թարգմանական միտումները: Թարգմանության գործընթացում լեզվական միջոցների ընտրությունը, ինչպես նաև աղբյուր և թիրախ տեքստերի միջև լեզվամշակութային փոխհարաբերությունը նույնպես սահմանվում և կանխորոշվում են նորմերի համաձայն:

Թարգմանչի կողմից լեզվական միջոցների ընտրությունը, կամ այլ կերպ ասած՝ թարգմանչի վարքն, օրինակ, մեծապես պայմանավորված է աղբյուր և թիրախ մշակույթների լեզվական նորմերով, որոնք էլ պայմանավորում են թարգմանության ողջ գործընթացը. աղբյուր տեքստը ներկայացնում է աղբյուր մշակույթում գործող լեզվական նորմերը, սրանք թարգմանության գործընթացում հակադրվում են թիրախ լեզվամշակույթում առկա լեզվական նորմերին, իսկ այս հակադրության սրությամբ էլ պայմանավորված է թարգմանության ընթացքում «թարգմանչի լեզվական վարքը»:

Թարգմանչի լեզվական վարքը մեծապես պայմանավորված է վերջինիս որդեգրած ընդհանուր թարգմանական ռազմավարությամբ նաև, որն էլ իր հերթին կարգաբերվում և սահմանվում է առկա և գործող նորմերի համաձայն: Հիմնվելով տարբեր հանգամանքների վրա, ինչպիսիք են, օրինակ՝ տեքստի «սկոպոսը», հաղորդակցական նպատակը, հասցեագրվող լսարանի պահանջներն ու յուրահատկությունները, և որ ամենակարևորն է՝ տեքստի հիմնական արժեքը, որը պետք է պահպանվի թարգմանության ընթացքում, թարգմանիչը որդեգրում է որոշակի ռազմավարություն, որն էլ պայմանավորում է թարգմանության համար լեզվական միավորների ընտրությունը:

Թարգմանական ռազմավարության բավականին ընդգրկուն դիտարկում է ներկայացնում Յ. Սունը, որը նշում է, որ «թարգմանական ռազմավարություն» հասկացությունը շատ հաճախ նույնացվել է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են թարգմանական հնարը, մեթոդը, տեխնիկան, գործելաոճը, մոտեցումը և այլն»: Նա շարունակում է՝ ասելով, որ չնայած եզրութաբանական անհստակությանը, տեսաբանների կողմից ընդունված երկու հիմնական նախատիպային ռազմավարությունները բառացի (literal) և ազատ (free) թարգմանություններն են, որոնցից առաջինը «կենտրոնանում է բառային մակարդակի վրա, այնինչ մյուսը դուրս է գալիս բառային մակարդակից և կարևորում է այնպիսի տեքստի ստեղծումը, որը բնական կինչի թիրախ լեզվով»: Նա նշում է նաև, որ այս երկու ռազմավարությունները տարբեր տեսաբանների կողմից ներկայացվել են տարբեր հակադրությունների շրջանակներում, օրինակ՝ ուղիղ և անուղղակի թարգմանություն (direct and oblique translation (Vinay & Darbelnet)), իմաստային թարգմանություն և հաղորդակցական թարգմանություն (semantic and communicative translation (Newmark)), օտարացում և տեղայնացում (foreignization and domestication (Venuti)), բացահայտ կամ քողարկված թարգմանություն (overt and covert translation (House)) և այլն (Sun 2012: 1):

Վերոնշյալ հակադրություններից պարզ է դառնում, որ տեքստի բովանդակությունը և ձևային (լեզվական) արտահայտությունը վերջինիս այն երկու հիմնական արժեքային բևեռներն են, որոնցից մեկը կամ մյուսը պետք է առավելապես համարժեքորեն փոխադրվի թիրախ տեքստ: Սա, իհարկե, չի նշանակում, որ մի տիրույթի աննահանջ փոխադրումը կարող է հանգեցնել թարգմանության մեջ մյուսի կատարյալ կորստի: Թարգմանչի ընդհանրական նպատակն, ամեն դեպքում, տեքստի՝ որպես մեկ բովանդակային և լեզվական միավորի համարժեք վերարտադրումն է թիրախ լեզվամշակույթում: Հետևաբար, որոշակի համարժեքությունն անխուսափելի է (Փիմը սա անվանում է «բնական համարժեքություն» (Pym 2010)): Սակայն թարգմանության կատարման բուն նպատակից, աղբյուր տեքստի ենթադրած պահանջներից, և մի շարք այլ հանգամանքներից ելնելով՝ թարգմանիչն առաջնայնություն է տալիս երկու տիրույթներից մեկին՝ որպես ռազմավարություն որդեգրելով դրա համարժեք փոխադրումը: Ընտրված ռազմավարությունն էլ

կկանխորոշի, թե ինչ հարաբերության մեջ կգտնվի թարգմանվածքն աղբյուր տեքստի հետ, և թե ինչ գործառույթ կամ դեր կիրականացնի թիրախ տեքստը թիրախ լեզվամշակույթում:

Այս կարևոր դերակատարությունների հիման վրա էլ առանձնացվում է երկու հիմնական տիպի թարգմանություն՝ *բացահայտ թարգմանություն* (overt translation) և *ոչ բացահայտ կամ քողարկված թարգմանություն* (covert translation) (House 1981, 1997, 2010, 2015): Բացահայտ թարգմանությունը, Հաուզի սահմանմամբ, «ակնհայտորեն որպես թարգմանություն որակվողն է: Բացահայտ թարգմանության դեպքում լեզուն կարող է միախառնված լինել բնագրից վերցրած օտար միավորներով, որը կարելի է կոչել «ներթափանցում»: Բացահայտ թարգմանությունը ներդրված է մի նոր խոսքային իրադարձության մեջ՝ թիրախ մշակույթի միջակայքում»: Եվ «այս դեպքում գործառույթային համարժեքություն ձեռք է բերվում միայն երկրորդական մակարդակում, որը բնույթով անմիջական և առաջնային համարժեքություն չէ»: Նա շարունակում է՝ ասելով, որ «Իսկական մշակութային փոխադրում տեղի է ունենում իրադրությունների շփման արդյունքում, որի ժամանակ աղբյուր լեզվամշակույթի ազդեցության ներքո տեղի է ունենում շեղում թիրախ լեզվամշակույթի նորմերից: Լեզվական-մշակութային փոխադրումը շատ հաճախ աչքի է ընկնում թարգմանության՝ թիրախ լեզվի նորմերից նկատելի շեղմամբ (House 2010: 245):

Պատկերը բոլորովին այլ է ոչ բացահայտ թարգմանության դեպքում: Թիրախ լեզվամշակույթում այն ունի երկրորդ բնագրի կարգավիճակ: «Թարգմանությունը համարվում է ոչ բացահայտ, երբ գործաբանորեն չի ճանաչվում որպես թարգմանություն, այլ ընդունվում է որպես ինքնուրույնաբար ստեղծված միավոր: Այս դեպքում կարելի է ասել, որ բնագիրն ու վերջինիս թարգմանությունը իրենց արտահայտման լեզուներում մեկը մյուսից աննշան կերպով են միայն տարբերվում»: Այս տիպի թարգմանությունների թվին են պատկանում հիմնականում գիտական և լրագրողական տեքստերի, ուղեցույցերի, շահագործման ձեռնարկների թարգմանությունը և այլն: Ոչ բացահայտ թարգմանությունը «բավականին բնականորեն է ընդունվում թիրախ լեզվամշակույթում՝ առանց բնագրի խոսույթային առանձնահատկությունների ակտիվացման» (House 2010: 245):

Թարգմանական ուղղակարության և թարգմանական արդյունքի միջև կապը խիստ էական է և որոշիչ այն պատճառով, որ թարգմանության համար ընտրված ուղղակարությունից շեղումը հանգեցնում է լեզվագործաբանորեն անհամասեռ և անհամամասն թիրախ տեքստի: Բանն այն է, որ թարգմանչի կողմից որդեգրած ուղղակարությունն էլ հենց որոշում է թարգմանչի լեզվական վարքը թարգմանության ողջ գործընթացում: Թարգմանության ընթացքում թարգմանիչն, ըստ էության, գործարկում է մի շարք թարգմանական հնարներ (procedures, techniques), որոնց միջոցով աղբյուր տեքստը ենթարկվում է թիրախ տեքստ լեզվական փոխադրման: Թարգմանության ընթացքում որդեգրած թարգմանական ուղղակարությունից շեղումը հանգեցնում է հնարների սխալ գործածության, սա էլ իր հերթին թիրախ տեքստում թարգմանական սխալների առաջացման:

Սխալը, ինչպես նկատում է Գ. Հանսենը, սովորաբար ենթադրում է, որ «ինչ-որ բան սխալ է արված»: Նա նշում է, որ «եթե թարգմանությունը աղբյուր տեքստի հիման վրա թիրախ տեքստի ստացումն է, ապա թարգմանական սխալը ծագում է երկու տեքստերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունից»: «Տեքստային սխալները՝ անկախ նրանից, թե որ տեքստում են դրանք տեղ գտել՝ բնագրում, թե թարգմանվածքում, կարող են լինել ոճական, գործաբանական, ուղղագրական, իմաստային և այլն» (Hansen 2010: 385): Այնինչ թարգմանական սխալն այն սխալն է, որը պայմանավորված է աղբյուր տեքստի թյուրըմբռնմամբ, ինչի արդյունքում չի հաղորդվում այն իմաստը, որն արտահայտված է աղբյուր տեքստում, կամ եզրութաբանական սխալները և այլն: Դրանց շարքում Հանսենն առանձնացնում է մշակութային, գործաբանական, տեքստային-լեզվաբանական, իմաստային, շարահյուսական, ոճական սխալները, որոնք կարող են ծագել աղբյուր տեքստի լեզվական փոխադրման, այսինքն՝ թիրախ տեքստի ստացման արդյունքում:

Նա արդարացիորեն նշում է նաև, որ թարգմանական սխալի մեկնությունը կախված է այն թարգմանական տեսությունից և նորմերից, որոնց շրջանակներում էլ դիտարկվում է թարգմանվածքը: «Սկոպոսի» տեսության կամ մյուս ֆունկցիոնալիստական տեսությունների տեսանկյունից, օրինակ, թարգմանական սխալ կարող է համարվել թիրախ տեքստի կողմից աղբյուր տեքստի՝ աղբյուր մշակույթում

իրականացրած գործառույթը չպահպանելը: Նմանապես, համարժեքության, հատկապես լեզվաբանական համարժեքության վրա հիմնված տեսությունների շրջանակներում թարգմանական սխալ կարող են համարվել լեզվական արտահայտման անհամապատասխանություններն ու հակասությունները (Hansen 2010):

Թարգմանության համեմատաբար ավելի ժամանակակից ուղղություններից մեկում՝ մեքենական թարգմանության բնագավառում, թարգմանական սխալներ կարող են համարվել լեզվական, ոճական, իմաստային, գործաբանական, քերականական, ուղղագրական, շարահյուսական և այլ սխալները: Թ. Մաթսուզակին մեքենական թարգմանության ոլորտում հանդիպող թարգմանական սխալների բավականին ընդհանրական դասակարգում է ներկայացնում՝ դիտարկելով սխալ բառերը, սխալ շարահյուսությունը, բացակայող բառերը, ոչ ճիշտ քերականական և իմաստային կառույցները որպես բնորոշ, առավել հաճախ տեղ գտնող թարգմանական սխալներ (Matsuzaki et al 2016: 2772):

Մենք հակված ենք թարգմանական համարելու այն սխալները, որոնք ուղղակիորեն կապված են աղբյուր և թիրախ տեքստերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերության հետ, այսինքն՝ այն մշակութային, գործաբանական, և տեքստային-լեզվական սխալները, որոնք ի հայտ են գալիս իմաստի փոխադրման գործընթացում, այլ ոչ թե տեքստում հանդիպող այն լեզվաոճական կամ ուղղագրական սխալները, որոնք հատուկ են թիրախ լեզվամշակույթին և առնչություն չունեն թարգմանության բուն գործընթացի հետ: Թարգմանական սխալները համարելով «թարգմանական բացեր», Գասպարյանը նշում է, որ դրանք «...թարգմանական տեքստում տեղ գտած անհասկանալի, անընդունելի, անարդյունավետ հատվածներն են, որոնք հնարավոր է բացահայտել ու արժևորել՝ տեքստը դիտարկելով հասկանալի/անհասկանալի, ճշմարիտ/սխալ, արդյունավետ/անարդյունավետ երկատումների միջոցով» (Գասպարյան 2008: 78-79):

Հետևաբար, կարևոր է նշել, որ թարգմանական սխալները ոչ այնքան ի ցույց են դնում բնագրի և թարգմանության միջև գոյություն ունեցող լեզվական արտահայտման տարբերությունները, այլ մատնանշում են բովանդակային, իմաստային և

հաղորդակցական անհամարժեքություններն ու շեղումները, որոնք տեղ են գտել թիրախ տեքստում: Հետևաբար, թարգմանական սխալների բացահայտումն ու բազմակողմանի քննությունը պետք է լինի թարգմանության վերլուծության և վերջինիս որակի գնահատման անբաժանելի մաս:

Թարգմանության որակի գնահատման համար առաջադրվել են ամենատարբեր մոտեցումներ և կադապարներ, սակայն ինչպես համարժեքության երևույթի մասին դատողությունների և տեսությունների դեպքում, այնպես էլ այստեղ, դրանք հատվածական են և կրկին հենվում են մի որևէ եզակի առանձնահատկության կամ հայեցակերպի վրա: Ինչպես նշում է Փ. Տի Թույը, «թարգմանությունների (որպես արդյունքի) և թարգմանության (որպես գործընթացի) մասին քննարկումներում որակի հարցը միշտ եղել է գլխավոր առաջնահերթություն: Շարունակաբար ասվել է, որ թարգմանական բացառապես բոլոր գործողությունների հիմնանպատակն է ստեղծել լավ թարգմանություն կամ վերարտադրել լավ թիրախ տեքստ»: Շարունակելով միտքը՝ նա նշում է, որ «...կախված գնահատման նպատակից և որակի գնահատման տեսական շրջանակից՝ կիրառվող չափանիշները կարող են տարբեր լինել» (Thi Thuy 2013: 56): Հատկանշական է նրա կողմից Հաուզի սահմանման մեջբերումը, որի համաձայն «թարգմանության որակի գնահատումը ենթադրում է թարգմանության մի ամբողջ տեսություն: Իսկ թարգմանության հետ կապված տարբեր պատկերացումները հանգեցնում են թարգմանության որակի վերաբերյալ տարբեր պատկերացումների՝ առաջ բերելով գնահատման ամենատարբեր մեթոդներ (տե՛ս Schaffner 1997: 1, 56-57): Չնայած այն հանգամանքին, որ սկսած ամենահին՝ սուրբյեկտիվ գնահատողական չափանիշներից (Թայթլեր, Դրայդեն) մինչև ամենանոր գնահատման կադապարները (օր.՝ Toury 1995, Nord 2015, Newmark 1988, Steiner 1998, House 2015, Volkova 2014 և այլն), թարգմանության որակի գնահատման չափանիշները ենթարկվել են մեթոդաբանական համալրման և հստակեցման, մի խնդիր, այնուամենայնիվ, կարծես թե մնում է անհաղթահարելի:

Բանն այն է, որ թարգմանությունը, ինչպես և լեզուն ընդհանրապես, ճշգրիտ երևույթ չէ, (ինչպես, օրինակ՝ մաթեմատիկական հաշվարկները կամ ֆիզիկայի օրենքները), և ստանալ մի այնպիսի գնահատման մոդել, որը գործարկելի կլինի

բացառապես բոլոր տեսակի տեքստերի համար, խիստ անհնար է թվում: Հենց թարգմանության ոչ արքիոմատիկ բնույթի պատճառով էլ դժվար է առաջադրել բացարձակ, տարաժամանակայնորեն կիրառելի հրահանգներ կամ որակի գնահատման չափանիշներ, որոնք կիրառական և պատշաճ կլինեն անխտիր բոլոր տիպի տեքստերի համար և առանց բացառությունների կանդիդատան բոլոր տեքստերին հատուկ բոլոր լեզվագործաբանական առանձնահատկություններին: Բացի այդ, լեզվական միավորի թարգմանությունը կիրառական է միայն որոշակի ժամանահատվածի սահմաններում և մշակութային զարգացումների և կանոնակարգային փոփոխությունների արդյունքում թարգմանությունը կարող է ժամանակի ընթացքում հնանալ և դուրս գալ գործածությունից:

Հետևաբար, թարգմանության գնահատման կաղապարը, որը հիմնվում է միայն մեկ չափանիշի վրա, չի կարող համարվել բավարար և ամբողջական և ապահովել թարգմանվածքի օբյեկտիվ ու հիմնավորված գնահատումը: Այդ իսկ պատճառով թարգմանության միջգիտակարգային և բազմակողմանի քննությունը թարգմանության հետազոտման մեթոդաբանության և վերջինիս որակի գնահատման հիմնասյունն է: Վերլուծության նման մոտեցումը պարտադիր նախապայման է ցանկացած տիպի տեքստի նկարագրական վերլուծության համար, սակայն ընտրված միջգիտակարգային հայեցակերպերն ու վերլուծական տեսանկյունները կարող են էականորեն տարբերվել՝ կախված տեքստի ժանրից և տիպից, լեզվական յուրահատկություններից, ինչպես նաև դրա գործաբանական առանձնահատկություններից: Իրավական տեքստի թարգմանության առնչությունը եզրութաբանության հետ, անշուշտ, ավելի ակնհայտ և էական է, քան, օրինակ՝ գրական տեքստինը: Նմանապես՝ լեզվամշակութային տեսանկյունից խիստ յուրահատուկ գրական տեքստի թարգմանությունն, իհարկե, առավել մեծ առնչություն ունի թարգմանական սխալների և նորմերի հետ, քան օրինակ՝ գիտական տեքստի թարգմանությունը, որը լի է եզրույթներով: Հետևաբար, տեքստի թարգմանության վերլուծության գործում պետք է դիտարկվեն նաև վերջինիս լեզվագործաբանական առանձնահատկությունները, այսինքն՝ թե մարդկային գործունեության ո՞ր տիրույթի կամ տիրույթների հետ է այն առնչվում և թե լեզվական

արտահայտման ի՞նչ յուրահատկություններ է ենթադրում նման խոսույթային/ժանրային պատկանելությունը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ տեքստի՝ որպես մեկ ամբողջության փոխադրելի արժեքը ձևավորող առանձնահատկությունները բազմաթիվ են և բազմաբնույթ: Ըստ որում՝ դրանք կարող են էապես տարբեր լինել յուրաքանչյուր տեքստի համար: Նույնպես և թարգմանության որակը, որը սկզբունքորեն կապված է համարժեքության ապահովման հետ, պայմանավորված է բազմաքանակ և տարաբնույթ գործոններով: Եվ եթե թարգմանական արժեքի ձևավորման, ինչպես և որակի ապահովման գործում դեր են խաղում նմանատիպ մեծ թվով գործոններ, ապա վերջինիս գնահատման հարցում ևս այդ գործոններից յուրաքանչյուրի դիտարկումը պետք է լինի պարտադիր նախապայման: Հիմնվելով այն հանգամանքի վրա, որ թարգմանության որակի գնահատման երբևէ առաջադրված կաղապարները կենտրոնանում են միայն որևէ կոնկրետ մոտեցման վրա և հաշվի են առնում վերջինիս մի քանի առանձնահատկություններ և հայեցակերպեր միայն, կարելի է ասել, որ թարգմանության ողջ գործընթացի, բնագրի և թարգմանվածքի բովանդակային և լեզվական արտահայտման տիրույթների և դրանց առնչվող այլևայլ գործոնների (օր.՝ բնագիր և թարգմանված տեքստի հաղորդակցական գործառույթի, դրանց առկայացման լեզվամշակույթների, լսարանի հասարակական-մշակութային առանձնահատկությունների և այլն) բազմահայեցակերպային նկարագրական-զուգահրական վերլուծությունը միայն կարող է երաշխավորել թարգմանության որակի հնարավորինս օբյեկտիվ և համակողմանի գնահատումը:

Վերոնշյալ հայեցակերպերի համալիր դիտարկումն ու հաշվառումը խիստ կարևոր են հենց մտաշահարկային գործառույթ իրականացնող լեզվական կառույցների թարգմանության քննության գործում: Քաղաքական մտաշահարկումը՝ որպես իրավականորեն անընդունելի խոսույթային պրակտիկա, իրագործվում էր որոշակի հասարակական-մշակութային պայմաններում լեզվի այլափոխված և շահադիտականորեն կանխամտածված կիրառությամբ: Իսկ լեզվի՝ որպես հաղորդակցության միջոցի նմանատիպ կիրառությունն էլ ենթադրում էր առկայացման հստակ գործաբանական առանձնահատկություններ, որոնց անհամարժեք

փոխադրումը կամ չպահպանումը թարգմանության գործընթացում կարող էր հանգեցնել մտաշահարկային տեքստի բուն հաղորդակցական նշակության կորստի:

Հետևաբար, Ջ. Օրուելի «1984» վեպի դեպքում ևս նմանատիպ լեզվական կառույցների համարժեք թարգմանությունը կարևորագույն նախապայման է և պարտադիր՝ վեպի հակամտաշահարկային ուղերձի հաջող փոխանցման համար՝ հաշվի առնելով, որ սույն գրական տեքստի հիմնական հաղորդակցական նպատակը մտաշահարկման համատարած բնույթի և կործանիչ ազդեցության մասին իրազեկելն է:

**ԳԼՈՒԽ III. ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵՂՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ «1984»-Ի
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

Ջ. Օրուելի «1984» վեպը, որը անգլիական գրականության նշանավոր գործերից է, հայտնի է իր դիպուկ, ճշգրիտ և նախազգուշացնող քաղաքական ուղերձով: Այս վեպի միջոցով Օրուելը ոչ միայն կարողացել է ներթափանցել քաղաքական խոսույթի փոթորկուն ասպարեզ, այլև ցնցել իր, ինչպես նաև գալիք ժամանակների քաղաքական կամակարգերի ու հասարակարգերի հիմքերը: Մի շարք սերունդների համար վեպը ծառայել է որպես ամբողջատիրության և գերիշխանության ահարկու հետևանքների մասին վկայող մարգարեական խոսք և լուսավորող հայտնություն:

Վեպի հայերեն թարգմանվածքը՝ վերահրատարակված աննշան ուղղումներով միայն, այս պահին «1984»-ի միակ հասանելի հայերեն տարբերակն է: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ խորհրդային տարածքում վեպն առաջին անգամ հանրության համար հասանելի է դարձել 1988 թվականին, այնինչ վեպի բնագիր տարբերակը լույս է տեսել դեռևս 1949 թվականին: Այս նշանակալի հապաղումն, իհարկե, պայմանավորված է խորհրդային հասարակարգի բռնատիրական իշխանությամբ և վեպի հակաամբողջատիրական ուղերձով, որի պատճառով էլ վեպը տարբեր կրկներում պարբերաբար արգելվել է: Հետևաբար, վեպի հայերեն թարգմանվածքը, որն էլ մեր թարգմանական հետազոտության օբյեկտն է, անկասկած արժեքավոր և երկար սպասված հավելում է համաշխարհային գրականության հայերեն թարգմանությունների մեծածավալ ժառանգությանը:

Հենվելով լեզվաբանական դետերմինիզմի գաղափարի վրա՝ վեպում Օրուելը քաղաքական մտաշահարկումը հասցրել է իր ծայրագույն հոռետեսական բարձրակետին՝ լեզվական կողմի միջոցով իրականության և մտքի աղճատմանը: Իր իսկ ստեղծած նորխոսքը, որն արժանացել է մեծածավալ քննության, ինչպես և քննադատության, անկրկնելի լեզվական կառույց է, որը՝ թեև անհնարին և անհեթեթ է թվում անգլերենի բառակազմության տեսանկյունից, մեծ հետաքրքրություն և արժեք է ներկայացնում թարգմանական տեսակետից:

Քանի որ նորխոսքը հնարված գեղարվեստական-քաղաքական արհեստական լեզու (conlang) է՝ կազմված անգլերենի լեզվական կանոնների միտումնավոր այլափոխման միջոցով (ի տարբերություն այլ կոնլանգների, որոնք, որպես կանոն, չեն ստեղծվում արդեն իսկ գոյություն ունեցող որևէ լեզվի հենքի վրա և հետևաբար չեն կարող, որպես ինքնուրույն համակարգ, միջլեզվականորեն փոխադրվել), դրա թարգմանությունն, ըստ էության, ենթադրում է մի ողջ լեզվական կողի թարգմանություն և անհրաժեշտ է դարձնում վերջինիս վերստեղծումը և վերածնավորումը թիրախ լեզվի համակարգի հենքի վրա՝ ենթադրելով թարգմանչական մեծ ստեղծագործականություն:

Այն, որպես ինքնուրույն լեզվահամակարգ, վեպում արտահայտված է բառային միավորների միջոցով, որոնց համարժեք վերարտադրությունը պարտադիր նախապայման է հատկապես այն պատճառով, որ դրանք իրենց մտաշահարկային գործառույթն իրականացնում են կազմության պարզագույն և այլափոխված լեզվաբանական սկզբունքների շնորհիվ: Հետևաբար, դրանց չպահպանումը կհանգեցնեք վերջիններիս ողջ գործաբանական-հաղորդակցական արժեքի կորստին: Տարբերվելով կոնկրետ լեզվով արտահայտված կապակցված տեքստերի թարգմանությունից՝ նորխոսքի՝ որպես ուրույն լեզվահամակարգի թարգմանությունը իր «տարօրինակ» և «ոչ ճիշտ» բառերով, «ամենակարող» քերականությամբ ու տարահունչ առոգանությամբ, մեծ ուշադրություն է գրավում հատկապես թարգմանաբանական տեսանկյունից այն պատճառով, որ այս դժվարամատչելի նախածեղնությունը ենթադրում է մեծ ստեղծագործական միտք և թարգմանչական հմտություն՝ ապահովելու հատկապես գործաբանական իմաստի առավելագույն համարժեքություն բնագրի հետ:

Նորխոսքի թարգմանության որակի վերլուծության նպատակով նախ ձևավորել ենք վերհանված շուրջ 90 նորխոսքային բառային միավորից և դրանց թարգմանություններից բաղկացած բառային կորպուս, որն էլ եղել է մեր նկարագրական-զուգահրական վերլուծության հիմնական բազան: Բնագիր միավորները և դրանց թարգմանությունները համակարգվել են և ենթարկվել զուգահրման՝ որակական դիտարկման նպատակով: (տե՛ս Հավելված 1)

Վերջիններիս մտաշահարկային իմաստագործաբանական առանձնահատկությունների քննության հիման վրա (տե՛ս Գլուխ 1), այնուհետև, փորձել ենք դիտարկել նաև դրանց լեզվական արտահայտման ամենատարբեր հայեցակերպերը: Այս նախաձեռնության շրջանակում ուշադրության են արժանացել, օրինակ՝ ստեղծված բառերի խոսքամասային պատկանելությունը, դրանց ստեղծման բառակազմական և ձևաբանական յուրահատկությունները, դրանց բառիմաստային պատճառաբանվածությունը և վերջինիս կապը դրանցով արտահայտված գործաբանական իմաստների հետ, ինչպես նաև նշանային և ուղղագրական այնպիսի յուրահատկություններ, ինչպիսիք են, օրինակ՝ բառերի, հատուկ անունների կամ թվականների գրելաձևը, նորխոսքային տեքստերի կետադրությունը, ներտեքստային կապակցվածության գրային արտահայտությունը, այլ կերպ ասած՝ ցանկացած ձևային յուրահատկություն, որն ուներ կամ կարող էր ունենալ մտաշահարկային նշանակություն:

Լեզվական արտահայտման այս առանձնահատկությունների փոխադրումը թիրախ լեզու դարձել է մեր հետագա վերլուծության և քննության առարկան: Բնագրի բառային միավորների լեզվիմաստային արժեքի վերհանումից հետո փորձել ենք նույն տրամաբանությամբ վեր հանել նաև դրանց հայերեն թարգմանությունների համապատասխան առանձնահատկությունները՝ տեսնելու, թե ինչ բնույթի միջլեզվական փոխադրման արդյունքում և թարգմանական ինչ հնարների կիրառությամբ են դրանք ստացվել: Այս դեպքում ուշադրություն ենք դարձրել նրան, թե ինչ տիպի միջլեզվական փոխադրման են ենթարկվել բնագրի բառային միավորները, և թե ինչ լեզվական արտահայտման և իմաստային առանձնահատկություններ ունեն դրանց թարգմանությունները՝ սրանով սահմանելով նաև վերջիններիս բառիմաստն ու գործաբանական արժեքը, որն էլ թարգմանության գնահատման գործում դրվելու է հակադրության բնագրի միավորների բառիմաստների և գործաբանական արժեքների հետ:

Բնագրի բառերի և դրանց թարգմանությունների բառիմաստների և գործաբանական արժեքների համեմատության հիման վրա փորձել ենք գնահատել կատարված թարգմանությունները՝ տեսնելու, թե որքանով են համարժեք փոխադրվել

բնագրի նորխոսքային միավորները թիրախ լեզվամշակույթ, և թե դրանց թարգմանություններն արդյոք արտահայտում են այն նույն մտաշահարկային գործաբանական իմաստները, որոնք արտահայտում են բնագրային բառերը աղբյուր լեզվամշակույթում:

Հաշվի առնելով նորխոսքի մտաշահարկային գործառույթը, դրա արտահայտման ողջ լեզվագործաբանական առանձնահատկությունները, աղբյուր և թիրախ լսարանների լեզվամշակութային յուրահատկությունները, աղբյուր և թիրախ տեքստերի առկայացման հասարակական-քաղաքական համատեքստերը, ինչպես նաև մի շարք այլ արտալեզվական գործոններ՝ հայտնաբերված անհամարժեքություններից մի քանիսի համար փորձել ենք նաև առաջադրել թարգմանության համարժեք տարբերակներ:

3.1 «ՆՈՐԽՈՍՔԻ» ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «1984» ՎԵՊԻ ԲՆԱԳՐՈՒՄ

Նորխոսքի հայերեն թարգմանության գործում կիրառված թարգմանական հնարների նախընտրության արդարացիությունը հնարավորինս ճշգրիտ ներկայացնելու համար նախ հարկ է հասկանալ բնագրում նորխոսքի լեզվական արտահայտման առանձնահատկությունները:

Նորխոսքի բառային միավորները տեքստում հանդիպում են նախ որպես մի շարք գաղափարների, երևույթների կամ առարկաների նորխոսքային համարժեքներ, այսինքն որպես առանձին բառային միավորներ.

*“The Ministry of Truth – **Minitrue**, in Newspeak – was startlingly different from any other object in sight.”* (Orwell 2012: 6)

*“All children had to be begotten by artificial insemination (**artsem**, it was called in Newspeak),”* (Orwell 2012: 76)

*“This demands a continuous alteration of the past, made possible by the system of thought which really embraces all the rest and which is known in Newspeak as **doublethink**.”* (Orwell 2012: 242)

կամ ամբողջապես նորխոսքով արտահայտված պարբերություններում, որոնցում որպես ամբողջական տեքստային միավորներ ներկայանալով՝ այս հատվածներում ավելի տեսանելի են դառնում նորխոսքի շարահյուսական առանձնահատկությունները.

*times 17.3.84 bb speech **malreported** africa rectify*

times 19.12.83 forecasts 3 yp 4th quarter 83 misprints verify current issue

*times 14.2.84 **miniplenty malquoted** chocolate rectify*

*times 3.12.83 reporting bb **dayorder doubleplusungood** refs **unpersons** rewrite **fullwise upsub antefiling*** (Orwell 2012: 45),

և

*“Items one comma five comma seven approved **fullwise** stop suggestion contained item six **doubleplus** ridiculous **verging crimethink** cancel stop **unproceed constructionwise antegetting plusfull** estimates machinery **overheads** stop end message”* (Orwell 2012: 195)

Նորխոսքով արտահայտված վերոնշյալ պարբերություններում կարելի է դիտարկել մտաշահարկային գործառույթ իրականացնող մի շարք ուղղագրական և շարահյուսական օրինաչափություններ, որոնք նույն կերպով պահպանվել են նաև թիրախ տեքստում:

Առաջին օրինակում, ինչպես երևում է, բոլոր թվականներն արտահայտված են թվանշաններով (օր.՝ «17.3.84», կամ «4th»), այնինչ երկրորդում դրանք ներկայացված են իրենց բառային արտահայտմամբ («one comma five comma seven»): Սույն անհամապատասխանությունը կարելի է մեկնել կա՛մ որպես հեղինակի կողմից թույլ տված բացթողում՝ թվականների արտահայտման համար մեկ հստակ կանոն սահմանելիս (ինչպես առանձնացված մյուս բոլոր լեզվական սկզբունքները, որոնք ներկայացված են վեպի «Նորխոսքի սկզբունքները» գլխում (էջ 343-355)), որի արդյունքում էլ նկատելի է ձևային արտահայտման անհետևողականություն, կա՛մ էլ որպես երկու տարբեր հնարավոր գրելաձևեր, որոնք կարող են համապատասխանաբար կիրառվել՝ կախված ձևային և տեքստային պահանջներից:

Հետաքրքիր է նաև լեզվի պարզեցման միտմամբ և այլափոխման արդյունքում նորխոսքային մի քանի բառային միավորի համար սահմանված ուղղագրությունը: Մասնավորապես **miniluv** և **INGSOC** բառերի դեպքում, **love** բառը և **English** բառի առաջին վանկը գրված են իրենց հնչյունային տառադարձմամբ, այլ ոչ թե ընդունված ուղղագրությամբ. այստեղից՝ **luv** և **ING**: Սրանից պարզ է դառնում, որ հեղինակը հատուկ ուշադրություն է հատկացրել նաև գրի կամ խոսքի գրանշանային արտահայտման, մասնավորապես՝ ուղղագրության ճանաչողական-ընկալական գործառույթին: Հետևաբար, լեզվական միջոցների սահմանափակման մնացած սկզբունքներին զուգահեռ նաև ուղղագրության պարզեցման սկզբունքը, որպես մտաշահարկային և միտքը սահմանափակող միջոց, Օրուելը կիրարկել է վերոնշյալ

երկու նորխոսքային բառային միավորներում միայն՝ ի ցույց դնելով մոտեցման անհետևողականություն մնացած բառերի դեպքում: Ուղղագրական պարզեցման այս կանոնը ինչ-ինչ պատճառներով չի տարածվել նորխոսքի մնացած բառերի վրա, որոնք էլ գրված են անգլերենի ավանդական ուղղագրության համաձայն՝ հավանաբար ճանաչելիության ապահովման նպատակով, օր.՝ *goodwise, Minitrue, ownlife*:

Նորխոսքի սույն պարբերությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ երկու տեքստն էլ զուրկ են կետադրական նշաններից (դրանցում կետերն ու «ստորակետ» բառը գործածված են, իհարկե, թվային ինդեքսավորման, այլ ոչ թե կետադրության նպատակով), և որ բոլոր բառերը՝ անգամ հատուկ անունները, գրված են փոքրատառերով: Կապակցված խոսքում ամբողջությամբ օտարելով կետադրությունն ու մեծատառերի կիրառությունը, որն, իհարկե, ենթադրում է շարահյուսական հարաբերությունների և տեքստային կապակցվածության, իսկ բանավոր խոսքում, զուգահեռաբար, առոգանության և արտասանական արտահայտման բացակայություն, Օրուելն, ըստ էության, մատնանշում է վերջիններիս իրականացրած կարևոր մտային-ճանաչողական գործառույթը, որի բացակայության դեպքում տեղի է ունենում մտքի և իրականության ըմբռնման շահարկում:

Նորխոսքը, փաստորեն, որպես մարդկային միտքը սահմանափակող լեզու, իր մտաշահարկային գործառույթն իրականացնում է ոչ միայն խիստ սահմանափակ բառապաշարի, այլև պարզագույն շարահյուսության և միատոն առոգանության միջոցով՝ ապահովելով բացառապես միակերպ (monomodal), մտքի և մտածողության կատարյալ կառավարում ենթադրող իմաստային շրջանակ:

Նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում պահպանվել են նաև դրանց ձևային արտահայտման որոշ, կարևոր գործաբանական արժեք ունեցող նշանային յուրահատկություններ: Ամբողջությամբ մեծատառերով գրված **INGSOC** բառի և **B.B.** (*Big Brother*) հապավման թարգմանության դեպքում, օրինակ, (որոնք իրենց կիրառության համատեքստում ունեին առանցքային քարոզչական նշանակություն, այդ իսկ պատճառով էլ գրված են մեծատառերով) պահպանվել է դրանց մեծատառով գրությունը՝ **ԱՆԳՍՈՑ** և **Մ. Ե.**: Ինչպես արդեն նշել ենք, նմանատիպ նշանային յուրահատկությունները՝ որպես մտաշահարկային ուղերձի ուժնացված տեսողական

ընկալման միջոցներ, ընթերցողի վրա կարող են ուժեղ, հաճախ չգիտակցված հոգեբանական ազդեցություն ունենալ և համարվում են քարոզչության և գովազդի գլխավոր գործիքներ (van Dijk 2003, 2006, Chilton 2004): Իրենց իրականացրած մտաշահարկային գործառույթի պատճառով էլ սույն նշանային առանձնահատկությունների պահպանումը նորխոսքի թարգմանության գործում խիստ կարևոր է:

Նորխոսքի բառային միավորների լեզվական առանձնահատկությունների մեր ընդհանուր դիտարկման շնորհիվ (տե՛ս Հավելված 1) պարզ դարձավ, որ նորխոսքում գոյություն ունեն կազմությամբ թե՛ պարզ (**stop, item, end, message, cancel, speech, estimates, verify, rectify, etc.**), թե՛ ածանցավոր (**fullwise, antefiling, unperson, unproceed, constructionwise, goodwise, etc.**), թե՛ բարդ (**facecrime, oldthink, goodthink, dayorder, duckspeak, plusfull, thinkpol, bellyfeel, joycamp, prolefeed, etc.**), և թե՛ բարդ ածանցավոր բառեր (**goodthinkwise, doubleplusgood, doubleplusungood, doublepluscold, goodthinkful, unbellyfeel, etc.**):

Նորխոսքի բոլոր պարզ բառերը, ինչպես նաև մի շարք ածանցավոր բառեր (օր.՝ **ridiculous, machinery, rewrite** և այլն) ակնհայտորեն անգլերենի, կամ, ինչպես տեքստում է ասվում՝ հինխոսքի բառային միավորներ են: Նորխոսքով արտահայտված վերոնշյալ պարբերություններում դրանց գործածությունը մի կողմից կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ դրանք իրոք հինխոսքի բառային միավորներ են, որոնք պետք է փոխարինվեին նորխոսքի միավորներով (քանի որ վեպում բռնատիրական իշխանությունը փորձեր էր անում նորխոսքը դարձնել միակ կիրառվող լեզուն՝ կատարելապես վերացնելով հինխոսքը, որը, սակայն, դեռևս կիրառության մեջ էր («2050 թվականին արդեն, գուցե և ավելի շուտ, հինխոսքն ամբողջությամբ դուրս կգա գործածությունից»¹¹ (Orwell 2012: 61)):

Մյուս կողմից, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորխոսքը՝ որպես արհեստական լեզու, ստեղծվել է անգլերենի լեզվական հենքի վրա, անգլերենում՝ հինխոսքում ամրագրված պարզ և մի քանի ածանցավոր բառերի առկայության առավել տրամաբանական բացատրություն կարող է լինել այն, որ դրանք իրոք

¹¹ Մեջբերման թարգմանությունը մերն է:

փոխառվել են հինխոսքից և ներմուծվել նորխոսք: Լինելով պարզ բառեր, որոնք հրահանգում էին որևէ հստակ գործողություն կամ ցույց էին տալիս հստակ առարկա կամ երևույթ՝ դրանք, ըստ էության, չէին կարող ենթադրել որևէ այլ՝ գաղափարախոսությանը հակադիր երկրորդական իմաստ այն պատճառով, որ կիրառության միակ համատեքստը կուսակցության մտաշահարկային գաղափարախոսությունն էր և վերջինիս կողմից ձևավորված աղճատված իրականությունը: Ըստ որում, այս բառային միավորները ծառայում են որպես ձևույթներ, որոնց հենքի վրա էլ ձևավորվել է նորխոսքի բառապաշարը: Իսկ նմանատիպ պարզ բառերի նորխոսքային համարժեքներ ստանալու համար Օրուելը ստիպված էր լինելու ստեղծել նոր ձևույթներ, որոնք անգլիախոս լեզվամշակույթում իմաստ չէին արտահայտի նշանակչի և վերջինիս արտահայտած առարկայի միջև գոյություն ունեցող իմաստային պատճառաբանվածության բացակայության պատճառով: Իսկ այդ դեպքում նորխոսքով ձևակերպված վերոնշյալ տեքստերը չէին ունենա որևէ հաղորդակցական իմաստ:

Նորխոսքի բառային միավորները, ստեղծված լինելով որոշակի լեզվաբանական օրինաչափությունների հիման վրա, ենթադրում են, իհարկե, մի շարք բառակազմական սկզբունքների կիրառություն:

Նորխոսքի բառային միավորների վերոնշյալ օրինակներից պարզ է դառնում, որ որպես բառակազմության հիմնական միջոցներ կիրառվել են բառաբարդումն ու ածանցումը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք ժամանակակից անգլերենի բառակազմության ամենաարդյունավետ միջոցներից են: Բառաբարդումը կիրառվել է մեծամասամբ գոյականների, իսկ բառաածանցումը՝ ածականների և մակբայների ստեղծման նպատակով: Եվ ինչպես նշում է հենց ինքը՝ հեղինակը, նորխոսքով արտահայտված բառերի մեծ մասը՝ հատկապես այն բառերը, որոնք արտահայտում էին գաղափարախոսական իմաստներ և իրականացնում էին հստակ մտաշահարկային գործառույթ, որպես կանոն, բարդ բառեր էին (Orwell 2012: 347):

Կառուցվածքային տեսանկյունից բարդ բառերին բնորոշ է անմիջական բաղադրիչների հստակորեն ամրագրված դասավորությունը: Բարդ բառի բառային իմաստը նախևառաջ ձևավորվում է առանձին բաղադրիչների բառային իմաստների

համադրումից: Սակայն այն մեծապես պայմանավորված է նաև անմիջական բաղադրիչների դասավորվածության և հերթականության կաղապարով, որի արդյունքում էլ բարդ բառերը կարող են դասակարգվել որոշակի բառիմաստային խմբերի մեջ, օր՝ բարդ բառեր, որոնք արտահայտում են գործողություն՝ նկարագրված կատարողի կողմից, բառեր, որոնք արտահայտում են օբյեկտներ՝ կոնկրետ նպատակի համար, և այլն: Ի դեպ, բարդ բառի գլխավոր բաղադրիչը, ինչպես նաև իմաստային կենտրոնը երկրորդ անմիջական բաղադրիչն է, և հենց նա էլ պայմանավորում է առաջին բաղադրիչի բառաքերականական և իմաստային յուրահատկությունները: Այն նաև սահմանում է բարդ բառի խոսքամասային պատկանելությունը (Ginzburg 1978: 144-46): Նորխոսքի միավորների կազմության դեպքում ևս, բարդ բառերի իմաստային կենտրոնը երկրորդ բաղադրիչն է, որն էլ՝ համաձայն անգլերենի բառակազմական նորմի, մոդիֆիկացվում է առաջին բաղադրիչի կողմից: Օրինակ՝

(facecrime= face+ crime (n+n=N)- the crime of exposing a facial expression other than expected, or

joycamp= joy+camp (n+n=N)- a camp of joy (joy meaning “forced labor” in the novel)

Բարդ գոյականների կազմության դեպքում, ըստ էության, բառակազմական նորմը չի խախտվել: Այն բարդ բառերը, որոնց երկրորդ անմիջական բաղադրիչը գոյական է, համաձայն անգլերենի բառակազմական նորմի, նույնպես բարդ գոյականներ են: **Doublethink** և **crimethink** բառերի դեպքում, սակայն, տեղի է ունեցել երկրորդ բաղադրիչի փոխարկում, ինչի արդյունքում **think** բառը, որը բայ է, հանդես է գալիս գոյականի դերում. հետևաբար, ամբողջ բարդ բառը գոյական է:

Բաղադրիչների ընտրության բառակազմական նորմերը խախտվել են սակայն ածականների և մակբայների կազմության ժամանակ, որոնք, իհարկե, ստացվել են ածանցման միջոցով: Ըստ հեղինակի մտադրության՝ նորխոսքում ածական և մակբայ ածանցավոր բարդ բառերը կազմվում էին միայն համապատասխանաբար **-ful** և **-wise** վերջածանցներով, ինչը և բառակազմական նորմի կամ օրինաչափության

սահմանափակում է և պայմանավորված է նորիսօքի մտաշահարկային լեզվագործարանական առանձնահատկություններով (Orwell 2012: 345):

Որոշ դեպքերում խախտվել է նաև **un-** ժխտական նախածանցի կիրառության բառակազմական նորմը: Անգլերենում **un-** նախածանցը ածականակերտ կամ բայակերտ է (օր.՝ **uninteresting, unfaithful, undo, unbreak**, և այլն), սակայն նորիսօքի որոշ կառույցների դեպքում այն դարձել է նաև գոյականակերտ՝ **unperson, unpersons**՝ ցույց տալով այն անձին կամ անձանց, ովքեր, ունենալով կուսակցության գաղափարախոսությանը և շահերին հակադիր մտածելակերպ, վերացվել էին:

3.2 ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԽՈՍՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թարգմանական հնարները (translation procedures), որոնք թարգմանաբանների կողմից ստացել են ամենատարբեր սահմանումներ ու դասակարգումներ, ըստ էության, մեթոդներ են, որոնք թարգմանիչը կիրառում է աղբյուր տեքստի լեզվական միավորը թիրախ տեքստ փոխադրելու նպատակով: Թարգմանական հնարը հաճախ նույնացվել է թարգմանական ռազմավարության հետ: Սակայն ինչպես նշում է Մանդեյը՝ «թարգմանական հնարը կիրառվում է տեքստի թարգմանության ընթացքում որոշակի պահի»՝ ի տարբերություն թարգմանական ռազմավարության, որը «թարգմանիչ ընդհանրական դիրքորոշումն է՝ «ազատ» կամ «բառացի» թարգմանությանը, աղբյուր կամ թիրախ տեքստին, օտարացմանը կամ տեղայնացմանը տրվելիք նախապատվության դրսևորմամբ» (Munday 2008: 86):

Նորխոսքի բառային միավորների միջլեզվական փոխադրման բնույթը որոշելիս՝ մենք հիմնվել ենք թարգմանական հնարների Վինեյի ու Դարբելնեյի դասակարգման վրա, որը մանրամասնորեն ներկայացված է աշխատանքի երկրորդ գլխում:

Կարևոր ենք համարում նշել, որ թարգմանական հնարների՝ Վինեյի ու Դարբելնեյի կողմից առաջադրված դասակարգումից բացի առաջադրվել են այլ դասակարգումներ ևս, որոնք համեմատաբար շատ ավելի ընդգրկուն են և դիտարկում են միջլեզվական փոխադրման ավելի մասնավոր դեպքեր (տե՛ս Գլուխ 2): Սակայն սույն դասակարգումները, որպես կանոն, փոխլրացնող են և համանման, և բոլորն էլ ուշադրություն են դարձնում միջլեզվական փոխադրման այնպիսի համընդհանուր մեթոդների, ինչպիսիք են, օրինակ, **պատճենումը, բառացի թարգմանությունը** կամ **փոխառությունը**:


Բացի այդ, թարգմանական հնարները կիրառվում են ոչ միայն բառային միավորների, այլև տեքստային ավելի խոշոր միավորների՝ արտահայտությունների և ամբողջական նախադասությունների մակարդակում միջլեզվամշակութային փոխադրման ժամանակ: Կարևոր հանգամանք է այն, որ լեզվական միավորի թարգմանության գործում կարող են կիրառվել մեկից ավելի թարգմանական հնարներ,

և վերջինիս լավագույն թարգմանական համարժեքը կարող է ստացվել մի քանի թարգմանական հնարների համադիր կիրառության արդյունքում:

Հետևաբար, նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում նկատելի միջլեզվական փոխադրումների դասակարգման գործընթացում շփոթմունքից խուսափելու համար, ինչպես նաև ելնելով նորխոսքային բառային միավորների թարգմանությունների մեր դիտարկման հիմնանպատակից, այն է՝ վերջիններիս մտաշահարկային լեզվագործաբանական առանձնահատկությունների համարժեք պահպանման խնդիրը դրանց թարգմանության արդյունքում, և այն հանգամանքից, որ այս դեպքում գործ ունենք հենց բառային միավորների թարգմանության հետ՝ նախապատվությունը տվել ենք թարգմանական հնարների Վինեի ու Դարբելնեի դասակարգմանը՝ համարելով այն բավարար թարգմանական լուծումների մեր դասակարգման համար:

Նորխոսքի բառային միավորների թարգմանությունների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ Վինեի և Դարբելնեի՝ թարգմանական հնարների շրջանակի կիրառմամբ նորխոսքի բառային միավորների հայերեն փոխադրման ժամանակ թարգմանիչն առավելապես դիմել է **պատճենման (calque), բառացի թարգմանության՝ մի շարք դեպքերում նաև խոսքամասային փոխատեղման զուգակցմամբ (literal translation+transposition), փոխառության (borrowing) և հարմարեցման (adaptation) թարգմանական հնարների կիրառությանը:**

Նորխոսքի բառերի մեծ մասի (շուրջ 65-70%) թարգմանության դեպքում դրանք պատճենվել են թիրախ լեզու, ինչի արդյունքում նույնությամբ պահպանվել են վերջիններիս բառակազմական կառույցները: Ըստ Վինեի ու Դարբելնեի՝ պատճենումը ենթադրում է աղբյուր տեքստի միավորի կառույցի փոխադրում թիրախ տեքստ (1995: 32-33, 2004: 129-130): Այլ սահամանումների համաձայն այն ենթադրում է լեզվական միավորի, մասնավորապես բառային միավորի այնպիսի փոխադրում, որի դեպքում թարգմանվում են բառի բաղադրիչները՝ թիրախ լեզվում նոր բառային միավոր ստանալու նպատակով: Եվ քանի որ նորխոսքի բառերի մեծ մասը բառաբարդման և բառաձանցման միջոցով ստեղծված բարդ, ածանցավոր, երբեմն նաև բարդ-ածանցավոր բառեր էին, դրանց թարգմանության գործում պատճենման կիրառությունը բնական ու տրամաբանական է: Դիտարկենք նմանատիպ թարգմանության մի քանի օրինակ.



(գծ. 2)

Պատճենման վերոնշյալ օրինակների դիտարկման հիման վրա կարելի է ընդգծել թարգմանության ընթացքում միջլեզվական փոխադրման մի քանի կարևոր լեզվական օրինաչափություն:

Նորխոսքի բարդ բառերը, որոնք մեծամասամբ կազմված էին երկու անմիջական բաղադրիչներից (հիմնականում *գոյական+գոյական*, *ածական+գոյական*), իրենց ուղղագրությամբ կցական բարդ բառեր էին՝ կազմված անմիջապես իրար կցված երկու կամ ավելի ձևույթներից, օր.՝ **basketball=basket+ball**, **rattlesnake=rattle+snake**՝ ի տարբերություն հարադիր, այսինքն՝ անջատ գրվող (օր.՝ **real estate**, **living room**, **soap opera**) և գծիկով գրվող (օր.՝ **ink-well**, **long-term**, **dry-clean**) բարդ բառերի:

Հայերենում՝ ի տարբերություն անգլերենի, կցական բառաբարդման գործընթացում ձևույթները առավել հաճախ իրար են միանում [ա] հոդակապի միջոցով (տե՛ս Էլոյան 1972: 81)՝ ի հակադրումն անհոդակապ և նախդրավոր բարդությունների, որոնք բառաբարդման համեմատաբար ավելի մասնավոր դեպքեր են: Նորխոսքի բարդ բառերի պատճենման արդյունքում թարգմանիչը, ըստ էության, հետևել է վերոնշյալ բառակազմական օրինաչափությանը և ստեղծել բառային միավորներ, որոնցում ձևույթները միմյանց կցվում են [ա] հոդակապի միջոցով, օր.՝ *crimethink-*

մտախանցագործություն, *crimestop*- հանցականգ, *blackwhite*- սևսպիտակ: Ընդ որում, թարգմանիչը պահպանել է նաև **[h]+[ա]=[ե]** հնչյունափոխությունը: Այսպես էլ ստեղծվել են, օրինակ՝ *goodsex-բարեսեքս*, *goodthinkwise-բարեմտորեն*, *goodthink-բարեմտածել*, *goodthinkful-բարեմիտ* թարգմանությունները:

Մտաշահարկային գործաբանական իմաստի համարժեք փոխադրման խնդրի վերաբերմամբ կարող ենք ասել, որ նորխոսքի մի քանի բառային միավորների՝ պատճենման միջոցով ստացված թարգմանությունները համարժեք կերպով են արտահայտում բնագրային նորխոսքի միավորների արտահայտած իմաստները: Այս դեպքում բնագրային նորխոսքի միավորների բառակազմական կառույցներն, ըստ էության, այնպես են պատճենվել թիրախ լեզու, որ թիրախ տեքստի բառային միավորների անմիջական բաղադրիչների իմաստային պատճառաբանվածության շնորհիվ կարելի է անմիջապես հասկանալ բառի արտահայտած իմաստը:

Այսպես. **INGSOC** սեղմանունը, որը ստացվել է «**English Socialism**» բառակապակցության անդամ բառերի վերջնավանկերի սղման (*apocope*) միջոցով, վեպում սոցիալիստական կուսակցության սերմանած բռնատիրական քաղաքական գաղափարախոսության կամ փիլիսոփայության նորխոսքային անվանումն է: Թարգմանվածքում բառը թարգմանվել է **ԱՆԳՍՈՑ**, որը **INGSOC** բառի տիպիկ կառուցվածքային պատճենն է՝ կրկին ստացված վերջնավանկի սղման միջոցով՝ «**Անգլիական սոցիալիզմ**» բառակապակցության բառերի վերջնավանկերի սղման արդյունքում:

*“Down at street level another poster, torn at one corner, flapped fitfully in the wind, alternately covering and uncovering the single word **INGSOC**.”* (Orwell 2012: 4)

*«Ներքևը՝ մայթեզրին, քամու տակ փողփողում էր անկյունը պոկած մի ցուցապաստառ՝ թաքցնելով ու բանալով իր միակ բառը՝ **ԱՆԳՍՈՑ**:»* (Օրուել 2012: 4)

Հանդիսանալով բնագրային բառային միավորի ուղղակի կառուցվածքային պատճենը՝ **ԱՆԳՍՈՑ** բառը համարժեքորեն արտահայտում է անգլերեն բնագրում բառի անվանած երևույթը:

Նմանատիպ միջլեզվական փոխադրման է ենթարկվել նաև **artsem** բառը, որն էլ ստացվել է «**artificial insemination**» բառակապակցության անդամ բառերի վերջնավանկերի սղման միջոցով:

*“All children were to be begotten by artificial insemination (**artsem**, it was called in Newspeak) and brought up in public institutions.”* (Orwell 2012: 76)

*«Երեխաները պետք է ստեղծվեին արհեստական բեղմնավորման ճանապարհով (**արհբեղմ**, այդպես էր կոչվում նորալեզվով) և դաստիարակվեին հանրային հաստատություններում»* (Օրուել 2012: 71)

Կուսակցության նպատակն էր զրկել ամուսինների միջև սեռական հարաբերությունը հաճույքից՝ ամուսնության և սեռական ակտի միակ նպատակը դարձնելով Կուսակցությանը ծառայելու համար երեխաներ ունենալը, որն էլ հեղինակն անվանել է «արհեստական բեղմնավորում»: **Artsem** բառը թարգմանվել է **արհբեղմ**, որն էլ ստացվել է «**արհեստական բեղմնավորում**» բառակապակցության անդամ բառերի վերջնավանկերի սղման արդյունքում: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թե՛ բնագրի բառի, և թե՛ վերջինիս թարգմանության արտահայտած իմաստն ըմբռնելի է տվյալ բառի կիրառության համատեքստի շնորհիվ, այլապես թե՛ բնագրային բառի «**art**» ձևույթը, որը նշանակում է «**արվեստ**», և թե՛ թարգմանության «**արհ**» ձևույթը, որն առավելապես ի ցույց է դնում «**արհեստ**» երևույթը, ունենալով իմաստային երկակիություն, չէին կարող արտահայտել համապատասխանաբար «**artificial**» և «**արհեստական**» հասկացությունները:

Pluscold, doublepluscold, uncold և **unlight** բառերը՝ ի տարբերություն նախորդ երկու բառային միավորների, կազմված են ամբողջական ձևույթներից (*plus+cold, double+plus+cold, un+cold, un+light*), որոնք պատճենվել են թիրախ լեզու՝ թարգմանվելով համապատասխանաբար որպես **այլուցուրդ, կրկնակիայլուցուրդ, չցուրդ և չլույս**:

*“Thus, for example, **uncold** meant ‘warm’, while **pluscold** and **doublepluscold** meant, respectively, ‘very cold’ and ‘superlatively cold’.”* (Orwell 2012: 346)

«Հերևաբար, օրինակ «**չցուրտ**» նշանակում էր «**տաք**», մինչդեռ «**պլյուսցուրտ**» և «**կրկնակիպլյուսցուրտ**» համապատասխանաբար նշանակում էր «**շատ ցուրտ**» և «**չափազանց ցուրտ**»:» (Օրուել 2012: 320)

“Dark, for example, could be replaced by **unlight**, or **light** by **undark**, according to preference.” (Orwell 2012: 346)

«Օրինակ, «մութ» բառը կարելի է փոխարինել «**չլույս**»-ով և հակառակը՝ ըստ նախասիրության:» (Օրուել 2012: 320)

Ահա թե ինչ էին նշանակում հետևյալ բառերը՝ ըստ հեղինակի սահմանման. «Բացի այդ, ցանկացած բառ (սա, ըստ էության, վերաբերում էր լեզվի յուրաքանչյուր բառի), կարելի էր ժխտական դարձնել չ- նախածանցի օգնությամբ, կամ էլ սաստկացնել՝ ավելացնելով պլյուս- նախածանցը: Իսկ ավելի ուժեղ շեշտադրման համար՝ կրկնակիպլյուս-: Այսպիսով, **չցուրտ**, **օրինակ**, նշանակում էր «**տաք**», այնինչ **պլյուսցուրտ** և **կրկնակիպլյուսցուրտ** բառերը համապատասխանաբար նշանակում էին «**շատ ցուրտ**» և «**չափազանց ցուրտ**»¹² (Orwell 2012: 346):

«**Plus**» ձևույթը՝ որպես դրական արժեք և առավելություն ցույց տվող, միջգիտակարգային և միջլեզվական կիրառության եզրույթ, արդարացիորեն պատճենվել է թիրախ լեզու և թարգմանվել «**պլյուս**»՝ համարժեքորեն արտահայտելով բնագրի արտահայտած դրական արժեքի իմաստը: Անգլերենի «**un-**» ժխտական նախածանցը, որը, որպես կանոն, միավորվում է հենց ածականների հետ՝ ցույց տալով տվյալ ածականի արտահայտած որակական հատկանիշի ժխտում կամ բացակայություն (օր.՝ *unclean, untidy, uneven*), այս դեպքում նույնպես ավելացել է ածական բառակազմական հիմքերի (*un+ light (adj.), un+cold (adj.)*): Վերջինս թարգմանության արդյունքում փոխարինվել է «**չ-**» ժխտական նախածանցի միջոցով, նույնպես համարժեքորեն արտահայտում է որևէ որակական հատկանիշի և բնույթի ժխտում (օր.՝ *չբեր, չունևոր, չհաս*) (Գրիգորյան 2000: 125): Բնագրի «**un-**» ժխտական նախածանցը, ի դեպ, թարգմանվածքում կարող էր փոխարինվել նաև համանման «**ան-**

¹² Մեջբերման թարգմանությունը մերն է:

» հայերեն նախաձանցով, որի կիրառության միջոցով ստացված թարգմանությունները նույնպես իմաստագործաբանորեն համարժեք կլինեին:

Նորխոսքի մի շարք բառային միավորների՝ պատճենման միջոցով ստացված թարգմանությունները, սակայն, ի տարբերություն վերոնշյալ բառային միավորների թարգմանության՝ համարժեքորեն չեն արտահայտում բնագրի բառերի արտահայտած իմաստները: Որպես համընդհանուր դիտարկում կարելի է ասել, որ այս հանգամանքը պայմանավորված է աղբյուր և թիրախ լեզուների ամենատարբեր լեզվական՝ ձևաբանական, բառակազմական, հնչյունաբանական, քերականական առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող նկատելի տարբերություններով: Իսկ նորխոսքի դեպքում բառիմաստի պահպանումը, որն ունի հստակ գործաբանական նշանակություն և իրականացնում է հստակ մտաշահարկային գործառույթ, առաջնային նախապայման է: Նմանատիպ մի շարք բառերի թարգմանությունների վերլուծության արդյունքում, որը մանրամասն կերպով կդիտարկենք ստորև, փորձել ենք առաջադրել այդ բառերի թարգմանության մեր տարբերակները, որոնք, մեր կարծիքով, առավել համարժեք կերպով են արտահայտում բնագրի բառային միավորների արտահայտած իմաստները: Այսպես.

*“The ministry of Truth- Minitrue, in **Newspeak** - was startlingly different from any other object in sight.”* (Orwell 2012: 6)

*«Ճշմարտության նախարարությունը, **Նորալեզվով**՝ Նախաճշտը, ապշեցուցիչ կերպով տարբերվում էր այն ամենից, որ իր շուրջն էր:»* (Օրուել 2012: 5)

«**Newspeak**» բառը, որը վերաբերում էր հանդիպում է շուրջ 83 անգամ, սոցիալիստական կուսակցության կողմից ստեղծված մտաշահարկային լեզուն էր, որը նպատակ էր հետապնդում իր պարզագույն լեզվական կառույցի միջոցով մտաշահարկելու այդ լեզվով խոսողների մտածողությունն ու աշխարհընկալումը: Ձևաբանորեն այն ստացվել է «**new**» և «**speak**» հիմքերի բառաբարդման միջոցով, որի արդյունքում ստացվել է «**newspeak**» կցական գրությամբ բարդ բառը:

Իսիստ հետաքրքրական է հեղինակի կողմից հենց «**speak**» արմատի կիրառության նախընտրությունը: Ենթադրաբար կարելի է ասել, որ եթե հեղինակի

նպատակը լինել նորխոսքի՝ որպես լեզվական կողի կամ կառույցի շեշտադրումը միայն, նա «**speak**» արմատի փոխարեն կարող էր կիրառել «**lang**» մասնիկը՝ ստացված **language** բառի վերջնականի սղման միջոցով, որի արդյունքում կստացվեր «**newlang**» բառը՝ ուղղակիորեն ցույց տալով նորխոսքը որպես լեզվահամակարգ: Սրանից կարելի է եզրակացնել, որ կիրառելով «**speak**» բառը (որն առաջնայնորեն բայ է, սակայն այս դեպքում գործում է որպես գոյական՝ համաձայն նորխոսքի լեզվական կանոնների (էջ 346))՝ հեղինակը հղում է անում ոչ միայն նորխոսքի լեզվական կողին, այլ առավելապես վերջինիս գործածությանը խոսքում: Նրա հիմնական նպատակն է ի ցույց դնել նորխոսքի կիրառության ամենատարբեր խոսույթային առանձնահատկությունները, և, ինչու ոչ՝ առկա ողջ քաղաքական խոսույթը: Հետևաբար, «**Newspeak**» բառը ցույց է տալիս է ոչ միայն նորխոսքը՝ որպես լեզվահամակարգ, այլև դրա կիրառության միջոցով ստեղծված մտաշահարկային խոսույթը, մարդկանց հասարակական վարքը, աղավաղված մտածելակերպը և այլն:

Թարգմանչի կողմից թիրախ լեզվում ստեղծված համարժեքն է «**Նորալեզու**» բառը, որը բաղկացած է «**նոր**» և «**լեզու**» արմատներից: Այս դեպքում, ինչպես երևում է, բնագրային բառի «**speak**» բաղադրիչը թարգմանվել է «**լեզու**», ինչի արդյունքում էլ «**Նորալեզու**» բառը առավելապես հղում է անում նորխոսքին՝ որպես լեզվական կողի՝ ձևավորված որոշակի օրինաչափությունների հիման վրա, և ցույց չի տալիս դրա ո՛չ կիրառությունը խոսքում, ո՛չ խոսույթաստեղծ յուրահատկությունները: Ի դեպ, վեպի հայերեն թարգմանվածքը միակը չէ, որում «**speak**» բառը թարգմանվել է որպես «**լեզու**»: «**Speak**» բառը նմանատիպ թարգմանության է արժանացել նաև վեպի ռուսերեն (*Новояз*), իսպաներեն՝ (*Neolingua*), ինչպես նաև գերմաներեն առաջին՝ Կուրտ Վազենզայի 1950 թ. -ի թարգմանվածքում (*Neusprache* (Sprache- լեզու)):

Մենք առաջարկում ենք «**լեզու**» միավորի փոխարեն կիրառել «**խոսք**» բառը, որն համարժեքորեն կարտահայտի բնագրային «**speak**» բառի իմաստը: Կարևոր ենք համարում նշել, որ «**speak**» բառը որպես «**խոսք**» թարգմանելու մեր առաջարկը բնավ էլ առաջինը չէ, և որ այն այս կերպ է թարգմանվել, օրինակ՝ վեպի՝ Մայքլ Ուոլթերի՝ 1980-ականներին կատարած գերմաներեն թարգմանվածքում (*Neusprech*, որտեղ *sprech* բառը ստացվել է *sprechen* (*խոսել*) բայի *-en* բայական վերջավորության սղման արդյունքում), ինչպես նաև վեպի եբրայերեն թարգմանություններում (**שׁוּחַ** (*սիախ*)-*խոսույթ կամ երկխոսություն*):

Առաջարկում ենք նաև «նոր» և «խոսք» բառերը իրար միացնել առանց ա հոդակապի՝ որպես «**Newspeak**» բառի համարժեք թարգմանություն առաջադրելով «**Նորխոսք**» բառը: Այս դեպքում տեղի է ունենում հայերենի բառակազմական նորմի գիտակցական խախտում՝ բառաբարդման առավել տարածված, հոդակապով կաղապարի փոխարեն անհոդակապ և ընդամենը երկվանկ բարդ բառի ստեղծում: Սրանցից թե՛ մեկը՝ որպես լեզվական կանոնի խախտում, և թե՛ մյուսը՝ որպես հնարավորինս կարճ և քիչ թվով վանկեր ունեցող բառ, հատկապես համապատասխանում են նորխոսքի պարզունակ լեզվաբանական կառույցի սկզբունքներին:

«**Newspeak**» բառին համանման կառույց է նաև «**Oldspeak**» բառը՝ կազմված «**old**» և «**speak**» արմատներից:

*“He did not believe he had ever heard the word Ingsoc before 1960, but it was possible that in its **Oldspeak** form- ‘English Socialism’, that is to say- it had been current earlier.” (Orwell 2012: 42)*

*«Որքան հիշում էր՝ մինչ 1960 թվականը երբևէ չէր լսել Անգսոց բառը, բայց հնարավոր է, որ այդ բառն ավելի վաղ գոյություն է ունեցել **հնալեզվում**՝ «անգլիական սոցիալիզմ» տարբերակով:» (Օրուել 2012: 39)*

«**Oldspeak**»-ը անգլերենն է՝ վեպում հանրության կողմից կիրառվող հիմնական լեզուն: Այն և դրանով ստեղծված խոսույթը՝ ի տարբերություն նորխոսքի, մտաշահարկային չէին: Ի դեպ, ինչպես արդեն նշվել է վերը, կուսակցության նպատակն էր ամբողջապես վերացնել «**Oldspeak**»-ի կիրառությունը՝ աստիճանաբար կիրառության մեջ բերելով նորխոսքը:

Հայերեն թարգմանվածքում «**Oldspeak**» բառը պատճենման միջոցով թարգմանվել է «**հնալեզու**»՝ հետևելով «**Newspeak**» բառի «**Նորալեզու**» թարգմանության օրինակին: Ինչպես «**Նորալեզվի**» դեպքում, այնպես էլ այս դեպքում, ներկայացվում է միայն լեզուն՝ որպես համակարգ, իսկ դրա խոսքային և խոսույթային մակարդակը, որն անվանվում է «**Oldspeak**» բառով, համարժեքորեն չի արտահայտվում թարգմանության «**հնալեզու**» բառի կողմից: Որպես համարժեք

թարգմանություն, առաջարկում ենք **հինխոսք** բառը՝ ստացված «old» և «speak» բառերի համարժեքների՝ «**հին**» և «**խոսք**» արմատների անհոդակապ կապակցման միջոցով:

Անհամարժեքության նմանատիպ դեպք է նաև «**Doublethink**» բառի թարգմանությունը:

*“His mind hovered for a moment round the doubtful date on the page, and then fetched up with a bump against the Newspeak word **Doublethink**.”* (Orwell 2012: 10)

*«Միտքը մի պահ պտտվեց թղթին տրված կասկածելի տարեթվի շուրջ հանկարծ սայթաքեց նորալեզվի **կրկնամիտք** բառի վրա:»* (Օրուել 2012: 9)

«**Doublethink**» բառը, որը վեպում հանդիպում է 31 անգամ, վեպի հակաամբողջատիրական ուղերձի առանցքային բաղադրիչներից է: Ինչպես արդեն նշել ենք սույն աշխատանքի առաջին գլխում, երկմիտքը միաժամանակ երկու հակադիր գաղափարներին հավատալու և դրանք հավասարապես ընդունելու մտավոր կարողությունն էր, որն էլ բռնատիրական կառավարության կողմից օգտագործվում էր որպես գործիք՝ բնակչությանը ենթարկելու մտաշահարկման և կառավարելու վերջիններիս հասարակական վարքը:

«**Doublethink**» բարդ բառը, որը կազմված է «**double**» և «**think**» բառերից, վերոնշյալ իմաստն արտահայտում է իր բաղադրիչների իմաստային պատճառաբանվածության միջոցով: «**Think**» բայ-գոյականը ցույց է տալիս մարդկանց մտածողությունը, իսկ «**Double**»-ը ցույց է տալիս դրա երկակի բնույթը:

Թարգմանության գործընթացում բառը ենթարկվել է պատճենման, որի արդյունքում ստացված «**կրկնամիտք**» համարժեքը ավելի շուտ արտահայտում է կրկնություն, քան կրկնակիություն այն պատճառով, որ «**կրկնակի**» բառը երկակիություն արտահայտում է իր բաղադրիչների՝ «**կրկին**» արմատի և «**-ակի**» վերջածանցի համադրության միջոցով: Այս դեպքում, սակայն, «**-ակի**» վերջածանցը դուրս է թողնվել, որի արդյունքում պահպանված «**կրկին**» բառը արտահայտում է մտքի կրկնություն, այլ ոչ երբեք կրկնակիություն: Հետևաբար առաջարկում ենք «**Doublethink**» բառի թարգմանության «**երկմիտք**» տարբերակը, որում «**կրկնակի**» բառը փոխարինել ենք «**երկակի**» բառով: Այս դեպքում «**-ակի**» վերջածանցի սղումը չի

հանգեցնի իմաստի շեղման կամ կորստի, և կիրառված «**երկ**» ձևույթը համարժեքորեն կարտահայտի բնագրային բաղադրիչի արտահայտած՝ երկու մտքերի զուգահեռ գոյակցումը:

«**Doublethink**» բառին համանման բառային կառույց է նաև «**oldthink**» բառը, որը նորիսուքում ցուցում էր մտածելակերպ, կամ մտքերի ու գաղափարների մի ամբողջություն, որոնք ոգեշնչված էին նախքան սոցիալիստական հեղափոխությունը տեղի ունեցած իրադարձություններից և հիշողություններից և չէին համապատասխանում կուսակցության տարածած գաղափարախոսությանը: «**Oldthink**» բառը, որը բարդ բառ է՝ կազմված «**old**» և «**think**» բառերից, թարգմանվել է պատճենման միջոցով և ստացել «**հնամիտ**» թարգմանությունը:

*“And in addition, only a person thoroughly grounded in Ingsoc could appreciate the full force of the word bellyfeel, which implied a blind, enthusiastic acceptance difficult to imagine today; or of the word **oldthink**, which was inextricably mixed up with the idea of wickedness and decadence.”* (Orwell 2012: 348)

*«Բացի այդ, միայն անգսոցի պայմաններում մեծացած մարդը կարող է գնահատել «ստամոքսել» բառի ողջ ուժը, որը ենթադրում է կույր և խանդավառ ընդունում, ինչը դժվար է պատկերացնել մեր օրերում, կամ «**հնամիտ**» բառը, որը կապված է չարության և անկման գաղափարի հետ:»* (Օրուել 2012: 323)

Սակայն ստացված **հնամիտ** բառը, (ինչպես, օրինակ՝ *բարեմիտ*, *չարամիտ* կամ *պարզամիտ* բառերը) իր ձևով և գործառույթով ածական է, և ցույց տալով որոշակի հատկանիշ, որպես որակում կարող է տրվել մարդուն, որն ունի «հին» մտածելակերպ, բայց չի ցույց տալիս բուն մտածելակերպը՝ որպես երևույթ՝ արտահայտված բնագրի «**oldthink**» բառով: Հետևելով մեր կողմից վերը առաջադրված «**երկմիտք**» բառի կազմության տրամաբանությանը, առաջարկում ենք «**oldthink**» բառի թարգմանության «**հինմիտք**» տարբերակը, որն, ըստ էության, բնագրի բառի համարժեք պատճեն է և, անհոդակապ կազմության արդյունքում բաղկացած լինելով երկու վանկից, համապատասխանում է նորիսուքի պարզունակ առոգանության սկզբունքին:

Իմաստային անհամարժեքության նկատելի դեպքեր են նաև Օվկիանիայի չորս նախարարությունների նորխոսքային անվանումների թարգմանությունները:

*“The Ministry of Truth, which concerned itself with, which concerned itself with news, entertainment, education and the fine arts. The Ministry of Peace, which concerned itself with war. The Ministry of Love, which maintained law and order. And the Ministry of Plenty, which was responsible for economic affairs. Their names, in Newspeak: **Minitrue, Minipax, Miniluv and Miniplenty.**”* (Orwell 2012: 6)

«...Ճշմարտության նախարարությունը, որը տնօրինում էր տեղեկատվությունը, ժամանցը, կրթությունը և գեղեցիկ արվեստները, Խաղաղության նախարարությունը, որը տնօրինում էր պատերազմը, Սիրո նախարարությունը, որը տնօրինում էր կարգի պահպանումը, և Առատության նախարարությունը, որը պատասխանատու էր տնտեսության համար: Նորալեզվով՝ **Նախաճշտ, Նախախաղ, Նախասիր և Նախառատ:**» (Օրուել 2012: 6)


Minitrue, Minipax, Miniluv և Miniplenty բառերը, որոնք համապատասխանաբար **Ministry of Truth, Ministry of Peace, Ministry of Love և Ministry of Plenty** հինխոսքի արտահայտությունների նորխոսքային կարճ տարբերակներն են, ստացվել են «**Ministry**» բառի «**mini**» մասնիկի և համապատասխանաբար «**true**», «**pax**», «**luv**» և «**plenty**» ձևույթների միակցման արդյունքում:

Minitrue բառի դեպքում **truth** բառը փոխարինվել է **true** ածականով, իսկ **Minipax**-ի դեպքում **peace** բառի փոխարեն հեղինակը գործածել է դրա լատիներեն **pax** համարժեքը՝ ենթադրաբար բարեհնչության կամ հեշտ արտասանելիության նպատակով: **Miniluv** բառի դեպքում **love** բառը գրվել է այնպես, ինչպես արտասանվում է, որն էլ, ինչպես արդեն նշել ենք, արվել է ուղղագրության կանոնների խախտման միջոցով մտածողության սահմանափակման տրամաբանության հիման վրա: Իսկ **Miniplenty** բառի դեպքում **plenty** բառը, որը ցուցում է սոցիալ-տնտեսական այնպիսի կարգավիճակ, որում սնունդը և բոլոր այլ անհրաժեշտությունները հասանելի են մեծ քանակությամբ, որևէ կրճատման կամ ձևային փոփոխության չի ենթարկվել: Երկմիտք առաջացնող նորխոսքային այս անվանումներում **true, pax, love և plenty**

բառերը քաղաքական հեզնանքի միջոցով թաքցնում են նախարարությունների գործունեության իրական ուղղությունները՝ ստի ստեղծումը, պատերազմի կազմակերպումը, ընդդիմադիրներին տանջելը և պարենային սակավության միջոցով հանրության կառավարումը:

Այս չորս նորխոսքային բառերը թարգմանության ընթացքում ենթարկվել են պատճենման: Հետևապես, **Minitrue** բառը թարգմանվել է որպես **Նախաճշտ**, **Minipax**-ը՝ **Նախախաղ**, **Miniluv**-ը՝ **Նախասիր**, իսկ **Miniplenty**-ն՝ **Նախառատ**, որոնք, ինչպես երևում է, բնագիր բառերի ուղղակի կառուցվածքային պատճեններն են:

Այս դեպքում անհամարժեքությունը պայմանավորված է նրանով, որ անգլերենի՝ որպես վերլուծական լեզվի սեռական հոլովով գոյականական բառակապակցություններում, որոնք կազմվում են առավելապես **of** նախդրի միջոցով, բառակապակցության գերադաս անդամը նախորդում է պատկանելություն ցույց տվող բառին (օր.՝ *speed of light*): Այս հաջորդականությունը պահպանվել է նաև բնագրային **Minitrue**, **Minipax**, **Miniluv** և **Miniplenty** կազմության դեպքում՝ **Ministry of Truth-Minitrue**, **Ministry of Plenty-Miniplenty** և այլն: Սակայն հայոց լեզվում, որը համադրական լեզու է, սեռական հոլովով գոյականական բառակապակցությունները կազմվում են բառի թեքման միջոցով, և դրանցում գերադաս անդամը՝ ի տարբերություն անգլերենի, հաջորդում է պատկանելություն ցույց տվող բառին՝ այս կերպ ի ցույց դնելով պատկանելության արտահայտման հակառակ ուղղություն, օր.՝ *լույսի արագություն*:



Այս իսկ պատճառով էլ **Նախաճշտ**, **Նախասիր**, **Նախառատ** և **Նախախաղ** բառերը հայոց լեզվի լեզվամտածողության շրջանակներում ցույց չեն տալիս որևէ պատկանելություն: Բացի այդ, «**նախարարություն**» և «**խաղաղություն**» բառերն այնքան են կրճատվել, որ մնացյալ «**նախ**» և «**խաղ**» բաղադրիչները չեն արտահայտում համապատասխանաբար «**նախարարություն**» և «**խաղաղություն**» երևույթները, այլ, լինելով ինքնուրույն ձևույթներ, արտահայտում են իրենց սեփական իմաստները՝ առաջ բերելով իմաստի խեղաթյուրում և թյուրըմբռնում: «**Նախ**»

նախաձանցը, օրինակ, ցուցում է նախընթացության, նախակարգության նշանակություն, իսկ «խաղ»-ը՝ բավականության՝ ժամանցի նպատակ ունեցող զբաղմունք:

Minitrue բառի թարգմանության համար առաջարկում ենք «**Ճշտնախ**» տարբերակը, **Minipax** բառի համար՝ «**խաղաղնախ**» բառը, իսկ **Miniluv** և **Miniplenty** բառերի համար համապատասխանաբար «**Սիրնախ**» և «**Առատնախ**» բառերը, որոնք պարզապես հանդիսանում են համապատասխանաբար **Ճշմարտության նախարարություն, Խաղաղության նախարարություն, Սիրո նախարարություն և Առատության նախարարություն** բառակապակցությունների վանկային հապավումները (*Ֆինանսների նախարարությունն անվանող, հայոց լեզվում գոյություն ունեցող «ֆիննախ» հապավման համանմանությամբ*) և համարժեքորեն արտահայտում են թե՛ նախարարությունը՝ որպես կառավարման մարմին և հաստատություն, թե՛ առատություն, սեր, ճշմարտություն և խաղաղություն երևույթները, որոնք քաղաքական հեգնանքի միջոցով գործաբանորեն ի ցույց են դնում դրանց կատարելապես հակառակ երևույթները՝ իրականացնելով մտքի շահարկում:

Նորխոսքի բառային միավորների պատճենման միջոցով ի կատար ածված թարգմանությունների վերլուծության միջոցով կարելի է երևան հանել նաև իմաստային անհամարժեքությունների այնպիսի դեպքեր, որոնցում բնագրի բառերի արտահայտած իմաստները, ըստ էության, պահպանվել են աննշան շեղումներով, և լեզվական արտահայտման որոշակի ձևափոխության արդյունքում կարելի է ապահովել նաև համարժեք թարգմանություններ, որոնք, իհարկե՝ իմաստի լիարժեք պահպանմամբ, սակայն և իրենց էլ՝ ավելի ձևափոխված լեզվական արտահայտմամբ ավելի կհամապատասխանեն նորխոսքի՝ միտումնավոր պարզունակ, մտաշահարկային լեզվական առանձնահատկություններին:

Այսպիսով, օրինակ՝ **unperson** բառը, և վերջինիս հոգնակի՝ **unpersons** տարբերակը համապատասխանաբար թարգմանվել են որպես «**չմարդ**» և «**չմարդիկ**» ցույց տալով անձի այլևս գոյություն չունենալը, վերացած լինելը:

Անձի վերացման հետ մեկտեղ վերացվում էր նաև նրա և նրա հասարակական կյանքի ու գործունեության հետ կապված ցանկացած գրավոր արձանագրություն: Այս դեպքում հեղինակի կողմից հենց **person** բառի կիրառության նպատակն է ի ցույց դնել

ոչ միայն մարդուն՝ որպես կենդանի արարածի, այլ նաև որպես անձի և անհատականության, որն էլ՝ ունենալով սեփական անուն, բնավորություն, մտածելակերպ, ապրելակերպ և այլն, միջանձնային հարաբերությունների մեջ է մտնում այլ անձանց հետ և նրանց կողմից ճանաչվում է որպես անձ: Կարծում ենք, որ վերոշնչյալ բառերի «**չմարդ**» և «**չմարդիկ**» թարգմանությունները չեն արտահայտում այս իմաստը: Հետևաբար առաջակում ենք թարգմանությունների «**չանձ**» և «**չանձեր**» տարբերակները, որոնք համարժեքորեն պահպանում են բնագրի բառերի «**անձնավորություն**» ցույց տվող իմաստը: «**Չանձեր**» բառն էլ, ստացված լինելով հայոց լեզվի **անձինք** բառի ձևային այլափոխման արդյունքում, ավելի է համապատասխանում նորխոսքի աղճատված լեզվական սկզբունքներին՝ զերծ մնալով ընդհանուր կանոնից շեղում կամ բացառություն հադիսացող ձևերից և որդեգրելով ընդհանրապես հոգնակիի կազմության կանոնին հետևելու ուղին:

Թարգմանության նմանատիպ օրինակներ են նաև Ճշմարտության նախարարության չորս բաժինների նորխոսքային անվանումների՝ **Recdep**, **Ficdep**, **Teledep** և **Pornosec** բառերի թարգմանությունները, որոնք կրկին ստացվել են կառուցվածքային պատճենման միջոցով: **Recdep** բառը՝ ստացված իր հինխոսքի անվանման «**the Records Department**» անդամ բառերի առաջնավանկերի կցման միջոցով, զբաղվում էր արձանագրությունների խմբագրմամբ և թարգմանվել է «**Արձաբաժ**»: **Ficdep** բառը, ստացված նույն կերպով՝ «**The Fiction Department**» անվանման առաջնավանկային հապավումից, պատասխանատու էր գեղարվեստական գրականության ապահովման համար և թարգմանվել է «**Գեղբաժ**»: **Teledep**-ը, ստացված «**The Tele-programmes Department**» անվանումից, զբաղվում էր հեռուստահաղորդումներով և թարգմանվել է «**Հեռուստաբաժ**», և **Pornosec**-ն էլ, ստացված «**the Pornography Section**» արտահայտությունից, զբաղվում էր էժանագին պոռնոգրաֆիկ նյութերի արտադրությամբ, որի համարժեքը թիրախ տեքստում «**Պոռնոբաժին**» բառն է:

*“In the Ministry of Truth, for example, the Records Department, in which Winston Smith worked, was called **Recdep**, the Fiction Department was called **Ficdep**, the Tele-programmes Department was called **Teledep**, and so on.”* (Orwell 2012: 350)

«Օրինակ, Ճշմարտության նախարարությունում Արձանագրությունների բաժինը, որտեղ աշխատում էր Ուինսթոն Սմիթը, կոչվում էր **Արձաբաժ**, Գեղարվեստական գրականության բաժինը՝ **Գեղբաժ**, Հեռուստահաղորդումների բաժինը՝ **Հեռուստաբաժ**, և այդպես շարունակ:» (Օրուել 2012: 326)

*“There was even a whole sub-section – **Pornosec**, it was called in Newspeak – engaged in producing the lowest kind of pornography, which was sent out in sealed packets and which no Party Member, other than those who worked on it, was permitted to look at.”*
(Orwell 2012: 50)

«Գոյություն ուներ նաև մի ամբողջ ենթաբաժին. նորալեզվով այն կոչվում էր **Պոռնոբաժին** և զբաղվում էր ամենացածրորակ պոռնագրաֆիայի ստեղծմամբ, որն ուղարկվում էր կնքված փաթեթներով, և Կուսակցության անդամներին, բացի հեղինակներից, արգելվում էր դիտել դրանք:» (Օրուել 2012: 47)

Կարելի է ասել, որ անվանումների թարգմանություններն ընդհանուր առմամբ արտահայտում են բնագրի բառերի իմաստները, սակայն մենք առաջարկում ենք դրանք ենթարկել բառակազմական որոշ փոփոխությունների, որի արդյունքում ստացված տարբերակները և՛ համարժեքորեն կարտահայտեն բնագրային իմաստները, և՛ իրենց լեզվական կառույցներով կհամապատասխանեն նորխոսքի լեզվական յուրահատկություններին:

Առաջարկում ենք նախ բառերի բաղադրիչները կապակցել առանց հոդակապի, ինչպես նաև բոլոր բառերում «բաժ» մասնիկը փոխարինել «բաժին» բառով՝ **Recdep** և **Ficdep** բառերի թարգմանության համար առաջադրելով համապատասխանաբար «**Արձբաժին**» և «**Գեղբաժին**» բառերը: **Teledep** բառի թարգմանության դեպքում, մասնավորապես, առաջարկում ենք «**Հեռուստա**» բառը փոխարինել «**հեռ**» ձևությամբ, իսկ **Pornosec** բառի դեպքում «**Պոռնո**» բառը՝ «**Պոռն**» ձևությամբ՝ ստանալով դրանց թարգմանության «**Հեռբաժին**» և «**Պոռնբաժին**» տարբերակները: Այս դեպքում **ս** հոդակապի ձևավորած հավելյալ վանկը դրա սղման արդյունքում կրճատվում է, որն էլ լրացվում է «**բաժին**» բառի երկրորդ վանկի կողմից՝ այսպիսով թե՛ ուղղակիորեն ցույց

տալով «հաստատության ստորաբաժանում» երևույթը, թե՛ պահպանելով թարգմանությունների եռավանկ կառուցվածքը:

«Ա» հոդակապի սղման միջոցով ենք առաջարկում ստանալ նաև **blackwhite** և **sexcrime** բառերի լեզվականորեն համարժեք թարգմանություններ: **Blackwhite** բառը՝ ստացված **black** և **white** բառերի կցական բառաբարդման արդյունքում, նշանակում էր «հավատալ, որ սևը սպիտակ է, իմանալ, որ սևը սպիտակ է, և մոռանալ, որ երբևէ կարծել ես, որը այդպես չէ» (Orwell 2012: 242), որն էլ պատճենմամբ թարգմանվել է «սևասպիտակ»:

*“But in any case an elaborate mental training, undergone in childhood and grouping itself round the Newspeak words crimestop, **blackwhite** and doublethink, makes him unwilling and unable to think too deeply on any subject whatever.”* (Orwell 2012: 241)

«Բայց ցանկացած դեպքում, մանուկ հասակի մանրակրկիտ մտավոր վարժանքը, որը հիմնված է նորալեզվի այնպիսի բառերի վրա, ինչպիսիք են «հանցականգը», «սևասպիտակը» և «կրկնամիտքը», նրա մեջ մեռցնում է այս կամ այն հարցի մասին խոր մտածելու ցանկությունը:» (Օրուել 2012: 224)

Sexcrime բառն էլ, որն իր հերթին ստացվել է **sex** և **crime** բառերի կցական բառաբարդման արդյունքում, ցույց էր տալիս սեռական հարաբերություն, որը ներառում էր ֆիզիկական հաճույք՝ հակադրվելով «բարեսեքս»-ին, որը սեռական հարաբերությունն էր՝ տեղի ունեցած միայն ու միայն վերարտադրության նպատակով՝ այդ առանձնահատկության պատճառով համարվելով հանցանք: Բնագրի բառը պատճենման միջոցով թարգմանվել է «Սեռահանց»:

*“His sexual life, for example, was entirely regulated by the two Newspeak words **sexcrime** (sexual immorality) and **goodsex** (chastity).”* (Orwell 2012: 349)

*«Օրինակ, նրա սեռական կյանքն ամբողջությամբ կարգավորվում էր նորալեզվի երկու բառով՝ **սեռահանց** (սեռական անբարոյականություն) և **բարեսեքս** (ողջախոհություն):»* (Օրուել 2012: 324)

Երկու բառի թարգմանության դեպքում էլ առաջարկում ենք բացառել **ս** հոդակապը և բաղադրիչները կապակցել անհոդակապ եղանակով, իսկ մասնավորապես **sexcrime** բառի դեպքում «**հանց**» և «**սեռ**» ձևույթները փոխարինել համապատասխանաբար **հանցանք** և **սեքս** բառով, ինչի արդյունքում ստացված թարգմանության «**սևսպիտակ**» և «**սեքսհանցանք**» տարբերակները կապահովեն իմաստային անխափան համարժեքություն, և լեզվական արտահայտման հետևողականության շնորհիվ (**սեքսհանցանք-բարեսեքս**) ի ցույց կդնեն ավելի բարձր մակարդակի համապատասխանություն նորխոսքի լեզվաբանական սկզբունքների հետ:

Անդրադառնալով **crime** բառի թարգմանությանը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նորխոսքում այդ արմատը պարունակող մի շարք բարդությունների՝ մասնավորապես **crimethink** բառի, դրա հոմանիշը հանդիսացող **thoughtcrime** բառի, ինչպես նաև **facecrime** բառի թարգմանություններին:

Crimethink և **thoughtcrime** բառերը, որոնք ցույց էին տալիս կուսակցության գաղափարախոսությանը հակադիր մտքեր ունենալը, թարգմանվել են «**մտահանցագործություն**»:

*“Items one comma five comma seven approved fullwise stop suggestion contained item six doubleplus ridiculous verging **crimethink** cancel stop unproceed constructionwise antegetting plusfull estimates machinery overheads stop end message.”* (Orwell 2012: 195)

*«-Հոդված մեկ ստորակետի հինգ ստորակետի յոթ հավանություն տալ ամբողջը վերջակետի առաջարկություն պարունակվել հոդված վեց կրկնակիպյուս անհեթեթ սահմանային **մտահանցագործություն** հեղաձգել վերջակետի չջարունակել կառուցողական նախաստացում պյուս գնահատում մեքենայական վերադիր վերջակետ ավարտի հաղորդագրություն»* (Օրուել 2012: 195)

*“He had committed – would still have committed, even if he had never set pen to paper – the essential crime that contained all others in itself. **Thoughtcrime**, they called it.”* (Orwell 2012: 22)

«Նա կատարել է, և եթե նույնիսկ գրչով դիպած չլիներ թղթին, դարձյալ կատարած կլիներ, բացարձակ հանցագործություն, որը ներառում է մնացած բոլոր հանցագործությունները: **Մտահանցագործություն**, ահա թե ինչպես էր այն կոչվում:» (Օրուել 2012: 21)

“In the word **crimethink** (thoughtcrime), for instance, the think came second, whereas in thinkpol (Thought Police) it came first, and in the latter word police had lost its second syllable.” (Orwell 2012: 348)

«Օրինակ, **հանցամիտք** (մտահանցագործություն) բառում միտքը երկրորդ բառն է, իսկ մտքառուտ (մտքի ոստիկանություն) բառում՝ առաջինը. վերջինիս դեպքում «ոստիկանություն» բառի մի մասը կրճատվել է:» (Օրուել 2012: 322)

Ե՛վ **crimethink**, և՛ **thoughtcrime** բառերի թարգմանության դեպքում էլ առաջարկում ենք պատճենել դրանց բառակազմական կառույցները՝ չխախտելով դրա անմիջական բաղադրիչների հերթականությունը, ինչը տեղի է ունեցել բնագրի բառերի հայերեն թարգմանության դեպքում: Ասպես՝ **crimethink** բառի թարգմանության համար առաջարկում ենք պահպանել «**հանցամիտք**» տարբերակը, քանի որ բնագրի բառը, ըստ էության, արտահայտում է այնպիսի միտք կամ մտածելակերպ, որն իր բնույթով հանցավոր է, այսինքն՝ դեմ է Կուսակցության գաղափարախոսությանը. երևույթ, որը չի արտահայտում բառի «**մտահանցագործություն**» թարգմանությունը: Իսկ **thoughtcrime** բառի համար առաջարկում ենք թարգմանության «**մտհանցանք**» տարբերակը, որը համարժեքորեն արտահայտում է բնագրի բառի ցույց տված՝ «մտքի և մտածողության միջոցով իրականացված հանցանք» երևույթը: Նույնպես և **facecrime** բառի թարգմանության համար, որը նշանակում է հակակուսակցական մտքերի կամ մտածելակերպի՝ դեմքի արտահայտության միջոցով ի ցույց դնելը, որը և թարգմանվել է «**դիմահանցագործություն**», առաջարկում ենք բազմավանկ «**հանցագործություն**» բառը փոխարինել ավելի կարճ՝ «**հանցանք**» բառով, որն՝ ի տարբերություն «**հանցագործություն**» բառի, ուղղակի հղում չի անում որոշակի արարքի կամ գործողության, այլ նշանակում է հանցավոր մտածելակերպը կամ հանցավորության բնույթ ունենալը: Աղայանը, որպես «հանցանք» բառի փոխաբերական իմաստ,

առանձնացնում է նաև մեղքը (Աղայան 1976: 823): Սրա արդյունքում համարժեքորեն կապահպանվեն բնագրի բառերի արտահայտած իմաստները, և կապահովվի լեզվական արտահայտման հետևողականությունը:

Որոշակի լեզվական անհամարժեքություն կարելի նկատել նաև մի քանի մակբայների պատճենման դեպքում: Մասնավորապես, նորխոսքի **constructionwise** և **goodthinkwise** մակբայները, որոնք հեղինակի սահմանման համաձայն կազմված են – **wise** մակբայակերտ վերջածանցով, պատճենման արդյունքում համապատասխանաբար թարգմանվել են «**կառուցողական**» և «**բարեմտորեն**»:

*“Items one comma five comma seven approved fullwise stop suggestion contained item six doubleplus ridiculous verging crimethink cancel stop unproceed **constructionwise** antegetting plusfull estimates machinery overheads stop end message”* (Orwell 2012: 195)

«–Հոդված մեկ ստորակետի հինգ ստորակետի յոթ հավանություն տալ ամբողջը վերջակետի առաջարկություն պարունակվել հոդված վեց կրկնակիպյուս անհեթեթ սահմանային մտահանցագործություն հետաձգել վերջակետի չջարունակել **կառուցողական** նախաստացում պյուս գնահատում մեքենայական վերադիր վերջակետի ավարտի հաղորդագրություն» (Օրուել 2012: 177)

*“This inflected as follows: noun-verb, goodthink; past tense and past participle, goodthinked; present participle, goodthinking; adjective, goodthinkful; adverb, **goodthinkwise**, verbal noun, goodthinker.”* (Orwell 2012: 347)

«Այն խոնարհվում է հետևյալ կերպ՝ գոյական-բայ՝ «բարեմտածել». անցյալ ժամանակ և անցյալ դերբայ՝ «բարեմտածեց», ներկա դերբայ՝ «բարեմտածում», ածական՝ բարեմտի, դերբայ՝ **բարեմտորեն**, բայական գոյական՝ մարեմտածող:» (Օրուել 2012: 322)

Constructionwise բառի թարգմանության ժամանակ –**wise** վերջածանցը, ինչպես երևում է, փոխարինվել է հայերենի ածականակերտ –**ական** վերջածանցով. թարգմանության մեջ ստացվել է ածական: Համընդհանուր լեզվական ձևերի և սկզբունքների հետևողականությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք –**wise**

մակբայակերտ վերջածանցի հայերեն համարժեք ընդունել **-աբար** մակբայակերտ վերջածանցը՝ առաջարկելով **constructionwise** բառի «կառուցողաբար» և **goodthinkwise** բառի «բարենտաբար» տարբերակները:

Un- նախածանցի միջոցով կազմված բառային միավորների, մասնավորապես **undark** և **Doubleplusungood** բառերի թարգմանության դեպքում գործ ունենք պատճենման արդյունքում բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի բացթողման հետ:

*“Dark, for example, could be replaced by unlight, or light by **undark**, according to preference.”* (Orwell 2012: 346)

«Օրինակ, «մութ» բառը կարելի է փոխարինել «չլույս»-ով և հակառակը՝ ըստ նախասիրության:» (Օրուել 2012: 320)

*“times 3.12.83 reporting bb dayorder **doubleplusungood** refs unpersons rewrite fullwise upsub antefiling”* (Orwell 2012: 51)

«Թայմս 3. 12. 83 զեկույց բբ օրվա պատվեր կրկնակիզումարածլավ մեջբերումներ չմարդիկ վերաշարադրել լրիվ վերիցվար մինչ ներկայացումը» (Օրուել 2012: 48)

«Or light by undark» արտահայտության **«և հակառակը»** թարգմանության արդյունքում **Undark** բառը, թարգմանչի կողմից բացթողման և ընդհանրացման հնարների համադրությամբ, ընդհանրապես չի թարգմանվել որպես բառային միավոր: Այս դեպքում, սակայն, տեղի է ունեցել իմաստի խեղաթյուրում այն պատճառով, որ **«մութ» բառը կարելի է փոխարինել «չլույս»-ով** արտահայտության հակառակ երևույթը **«չլույս» բառն էլ «մութ» բառով փոխարինելն է, այլ ոչ «լույս» բառը «չմութ»-ով փոխարինելը:** Այս իսկ պատճառով այս դեպքում **«Or light by undark»** արտահայտության բառացի թարգմանությունը պարտադիր է համարժեքության ապահովման համար:

Doubleplusungood բառի պատճենման արդյունքում **un-** ժխտական նախածանցը չի թարգմանվել, որի արդյունքում ստացված «**կրկնակիգումարածլավ**» միավորը չի արտահայտում բնագրի բառի արտահայտած ժխտականությունը:

Նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում թարգմանչի՝ պատճենմանը՝ որպես միջլեզվական փոխադրման մեթոդի կիրառությանը տրված նախապատվությունը կարելի է պայմանավորել նրա կողմից առնվազն երկու մակարդակներում համարժեքության ապահովմանն ուղղված միտմամբ: Այն կարելի է մեկնել նախ որպես **ձգտում՝ պահպանելու բնագրի բառերին բնորոշ միատոն և բարեհունչ առոգանական առանձնահատկությունները՝** այդպիսով թարգմանվածքում պահպանելով հեղինակի կողմից դրանց վերագրված մտաշահարկային գործառույթը, կամ էլ **ապահովելու իմաստային համարժեքություն՝ պահպանելով բառերի ձևային արտահայտման առանձնահատկությունները:** Ահա թե՛ ինչպես է հեղինակը սահմանում բարեհնչության մտաշահարկային առանձնահատկությունները.

«Բ շերտի բառերը բոլոր դեպքերում բարդ բառեր էին: Դրանք կազմված էին երկու կամ ավելի բառերից կամ բառերի մասերից, որոնք կցված էին մեկը մյուսին՝ ապահովելով արտասանական դյուրիհնություն»¹³ (Orwell 2012: 47):

«Նորխոսքում բարեհնչությունը գերակա էր ցանկացած այլ առանձնահատկության նկատմամբ, բացառությամբ իմաստային ճշգրտության: Անհրաժեշտության դեպքում դրան զոհ էր գնում նաև քերականության կանոնավորությունը: Հիրավի, հարկապես քաղաքական նպատակների համար անհրաժեշտ էին ակնհայտ իմաստներով կարծ, իրար միակցված բառեր, որոնք արագ արտասանելի էին և լսողի մտքում առաջացնում էին նվազագույն արձագանք: . . . Այս բառերը, օրինակ՝ բարեմտածել, Խաղաղնախ, պրոլկեր, սեռհանցանք, ուրախճամբ, Անգսոց, ներսզգալ, մտքառուստ, ինչպես նաև մի շարք այլ բառեր, որպես կանոն բաղկացած էին երկու կամ երեք վանկերից, որոնցից թե՛ առաջին, և թե՛ վերջին վանկը շեշտ էին ստանում: Դրանց կիրառությունն ապահովում էր խոսքի մոթմոթան, երբեմն նաև կցկտուր և միատոն արտաբերումը: Գլխավոր նպատակը հենց սա էր»¹⁴ (Orwell 2012: 351):

^{13, 14} Մեջբերումների թարգմանությունը մերն է:

Թարգմանության մեջ, հատկապես նորխոսքի՝ որպես լեզվական կոդի թարգմանության գործում համարժեքությունը մեծապես պայմանավորված է աղբյուր և թիրախ լեզուների լեզվական առանձնահատկություններով կամ միջլեզվական համապատասխանության մակարդակով (Linguistic correspondence): Անգլերենի և հայերենի պարագայում, որոնք լեզվամշակութային տեսանկյունից հեռու են իրարից, միջլեզվական տարբերությունների պատճառով նորխոսքի լեզվական և իմաստային առանձնահատկությունների համարժեք փոխադրումը գրեթե անհնար է թվում: Ինչպես և տարբեր լեզվախմբերի պատկանող ցանկացած այլ լեզվական զույգի դեպքում, անգլերենում և հայերենում բառերը կարող են ունենալ միմյանցից խիստ տարբերվող կառուցվածք կամ ձևային արտահայտում: Այս իսկ պատճառով մի լեզվի միավանկ բառի համարժեքը մյուս լեզվում կարող է լինել բազմավանկ բառ, օր.՝ ¹peace=¹խա-²ղա-³ղութ-⁴յուն, ¹crime=¹հան-²ցա-³գոր-⁴ծութ-⁵յուն, ¹think=¹մը-²տա-³ծել):

Միջլեզվական անհամապատասխանության հենց այս հանգամանքի հետ է մեծապես կապված նաև նորխոսքի թարգմանությունը: Փորձելով պահպանել համանմանություն բնագրի բառերի վանկային կառուցվածքների և բարեհունչ արտասանության հետ՝ նորխոսքի բառերի որոշ թարգմանություններում, օրինակ՝ **Minipax-Նախախաղ, thinkpol-մտքաուստ**, բառակազմության ընթացում *խաղաղություն, նախարարություն, ոստիկանություն* բաղադրիչներն այնպես են կրճատվել, որ նորխոսքի բառում իրենց կիրառությամբ դրանք ոչ միայն համարժեքորեն չեն արտահայտում բնագրի բառի արտահայտած իմաստը, այլ արտահայտում են լրիվ այլ իմաստներ: Հետևաբար, հենց վերոնշյալ միջլեզվական անհամապատասխանության պատճառով էլ հնարավոր չէ թիրախ լեզվում խստագույնս պահպանել աղբյուր տեքստին հատուկ բարեհնչության պրոսոդիկ առանձնահատկությունները և չունենալ իմաստային կորուստներ: Իսկ յուրաքանչյուր լեզվի պրոսոդիկ պատկերը՝ շեշտադրությունը, ռիթմը, առոգանությունը և այլն, տարբեր է:

Անգլերենը, լինելով գերմանական լեզու, լի է միավանկ բառերով, որոնք էլ հենց ապահովում են բնագրում նորխոսքի կցկտուր, միատոն առոգանությունը: Տիպաբանորեն ավելի մոտ լեզուների, օրինակ՝ գերմաներենի, հոլանդերենի կամ ֆրիզերենի դեպքում նորխոսքի բառային միավորների պարզ վանկային կառույցների վերստացումը՝ ի տարբերություն հայերենի, թերևս ավելի հեշտ կլիներ ձևաբանական,

բառակազմական և հնչյունական նմանությունների շնորհիվ: Հետևաբար, նորխոսքի՝ կառուցվածքային տեսանկյունից հեռադիր լեզու թարգմանության գործընթացում առանց իմաստային կորստի կանոնավոր և համամասն բարեհնչություն կարելի է ստանալ միայն թիրախ լեզվի առոգանական սկզբունքների հիման վրա: Ի դեպ, ինչպես պարզ է դառնում վերոնշյալ առաջին մեջբերումից, ըստ Օրուելի նախասահմանման՝ բարեհնչությունը մտաշահարկային պարտադիր նախապայման էր միայն իմաստի ճշգրտությունից հետո: Այդ իսկ պատճառով նորխոսքի բառային միավորների՝ այլ լեզու թարգմանության գործընթացում առավելագույն ուշադրություն պետք է հատկացվի բառերի իմաստների, ոչ թե բնագրի ձևային արտահայտման համարժեք փոխադրմանը: Եվ քանի որ նորխոսքի թարգմանությունը վերակառուցման մի ամբողջ գործընթաց է, այսինքն՝ նոր լեզվի վերածննդը մեկ այլ լեզվահամակարգի լեզվամշակութային ատաղձի հիման վրա, վերակառուցողական այս մոտեցումը պետք է հանդիսանա թարգմանչի լեզվական վարքի ուղեցույցը՝ ապահովելու իմաստի արտահայտման առավելագույն համարժեքությունը:

Նորխոսքի բառերի մի հոծ զանգված (շուրջ 25%-ը) թիրախ լեզու է փոխադրվել բառացի թարգմանության ուղով:

Ըստ Վինեի ու Դարբելնեի դասակարգման՝ բառացի թարգմանությունը (կամ բառ-բառ թարգմանությունը), ըստ էության, ենթադրում է աղբյուր տեքստի լեզվական միավորի փոխարինում թիրախ լեզվի քերականորեն և իմաստային տեսանկյունից համարժեք լեզվական միավորով: «Թարգմանական այս հնարի կիրառության դեպքում թարգմանիչը մեծամասամբ կենտրոնանում է թիրախ տեքստի լեզվական կանոններին հավատարիմ մնալու վրա: Գործնականում բառացի թարգմանությունը տեղի է ունենում հիմնականում նույն լեզվախմբին պատկանող երկու լեզուների, օրինակ՝ ֆրանսերենի և իտալերենի միջև, և լավագույնս է գործում, երբ դրանք ունեն նույն կամ ընդհանրական մշակութային հատկանիշներ» (Walinski 2015: 60):

Դիտարկենք բացառապես նորխոսքի միավորներով ձևակերպված հետևյալ բնագրային պարբերությունների հայերեն թարգմանությունները.

*“times 17.3.84 bb speech **malreported** africa rectify*

*times 19.12.83 forecasts 3 yp 4th quarter 83 misprints **verify** current issue*

*times 14.2.84 miniplenty **malquoted** chocolate **rectify***

times 3.12.83 reporting bb dayorder doubleplusungood refs unpersons rewrite fullwise upsub antefiling” (Orwell 2012: 45)

«թայմս 17.3.84 բբ ելոյթ **կեղծված** աֆրիկա ճշտել

թայմս 19.12.83 կանխատեսում եռամյա պլան 4-րդ եռամսյակ 83 տառասխալ **ստուգել** ընթացիկ համարի հետ

թայմս 14.2.84 նախառատ **սխալ մեջբերում** շոկոլադ **ճշտել**

թայմս 3.12.83 **զեկույց** բբ **օրվա պատվեր** կրկնակիգումարածլավ **մեջբերումներ** չմարդիկ վերաշարադրել **լրիվ վերիցվար մինչ ներկայացումը**» (Օրուել 2012: 41)

“*items one comma five comma seven approved fullwise stop suggestion contained item six doubleplus ridiculous verging crimethink cancel stop unproceed constructionwise antegetting plusfull estimates machinery overheads stop end message*” (Orwell 2012: 195)

-Հոդված մեկ ստորակետ հինգ ստորակետ յոթ հավանություն տալ **ամբողջը** վերջակետ առաջարկություն պարունակվել հոդված վեց կրկնակիպյուս անհեթեթ **սահմանային** մտահանցագործություն **հեղաձգել** վերջակետ **չջարունակել** կառուցողական նախաստացում պյուս գնահատում մեքենայական վերադիր վերջակետ ավարտ հաղորդագրության: (Օրուել 2012: 176)

Ինչպես երևում է վերոնշյալ օրինակներում ընդգծված միավորներից, ի տարբերություն բնագրի բառերի, որոնք նորխոսքի լեզվական առանձնահատկությունների հիման վրա ստեղծված կառույցներ են, հայերեն թարգմանությունները նորահնար կառույցներ չեն և առավել ևս արտահայտված չեն նորխոսքով, օրինակ՝

fullwise-լրիվ

antefiling- մինչ ներկայացումը

malreported- կեղծված

malquoted- սխալ մեջբերում

dayorder- օրվա պատվեր

refs- մեջբերումներ

fullwise- ամբողջը

unproceed- չջարունակել

constructionwise- կառուցողական

plusfull- պյուս

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ բառացի թարգմանությամբ հայոց լեզվին պատկանող լեզվական միավորներով փոխարինվելը նորխոսքի վերոնշյալ բառերի թարգմանությունների դեպքում նկատելի միակ լեզվական առանձնահատկությունը չէ: Նորխոսքի մի քանի օրինակների թարգմանության դեպքում ականատես ենք լինում նաև բառերի խոսքամասային պատկանելության փոփոխության: Այս դեպքում նորխոսքի բարդ բառերի հայերեն թարգմանությունները չեն պատկանում այն նույն խոսքի մասին, որոնց պատկանում են բնագիր բառերը.

- malquoted* (ած.) → **սխալ մեջբերում** (գոյ.)
approved (ած.) → **հավանություն տալ** (բայ)
antefiling (բայ) → **մինչ ներկայացումը** (գոյ.)
verging (բայ) → **սահմանային** (ած.)
fullwise (մկբ.) → **ամբողջը** (գոյ.)
fullwise (մկբ.) → **լրիվ** (ած., մկբ.)
bellyfeel (գոյ.) → **ստամոքսել** (բայ)
oldthink (գոյ.) → **հնամիտ** (ած.)
plusfull (ած.) → **պլյուս** (գոյ.)
oldthinker (գոյ.) → **հնամիտ** (ած.)
antegetting (բայ.) → **նախաստացում** (գոյ.)

Նմանօրինակ փոփոխությունը կոչվում է **փոխատեղում**, որն, ըստ Վինեի ու Դարբելնեի, թերևս ամենահաճախ կիրառվող թարգմանական հնարներից է (Vinay and Darbelnet 1995: 94):

Փոխատեղումը՝ որպես անուղղակի թարգմանության միջոց, սահմանվում է որպես մի խոսքի մասի փոխարինումը մյուսով՝ առանց մտքի կամ իմաստի փոփոխության (1995: 94–99): Վինեն ու Դարբելեն տարանջատում են փոխատեղման կիրառության երկու հիմնական տարատեսակներ՝ հարկադիր և կամընտիր փոխատեղում, որոնց թարգմանաբանները նաև անվանում են համապատասխանաբար ենթակայություն և նախընտրություն (servitude and option): Հարկադիր փոխատեղումը, տրամաբանորեն, կապված է աղբյուր և թիրախ լեզուների միջև գոյություն ունեցող լեզվական անջրպետի հետ: Այլ կերպ ասած՝ թիրախ լեզուն չի տալիս կառուցվածքային հնարավորություն՝

արտահայտելու միտքն այն նույն խոսքի մասով, որով այն արտահայտված է աղբյուր լեզվում, և արդյունքում տեղի է ունենում խոսքի մասի հարկադիր փոխատեղում: Կամընտիր փոխատեղումը, ի տարբերություն հարկադիր փոխատեղման, կապված է թիրախ լեզվի կառուցվածքային ճկունության հետ, որի արդյունքում հնարավոր է աղբյուր լեզվում մի խոսքի մասով արտահայտված միտքը արտահայտել նաև այլ խոսքի մասով՝ չկորցնելով ասույթի իմաստային ամբողջականությունը: Լեզվաբաններն այնուհետև նշում են փոխատեղման կիրառության շուրջ քսան դեպք, օրինակ՝ բայ→գոյական, կամ մակբայ→բայ և այլն: Բացի Վինեի ու Դարբելնեի դասակարգումից, փոխատեղումը տեղ է գտել այլ թարգմանաբանների դասակարգումներում ևս: Քեթֆորդը, իր դասակարգման մեջ քիչ տարբերվելով Վինեից ու Դարբելնեից, այն անվանում է դասային կամ դասակարգային փոխատեղում (Catford 2000: 143-7):

Եթե փորձ արվեր բնագրի բառերը թարգմանել նորխոսքով, այսինքն՝ իմաստին համապատասխան ստեղծել նորխոսքով արտահայտված կառույցներ, խոսքի մասերը պետք է որ չենթարկվեին որևէ փոփոխության: Սակայն բառացի թարգմանության և փոխատեղման զուգադիպության այս դեպքում մենք գրեթե համոզված ենք, որ խոսքամասային փոխատեղումը գիտակցված և միտումնավոր կերպով կիրառված թարգմանական հնար չէ (ոչ հարկադիր և ոչ կամընտիր), այլ բառացի թարգմանությանը զուգակցող և դրանից ածանցված լեզվական փոփոխություն է միայն:

Շրջանցելով բնագրային նորխոսքին հատուկ տարահնչունությունը, ինչպես նաև քերականական և բառակազմական յուրահատկությունները (որոնք էլ տարբերակում են վերջինս անգլերենից և ունեն հստակ մտաշահարկային նշանակություն)՝ թարգմանված համարժեքներն արտահայտված են հայերենում արդեն իսկ գոյություն ունեցող բառերով և չեն իրականացնում նորխոսքին հատուկ մտաշահարկային գործառույթը, այն է՝ մտքի և մտածողության կառավարումը լեզվի պարզունակ և սահմանափակ կառուցվածքի ու հնարավորությունների միջոցով: Եվ քանի որ քաղաքական մտաշահարկումն ու քննադատական մտածողության սահմանափակումը ի կատար էին ածվում նորխոսքի հենց լեզվական առանձնահատկությունների միջոցով, պարտադիր նախապայման է, որ վերոնշյալ բառերի հայերեն համարժեքները լինեն նորխոսքով արտահայտված միավորներ՝ կազմված հայոց լեզվի համակարգային և

կառուցվածքային առանձնահատկությունների աղճատման և սահմանափակման հիման վրա:

Սակայն բացի բնագրի բառային միավորների թարգմանությունների՝ թիրախ տեքստում նույնպես նորխոսքի կառույցներ չլինելու խնդրից, անհամարժեքության մի շարք այլ դեպքեր նույնպես արժանի են ուշադրության և մանրակրկիտ քննության:

Բանն այն է, որ նորխոսքի մի շարք կառույցների, ինչպես նաև անգլերենից (հինխոսքից) փոխառված մի քանի պարզ բառերի թարգմանություններն ի ցույց չեն դնում այն հստակ երևույթը, որակական հատկանիշը կամ գործողությունը, որոնք անվանվում են բնագրում նորխոսքի բառերի կողմից նորխոսքով արտահայտված և վերոբերյալ տեքստային հատվածներում: Իմաստային այս անհամարժեքությունն, իհարկե, առավելապես պայմանավորված է աղբյուր տեքստի բառային միավորների արտահայտած իմաստների՝ թարգմանչի կողմից թյուրըմբռնմամբ, սակայն որոշ չափով պայմանավորված է նաև բառացի թարգմանության ընթացքում միավորների խոսքամասային փոխատեղումով:

Այս խնդրի մտաշահարկային գործառույթն այն է, որ, ինչպես նշել ենք սույն աշխատանքի առաջին գլխում, նորխոսքի տեքստերը, ըստ էության, հրահանգներ էին, որոնք տրվում էին մարդուն՝ իրականացնելու որոշակի գործողություն: Իսկ քանի որ դրանք հստակ կերպով կազմված ամբողջական նախադասություններ են, դրանց բաղադրիչները, տրամաբանորեն, միմյանց հետ կապված են որոշակի շարահյուսական կապերով՝ արտահայտելու մեկ ավարտուն միտք: Շարահյուսական հարաբե-րություններում, ինչպես գիտենք, յուրաքանչյուր խոսքի մաս ունի որոշակի պաշտոն և կատարում է կոնկրետ դեր. խոսքամասային պատկանելության փոփոխության արդյունքում փոխվում են պաշտոնները, գործառույթները և ողջ նախադասության արտահայտած միտքը:

Դիտարկենք հետևյալ նորխոսքային նախադասության թարգմանությունը.

“times 3.12.83 reporting bb dayorder doubleplusungood refs unpersons rewrite fullwise upsub antefiling»” (Orwell 2012: 51)

«թայմս 3.12.83 զեկույց բբ օրվա պատվեր կրկնակիգումարածլավ մեջբերումներ չմարդիկ վերաշարադրել լրիվ վերիցվար մինչ ներկայացումը» (Orwell 2012:48)

Վերոնշյալ հրահանգում, որի անգլերեն (հինխոսքով) թարգմանությունը հնչում է այսպես՝ «*The reporting of Big Brother's "Order of the Day" in the Times of December 3rd 1983 is extremely unsatisfactory and makes reference to nonexistent persons. Rewrite it in full and submit your draft to higher authority before filing*» (Orwell 2012: 51), որոշ բառեր թարգմանության արդյունքում կրել են իմաստային կորուստներ:

Այսպիսով՝ **refs** բառը, որը, հավանաբար, ստացվել է «**refers (to)**» նախդրավոր արտահայտության աղճատման արդյունքում, բայ է, և ցույց է տալիս, որ «զեկուցումը հղում է անում գոյություն չունեցող անձանց»: Բառիմաստի թյուրըմբռնման արդյունքում այն թարգմանվել է բառացի՝ ստանալով «**մեջբերումներ**» թարգմանությունը, որն էլ, գործողության փոխարեն ի ցույց դնելով երևույթ, աղավաղում է նորխոսքով տրված հրահանգի ողջ իմաստը:

Նույնպես, օրինակ՝ **upsub** բառը, որը, ենթադրաբար ստացվել է «**submit up**» բառակապակցությունից, իր խոսքամասային պատկանելությամբ բայ է և նշանակում է «**հանձնել վերադասին**»: Հայերեն թարգմանվածքում իմաստի թյուրըմբռնման արդյունքում թարգմանվելով «**վերիցվար**»՝ տեքստում որպես մակբայ ցույց է տալիս «**հողվածը վերաշարադրելու ձևը**», որն իրականում արդեն ցույց է տրվում հարևան **fullwise** բառի կողմից:

Այս և այլ թարգմանությունների դիտարկման հիման վրա կարելի է փաստել, որ եթե անգամ թարգմանված միավորները նույնությամբ արտահայտեին բնագրի բառերի իմաստները, միայն այն պատճառով, որ դրանք իրենց լեզվական արտահայտման կառուցվածքով չեն համապատասխանում նորխոսքի լեզվագործաբանական-մտաշահարկային սկզբունքներին, հայ ընթերցողի կողմից ճանաչելի չեն որպես արհեստաձին նորխոսքի միավորներ, կարող են համարվել անհամարժեք թարգմանություններ: Հետևաբար, բառացի թարգմանությունը՝ որպես թարգմանության մեթոդ, նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում կարելի է համարել ոչ կիրառական: Իսկ բառացի թարգմանության ենթարկված բնագրի բառերի մեծ մասը նորխոսքի կառույցներ են՝ բառակազմական մի շարք առանձնահատկությունների կիրարկմամբ, որոնք կարող էին պահպանվել պատճենման միջոցով: Օրինակ՝ **antefiling** բառը՝ կազմված **ante-**՝ նախնականություն ցույց տվող նախածանցով և **filing** գոյականով, բառացիորեն թարգմանվել է «**մինչ**

ներկայացումը», սակայն կարող էր պատճենման միջոցով թարգմանվել, օրինակ, որպես «**նախահանձնումը**»: Նմանապես, *malreported* և *malquoted* բառերը, որոնք համապատասխանաբար թարգմանվել են «**կեղծված**» և «**սխալ մեջբերում**», կարող էին պատճենման միջոցով ստանալ «**թերգեկուցված**» և «**թերմեջբերված**» համարժեքները: Հետևաբար, վերոնշյալ հրահանգը համարժեքորեն կարող էր թարգմանվել հետևյալ կերպ.

«թայմզ 3.12.83 զեկույց մե օրապատվեր կրկնակիպլուսլավ հղում է չմարդիկ վերաշարադրել ամբողջաբար նախահանձնումը»:

Բավականին հետաքրքրական է նաև **փոխառության** թարգմանական մեթոդի կիրառությունը նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում: Վինեն ու Դարբելեն փոխառություն են կոչում լեզվական միավորի՝ աղբյուր լեզվից անմիջապես թիրախ լեզու անփոփոխ անցումը (2004: 129):

Պայմանավորված լինելով քաղաքական-մշակութային բարենպաստ հանգամանքներով՝ միջազգայնորեն հանրահայտ **Gestapo, Comintern, Inprecor** և **Agitrop** բառերը անմիջապես փոխառվել են թիրախ լեզու՝ ապահովելով համապատասխանաբար **Գեստապո, Կոմինտերն, Ինպրեկոր և Ագիտպրոպ** թիրախ լեզվի համարժեքները:

*“Even in the early decades of the twentieth century, telescoped words and phrases had been one of the characteristic features of political language; and it had been noticed that the tendency to use abbreviations of this kind was most marked in totalitarian countries and totalitarian organisations. Examples were such words as Nazi, **Gestapo, Comintern, Inprecor, Agitprop.**”* (Orwell 2012: 350)

*«Նույնիսկ քսանմեկերորդ դարի առաջին տասնամյակներին քաղաքական լեզվի բնորոշ գծերից մեկը դարձել էին միահյուսված բառերն ու արտահայտությունները. նմանատիպ հապավումներ օգտագործելու միտումն ամենից շատ նկատվում էր տոտալիտար երկրներում և տոտալիտար կազմակերպություններում: Նման օրինակներ են նացիստ, **գեստապո, կոմինտերն, ինպրեկոր, ագիտպրոպ** բառերը:»* (Օրուել 2012: 326)

Այս բառերի թարգմանության գործում փոխառության կիրառությունն ընդունելի է այնքանով, որ վերջիններս հանրահայտ պետական կառույցների անվանումների հապավումներ են, և իրենց ձևով նման լինելով նորխոսքի բառերին, փոխառվել են նաև նորխոսք:

Գեստապոն, օրինակ, վերցված է գերմաներենից, որը Նացիստական Գերմանիայի գաղտնի ոստիկանության կարճ անվանումն էր: Մյուս երեքը, որոնք կոմունիստական հաստատությունների կամ կազմակերպությունների անվանումներ էին, վերցվել են ռուսերենից: **Կոմինտերնը** (ռուսերենում՝ *“Коммунистический Интернационал”*) միջազգային կոմունիստական կազմակերպություն էր, որը զբաղվում էր կոմունիզմի գաղափարախոսության միջազգային տարածմամբ: **Ինպրեկորը** (ռուսերենում՝ *“Иностранный пресс-корреспондент”*) տարբեր լեզուներով լույս տեսնող մարքսիստական ամսագիր էր, իսկ **Ագիտպրոպը** (ռուսերենում՝ *“Отдел агитации и пропаганды”*) Քարոզչության և ագիտացիայի բաժնի կարճ անվանումն էր՝ Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական կուսակցության հատուկ հանձնաժողով, որը պատասխանատու էր գրականության, թատրոնի ու արվեստի և զանգվածային լրատվության այլ տեսակների միջոցով կոմունիստական գաղափարախոսության տարածման համար: Եվ որպես ազդեցիկ ու մեծ տարածում գտած քաղաքական կառույցներ, դրանք մեծապես ճանաչված էին միջազգային հանրության կողմից՝ ի դեպ, իրենց կարճ անվանումներով:

Նույնպես և Հայաստանում, որը՝ որպես հետխորհրդային երկիր, ժամանակին եղել է այդ կառույցի մաս և կոմունիստական գաղափարախոսության անմիջական կրողը, վերոնշյալ կազմակերպությունները նույնպես շատ հայտնի էին իրենց կարճ անվանումներով: Եվ քանի որ թե՛ աղբյուր, և թե՛ թիրախ լեզվամշակույթներում այդ բառերն արդեն իսկ գոյություն ունեին, թարգմանիչը կարողացել է համարժեք թարգմանություն ապահովել՝ պարզապես փոխառելով դրանք թիրախ լեզու:

Այս դեպքում, սակայն, գործ ունենք բառի՝ գործածությունից դուրս գալու ժամանակային խնդրի հետ: Բանն այն է, որ վերոնշյալ հաստատությունները, որպես քաղաքական կառույցներ, վաղուց է, ինչ գոյություն չունեն: Գոյություն չունի նաև Խորհրդային Միությունը՝ որպես կոմունիստական իշխանություն, որի մասն էին դրանք: Հետևաբար, վերոնշյալ անվանումները, վաղուց դուրս եկած լինելով գործածությունից, կարող են անճանաչելի լինել Խորհրդային Միության փլուզումից

հետո ծնված սերունդների կողմից: Սա նշանակում է, որ ինչպես վերոնշյալ բառերը, այնպես էլ դրանց՝ փոխառության միջոցով թարգմանությունները ժամանակի ընթացքում կարող են անճանաչելի դառնալ՝ ենթադրելով թարգմանական փոխադրման այլ մեթոդներ, ինչպիսիք են, օրինակ՝ պատճենումը, կամ գոնե՝ հարատեքստային միջոցներով, նշումներով կամ ծանոթագրությամբ դրանց բացատրական ներկայացումը:

Փոխառության կիրառության արդյունքում թարգմանական անհամարժեքության բավականին տարօրինակ դեպքեր են **speedful** ածականի և **speedwise** և **goodwise** մակբայների ուղղակի փոխառությունը թիրախ լեզու: Ի դեպ՝ բառային միավորին զուգահեռ թիրախ լեզու է փոխադրվել նաև ածականների և մակբայների ստեղծման բառակազմական սկզբունքը.

“Adjectives were formed by adding the suffix –ful to the noun-verb, and adverbs by adding –wise. Thus, for example, speedful meant ‘rapid’ and speedwise meant ‘quickly’” (Orwell 2012: 345)

«Ածականները կազմվում էին՝ գոյական-բային ավելացնելով –ֆուլ վերջածանցը, իսկ մակբայներին՝ –ուայզ վերջածանցը: Այսպիսով, օրինակ «սփիդֆուլ» նշանակում էր «արագ», իսկ «սփիդուայզ»՝ «արագորեն»: (Օրուել 2012: 320)

*“The word **well**, for example, was replaced by **goodwise**.”* (Orwell 2012: 345)

«Օրինակ «**ուելլ**» բառը փոխարինվել էր «**գուդուայզ**» բառով: (Օրուել 2012: 320)

Ինչպես երևում է՝ թիրախ լեզու են փոխառվել ոչ միայն ածականակերտ և մակբայակերտ ածանցները, այլև վերոնշյալ բառերի **speed** և **good** բառարմատները, որոնցից ոչ մեկը որևէ իմաստային արժեք չունի թիրախ լեզվում: Այս պարագայում լեզվագործաբանորեն համարժեք թարգմանություններ կարելի է ստանալ բնագրի համանմանությամբ թիրախ լեզվում ածականների և մակբայների կազմության համար համապատասխանաբար մեկ վերջածանց սահմանելով. ածականների համար, օրինակ, կարելի է առանձնացնել **–որեն** (ինչպես, օրինակ, «բարեմտորեն» բառի դեպքում), իսկ մակբայների համար **–աբար** վերջածանցը (օր.՝ **լավաբար, արագաբար** և այլն):

Բացի այդ, թիրախ լեզու է փոխառվել նաև «**well**» բառը՝ թարգմանվելով «**ուելլ**», որն այս դեպքում նույնպես որևէ իմաստային արժեք չունի թարգմանվածքի ընթերցողի դիտանկյունից: Համարժեք թարգմանություն ստանալու համար հարկավոր է պարզապես բառը թարգմանել բառացի՝ թարգմանելով այն «**լավ**»՝ ապահովելու իմաստային համարժեքություն:

Իմաստային անհամարժեքության դեպք է նաև նորիսուքով շարադրված վերոբերյալ հրահանգում տեղ գտած **bb (Big Brother)** հապավման փոխառությունը թիրախ լեզու՝ **բբ**, որը նույնպես որևէ իմաստային արժեք չունի թիրախ լեզվում:

Նորիսուքի **bellyfeel** բառն էլ թիրախ լեզվում թարգմանվել է «**ստամոքսել**», ինչն էլ, ըստ էության, **հարմարեցման** միջլեզվական փոխադրման դեպք է:

*“And in addition, only a person thoroughly crouded in Ingsoc could appreciate the full force of the word **bellyfeel**, which implied a blind, enthusiastic acceptance difficult to imagine today...”* (Orwell 2012: 348)

*«Բացի այդ, միայն Անգսոնցի պայմաններում մեծացած մարդը կարող է գնահատել «**ստամոքսել**» բառի ողջ ուժը, որը ենթադրում է կույր և խանդավառ ընդունում, ինչը դժվար է պատկերացնել մեր օրերում...»* (Օրուել 2012: 323)

Հարմարեցումը, ըստ Վինեի ու Դարբելնեի սահմանման, «անվանվող մշակութային երևույթի հարկադրված տեղաշարժն է այն դեպքում, երբ աղբյուր մշակույթի հաղորդակցական իրադրությունը գոյություն չունի թիրախ լեզվամշակույթում» (2004: 134-136): Այլ կերպ ասած, աղբյուր լեզվում կիրառված միավորը, որը հղում է անում յուրահատուկ մշակութային իրադրության կամ երևույթի, թարգմանության գործընթացում փոխարինվում է թիրախ լեզվի մի այնպիսի լեզվական միավորով, որը թիրախ լեզվամշակույթում համարժեքորեն կարտահայտի աղբյուր տեքստի մշակութային իրադրությունը:

Այս դեպքում թարգմանիչը, ինչպես երևում է, դիմել է հարմարեցման՝ թիրախ տեքստում հնարավորինս համարժեքորեն արտահայտելու «**bellyfeel**» բառի արտահայտած իմաստը: Դիտարկենք բառի՝ հեղինակի կողմից տրված սահմանումը.

«Բ շերտի բառերից մի քանիսն այնպիսի նուրբ իմաստներ ունեն, որ բացարձակապես անհասկանալի էին լեզուն լիարժեք չտիրապետողների համար: Դիտարկենք, օրինակ, Թայմզի առաջատար հոդվածից վերցրած նմանատիպ մի նախադասություն. «Հնամիտները չներսզգում են Անգսոնը»: Այս արտահայտության հինխոսքի ամենակարճ մեկնությունը կհնչեր այսպես. «Նրանք, ում գաղափարները ձևավորվել են Հեղափոխությունից առաջ, չեն կարող ողջ էությամբ ըմբռնել Անգլիական սոցիալիզմի սկզբունքները»: Բայց սա բնավ էլ պարզաճ թարգմանություն չէ: Նախ պետք է շեշտել, որ նորխոսքով շարադրված վերոնշյալ նախադասության ողջ իմաստը հասկանալու համար հարկ էր նախ գաղափար ունենալ Անգսոնի մասին: Բացի այդ, միայն Անգսոնի մեջ արմատացած մարդը կարող էր ինչպես հարկն է արժևորել ներսզգալ բառի ողջ ուժը՝ կույր և խանդավառ համաձայնում, որն այսօր դժվար է պատկերացնել...»¹⁵ (Օրուել 2012: 348):

Ինչպես վկայում է վերոնշյալ սահմանումը՝ **bellyfeel** բառն ուներ շատ կարևոր մտաշահարկային նշանակություն, այն է՝ Անգլիական Սոցիալիզմի գաղափարախոսության կույր, անվերապահ և չվիճարկված ընդունումը: Այս բառը նկարագրում է նաև ներքին հուզական այն խորը փորձառությունը, որը մարդ վերապրում է որևէ երևույթի կամ գաղափարի անմնացորդ որդեգրման արդյունքում:

Թարգմանիչն այս դեպքում հարմարեցրել է բնագրային **bellyfeel** բառը՝ թարգմանելով այն «ստամոքսել», որը, սակայն, այնքան էլ համարժեքորեն չի արտահայտում բնագրի բառի կողմից ցուցվող զգացական վերապրումը: **Bellyfeel** բառը այդ իմաստն ի ցույց է դնում իր անմիջական բաղադրիչների իմաստային պատճառաբանվածության շնորհիվ՝ ցույց տալով **զգացողություն (feeling)**, որն զգում են **ներսովդ (belly)**: «Ստամոքսել» բառը, որը հայոց լեզվում ամրագրված բառ չէ, մասնակիորեն ցուցում է «սնունդն ուտելու, խժռելու, և մարսելու երևույթները, և ոչ այն մտավոր, հոգեբանական և զգացական իմաստը, որը նախատեսված էր հեղինակի կողմից: Հետևաբար, որպես բառի համարժեք թարգմանություն առաջարկում ենք **ներսզգալ** բառը, որը ներակա կերպով համարժեքորեն արտահայտում է բնագրի բառի ցուցած «ողջ ներսով զգալու և վերապրելու» երևույթը:

¹⁵ Մեջբերման թարգմանությունը մերն է:

Անհամարժեքության մի հետաքրքիր դեպքի էլ կարելի է բախվել գրքի վերջին՝ «Նորխոսքի սկզբունքները» ենթագլխում (Օրուել 2012: 317-331): Ենթագլխի մի ողջ պարբերություն Օրուելը նվիրում է նորխոսքի քերականական կանոնավորության թեմային: Հայերեն թարգմանվածքում, սակայն, քերականական սկզբունքների նկարագրության համար հեղինակի առանձնացրած բառային միավորները չեն թարգմանվել, այլ նույնությամբ պահպանվել են թիրախ լեզվում.

*«Նորալեզվի քերականության երկրորդ փարբերակիչ հատկանիշը նրա կանոնավորությունն է: Ներքևում հիշատակվող մի քանի բացառություններից ելնելով՝ կարելի է ասել, որ բոլոր թեքումները ենթարկվում են նույն կանոնների: Հետևաբար բոլոր բայերում անցյալ ժամանակի ձևը և անցյալ դերբայը նույնն էին և ավարտվում էին –ed վերջածանցով: **Steal** (գողանալ) բայի անցյալ ժամանակաձևը **stealed** էր, **think** (մտածել) բայի անցյալ ժամանակաձևը՝ **thought**, և այդպես շարունակ, ամբողջ լեզվում **swam, gave, brought, spoke, taken** և այլ բոլոր ձևերը վերացան: Բոլոր հոգնակի ձևերը կազմվում էին –s կամ –es ավելացնելով: **Man, ox, life** (մարդ, ցուլ, կյանք) բառերի հոգնակին էր՝ **mans, oxes, lifes**: Ածականների համեմատական աստիճանները մշտապես կազմվում էին –er, –est ավելացնելով (**good, gooder, goodest**), անկանոն ձևերը և **more, most** կազմությունները վերացել էին:»* (Օրուել 2012: 320-321)

Ինչպես երևում է՝ հոծ գրությամբ բոլոր բառերն անգլերեն բառեր են, որոնց իմաստը կարող է հասկանալ միայն այն ընթերցողը, որը տիրապետում է անգլերենին: Սակայն վեպի հայերեն թարգմանվածքն, անշուշտ, նախատեսված է հայախոս ընթերցողի համար, ում համար վերոնշյալ անգլերեն բառերը չթարգմանված լինելու պատճառով որևէ իմաստային արժեք չունեն: Հինխոսքի **steal, think, man, ox, life, swam, gave, brought, spoke, taken, more, most** բառերը կարելի էր փոխարինել դրանց հայերեն **գողանալ, մտածել, մարդ, ցուլ, կյանք, լողացավ, տվեց, բերեց, խոսեց, վերցված, ավելի, ամենա** համարժեքներով, իսկ **stealed, thought, mans, oxes, lifes, gooder, goodest** նորխոսքի բառերի համար անհրաժեշտ էր կերտել համապատասխանորեն այլափոխված համարժեքներ՝ յուրաքանչյուր բառային կարգի համար սահմանելով բառակազմության մեկ կանոն՝ բայի անցյալ ժամանակի կազմության համար, օրինակ՝ սահմանելով միայն –ավ կամ –եց վերջածանցը (օր.՝

խաղեց, երգավ), հոգնակի թվի կազմության համար միայն **-եր** կամ **-ներ** վերջավորությունները (օր.՝ **մարդեր, հողվածեր**), իսկ ածականի համեմատական և գերադրական աստիճանների կազմման գործում պահպանել արդեն իսկ ներկայացված **պյուս-** և **կրկնակիպյուս-** նախածանցները՝ չհետևելով հեղինակի՝ վերոնշյալ քերական կարգի կազմության համար նոր կանոնի առաջադրմանը (**gooder, goodest**), ինչը կարելի է համարել հենց հեղինակի կողմից թույլ տրված լեզվական անհետևողականության դրսևորում (**plusgood-gooder, doubleplusgood-goodest**):

3.3 ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՆՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԽՈՍՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նորխոսքի բառային միավորների թարգմանության քննության ընթացքում արված միջլեզվական փոխադրման վերլուծությունը և դասակարգումը հնարավորություն ընձեռեցին ոչ միայն դուրս բերել իմաստային անհամարժեքությունները և գնահատել դրանք, այլև վեր հանել լեզվական արտահայտման մեծաքանակ անհետևողականություններ, որոնք ուղղակիորեն դեմ են նորխոսքի լեզվագործարանական առանձնահատկություններին:

Նկատելի անհետևողականություններ են թույլ տրվել մի շարք ածականների և մակբայների թարգմանության ժամանակ: Այսպես, բնագրի **սփիդֆուլ** ածականն ու **սփիդուայզ** և **գուդուայզ** մակբայները, որոնք ստացվել էին փոխառության միջոցով, ի ցույց են դնում նկատելի անհետևողականություն վեպում տեղ գտած այլ ածականների և մակբայների հետ, որոնք ստացվել են պատճենման և բառացի թարգմանության միջոցով: Բառացի թարգմանության միջոցով ստացված միավորները նորխոսքի կառույցներ չեն, այլ հայերենում ամրագրված բառային միավորներ, օր.՝ **fullwise-լրիվ, fullwise-ամբողջը, goodthinkful-բարեմիտ:**

“times 3.12.83 reporting bb dayorder doubleplusungood refs unpersons rewrite fullwise upsub antefiling” (Orwell 2012: 45)

«թայմս 3.12.83 զեկույց բբ օրվա պատվեր կրկնակիգումարածլավ մեջբերումներ չմարդիկ վերաշարադրել րիվ վերիցվար մինչ ներկայացումը» (Օրուել 2012: 41)

հմմտ

“Items one comma five comma seven approved fullwise stop suggestion contained item six doubleplus ridiculous verging crimethink cancel stop unproceed constructionwise antegetting plusfull estimates machinery overheads stop end message” (Orwell 2012: 195)

«-Հողված մեկ ստորակետը հինգ ստորակետը յոթ հավանություն տալ ամբողջը վերջակետը առաջարկություն պարունակվել հողված վեց կրկնակիպլուս անհեթեթ»

սահմանային մտահանցագործություն հետաձգել վերջակետ չշարունակել կառուցողական նախաստացում պլյուս գնահատում մեքենայական վերադիր վերջակետ ավարտ հաղորդագրություն» (Օրուել 2012: 176)

Նույն կերպ և **Constructionwise** և **Goodthinkwise** մակբայները, որոնք պատճենման միջոցով թարգմանվել էին համապատասխանաբար **կառուցողական** և **բարեմտորեն**, վերը քննարկված «**սփիդուայզ**» և «**գուդուայզ**» մակբայների հետ ի ցույց են դնում բառակազմական սկզբունքի նկատելի անհետևողականություն, որտեղ բնագրի նույն մակբայակերտ «**-wise**» վերջածանցի համար հայերենում կիրառվել են «**-ուայզ**», «**-որեն**» և «**-ական**» տարբերակները:

Կարևոր ենք համարում նշել, որ յուրաքանչյուր լեզվում ամեն խոսքի մաս ենթադրում է կազմության կոնկրետ միջոցներ, օրինակ՝ ածանցներ, որոնք ածականակերտ են, կամ ածանցներ, որոնք մակբայակերտ են: Իսկ նորխոսքի բառերի կազմության գործում լեզվական կառուցի նմանատիպ անհետևողականությունը ուղղակիորեն հակասում է վերջինիս՝ լեզվի պարզագույն կառուցվածքի միջոցով մտաշահարկային բնույթին: Այս դեպքում հեղինակը բոլոր ածականների և մակբայների կազմության համար համապատասխանաբար առանձնացրել է **-ful** և **-wise** վերջածանցները՝ սահմանափակելով անգլերենի բառակազմական կանոնը: Իսկ այդ գործառույթի՝ թիրախ տեքստում համարժեք ներկայացման համար անհրաժեշտ է յուրաքանչյուր խոսքի մասի կազմության համար հետևել մեկ ընդհանուր ձևային օրինաչափության՝ ածականների համար առանձնացնելով, օրինակ, **-ական**, իսկ մակբայների համար **-աբար** վերջածանցը:

Նմանատիպ ձևային անհետևողականություններ նկատելի են նաև որոշ անհատական բառային միավորների թարգմանություններում, ինչի արդյունքում էլ առաջ եկած հոմանիշությունը դեմ է նորխոսքի սկզբունքներին: Մասնավորապես՝ վերը նշված **fullwise** մակբայը, ինչպես երևում է, մի դեպքում թարգմանվել էր «**լրիվ**», մեկ այլ դեպքում «**ամբողջը**», որն, անկախ թարգմանությունների բնույթից և իմաստի համարժեք պահպանումից կամ չպահպանումից, ստեղծում է հոմանիշություն, ինչն էլ դեմ է նորխոսքի լեզվական սկզբունքներին:

Նմանատիպ անհամապատասխանություն կարելի է դիտարկել նաև **Plusgood**, **Doubleplusgood**, **Doublepluscold** և **pluscold** բառերի թարգմանությունների դեպքում:

Doubleplusgood բառը պատճենման արդյունքում մի տեղում թարգմանվել է «կրկնակիգումարածլավ», իսկ մեկ այլ տեղում՝ «կրկնակիպլյուսլավ», **Doublepluscold** և **pluscold** բառերը՝ համապատասխանաբար «կրկնակիպլյուսցուրտ» և «պլյուսցուրտ»:

“Or again, if you want a stronger version of “good”, what sense is there in having a whole string of vague useless words like “excellent” and “splendid” and all the rest of them? “Plusgood” covers the meaning; or “doubleplusgood” if you want something stronger still.” (Orwell 2012: 60)

«Կամ, եթե ուզում եք «լավ» բառի ավելի ուժեղ տարբերակ, ի՞նչ իմաստ ունի կիրառել այնպիսի աղոյ ու անիմաստ բառեր, ինչպիսիք են «գերազանցը», «փառահեղը», և այլն: «Գումարածլավ» բառն արտահայտում է ողջ իմաստը, կամ, եթե ավելի ուժեղ տարբերակ եք ուզում, «կրկնակիգումարածլավ»:» (Օրուել 2012: 56)

հմմտ

*“Provided that the opinions which were quacked out were orthodox ones, it implied nothing but praise, and when the Times referred to one of the orators of the Party as a **doubleplusgood** duckspeaker it was playing a warm and valued compliment.”* (Orwell 2012: 352)

«Եթե դրանով արտահայտվում էին ուղղահավատ կարծիքներ, ապա այն համարվում էր գովասանք, իսկ երբ «Թայմս» թերթը Կուսակցության հռետորներից մեկի մասին գրում էր՝ «կրկնակիպլյուսլավ բաղախոս», սա համարվում էր ջերմ ու արժեքավոր հաճողախոսություն:» (Օրուել 2012: 328)

հմմտ

*“Thus, for example, uncold meant ‘warm’, while **pluscold** and **doublepluscold** meant, respectively, ‘very cold’ and ‘superlatively cold’.”* (Orwell 2012: 346)

«Հետևաբար, օրինակ, «չցուրտ» նշանակում էր «տաք», մինչդեռ «պլյուսցուրտ» և «կրկնակիպլյուսցուրտ» համապատասխանաբար նշանակում էր «շատ ցուրտ» և «չափազանց ցուրտ»» (Օրուել 2012: 320)

Առաջին դեպքում, ինչպես երևում է, **plus** բառը փոխարինվել է իր հայերեն՝ «գումարած» համարժեքով, ինչն էլ անհետևողականություն է ստեղծում մյուս թարգմանությունների հետ, որոնցում «պլյուս» բառը նույնությամբ պահպանվել է: Առաջարկում ենք բոլոր բառերի թարգմանության դեպքում հետևողականորեն պահպանել «պլյուս»-ը, որը, ինչպես արդեն նշել ենք, եզրույթաբանական իր լայն կիրառության շնորհիվ համարժեքորեն կարտահայտի բնագրի բառի դրական արժեքի իմաստը, և իր միավանկ կառուցվածքով կհամապատասխանի նորխոսքի սահմանափակ լեզվական սկզբունքներին:

Անհետևողականության դեպքեր են նաև **Big Brother** բառակապակցության **B.B.** և **bb** հապավումների թարգմանությունները: **B.B.** հապավումը թարգմանվել է **Մ. Ե.**,՝ ստացված **Մեծ Եղբայր** արտահայտության սկզբնատառերով, այնինչ **bb** հապավումը նույն կերպով տառադարձվել է թիրախ լեզու՝ արդյունքում թարգմանվելով **բբ**, որը, թիրախ լեզվում չարտահայտելով որևէ իմաստ՝ անհասկանալի է հայ ընթերցողին, քանի որ որևէ հղում չի անում ռեֆերենտին և առաջացնում է հոմանիշության դեպք, ինչն էլ դեմ է նորխոսքի սկզբունքներին:

Duckspeak բառը, որը թարգմանվել է «բաղախոս», համընկնում է **Duckspeaker** բառի՝ նույնպես **բաղախոս** թարգմանության հետ, որի արդյունքում առաջացած համանունությունը ևս հակասում է նորխոսքի լեզվական սկզբունքներին:

*“This aim was frankly admitted in the Newspeak word **duckspeak**, meaning ‘to quack like a duck.’” (Orwell 2012: 352)*

«Այս նպատակի ուղղակի արտացոլումն էր նորալեզվի **բաղախոս** բառը, որը նշանակում է «բաղի պես կոնչալ»» (Օրուել 2012: 328)

հմմտ

*“Provided that the opinions which were quacked out were orthodox ones, it implied nothing but praise, and when the Times referred to one of the orators of the Party as a doubleplusgood **duckspeaker** it was playing a warm and valued compliment.”* (Orwell 2012: 352)

«Եթե դրանով արտահայտվում էին ուղղահավասար կարծիքներ, ապա այն համարվում էր գովասանք, իսկ երբ «Թայմս» թերթը Կուսակցության հռետորներից մեկի մասին գրում էր՝ «կրկնակիպլյուսլավ **բադախոս**», սա համարվում էր ջերմ ու արժեքավոր հաճոյախոսություն:» (Օրուել 2012: 328)

Duckspeak բառն առաջարկում ենք թարգմանել **բադխոսք**՝ հետևելով **Newspeak** և **Oldspeak** բառերի նորխոսք և հինխոսք թարգմանությունների տրամաբանությանը, իսկ **բադախոս** բառը նույնությամբ պահպանել, քանի որ համարժեքորեն ի ցույց է դնում բնագրի **duckspeaker** բառի **-er** վերջածանցի ցույց տված երևույթը՝ գործողություն կատարողին:

Խճճված անհետևողականությունների մի ամբողջություն կարելի է նկատել նաև **crime** բառը պարունակող նորխոսքի բառերի՝ մասնավորապես **sexcrime**, **facecrime**, **crimethink**, **thoughtcrime** և **crimestop** բառերի թարգմանությունների միջև:

*“His sexual life, for example, was entirely regulated by the two Newspeak words **sexcrime** (sexual immorality) and **goodsex** (chastity).* (Orwell 2012: 349)

«Օրինակ, նրա սեռական կյանքն ամբողջությամբ կարգավորվում էր նորալեզվի երկու բառով՝ **սեռահանց** (սեռական անբարոյականություն) և **բարեսեքս** (ողջախոհություն): (Օրուել 2012: 324)

հմմտ

*“In any case, to wear an improper expression on your face (to look incredulous when a victory was announced, for example) was itself a punishable offence. There was even a word for it in Newspeak: **facecrime**, it was called in Newspeak.”* (Orwell 2012: 71)

«Ամեն դեպքում պատժի արժանի հանցագործություն էր դեմքի ոչ պատշաճ արտահայտությունը (օրինակ, երբ հայտարարում էին հաղթանակի մասին, և դեմքը թերահավատություն էր արտահայտում): Նորալեզվում նույնիսկ այդպիսի բառ կար՝ «**դիմահանցագործություն**»:» (Օրուել 2012: 67)

հմմտ

“Items one comma five comma seven approved fullwise stop suggestion contained item six doubleplus ridiculous verging **crimethink** cancel stop unproceed constructionwise antegetting plusfull estimates machinery overheads stop end message.” (Orwell 2012: 195)

«-Հողված մեկ ստորակետի հինգ ստորակետի յոթ հավանություն փալ ամբողջը վերջակետ առաջարկություն պարունակվել հողված վեց կրկնակիպլուս անհեթեթ սահմանային **մտահանցագործություն** հեղափոխվել վերջակետ չջարունակել կառուցողական նախաստացում պլուս գնահատում մեքենայական վերադիր վերջակետ ավարտ հաղորդագրություն» (Օրուել 2012: 195)

հմմտ

“In the word **crimethink** (thoughtcrime), for instance, the think came second, whereas in thinkpol (Thought Police) it came first, and in the latter word police had lost its second syllable.” (Orwell 2012: 348)

«Օրինակ, **հանցամիտք** (մտահանցագործություն) բառում միտքը երկրորդ բառն է, իսկ մտքառստ (մտքի ոստիկանություն) բառում՝ առաջինը. վերջինիս դեպքում «ոստիկանություն» բառի մի մասը կրճատվել է:» (Օրուել 2012: 322)

հմմտ

“He had committed – would still have committed, even if he had never set pen to paper – the essential crime that contained all others in itself. **Thoughtcrime**, they called it.” (Orwell 2012: 22)

«Նա կատարել է, և եթե նույնիսկ գրչով դիպած չլիներ թղթին, դարձյալ կատարած կլիներ, բացարձակ հանցագործություն, որը ներառում է մնացած բոլոր

հանցագործությունները: **Մտահանցագործություն**, ահա թե ինչպես էր այն կոչվում:» (Օրուել 2012: 21)

հմմտ

*“But in any case an elaborate mental training, undergone in childhood and grouping itself round the Newspeak words **crimestop**, blackwhite and doublethink, makes him unwilling and unable to think too deeply on any subject whatever.”* (Orwell 2012: 241)

*«Բայց ցանկացած դեպքում, մանուկ հասակի մանրակրկիտ մտավոր վարժանքը, որը հիմնված է նորալեզվի այնպիսի բառերի վրա, ինչպիսիք են «**հանցականգր**», «սևասպիտակը» և «կրկնամիտքը», նրա մեջ մեռցնում է այս կամ այն հարցի մասին խոր մտածելու ցանկությունը:»* (Օրուել 2012: 224)

Ինչպես երևում է, **crimethink**-ը ստացել է երկու տարբեր թարգմանություն՝ մի դեպքում՝ **հանցամիտք**, մեկ այլ դեպքում՝ **մտահանցագործություն**՝ արդեն իսկ ի ցույց դնելով հոմանշություն: **Crime** բառը «**հանցագործություն**»-ով է ներկայացել նաև **thoughtcrime** բառի **մտահանցագործություն** և **facecrime** բառի **դիմահանցագործություն** թարգմանություններում, այնինչ **sexcrime** և **crimestop** բառերի դեպքում այն փոխարինվել է «**հանց**» ձևույթով՝ **sexcrime- սեռահանց** և **crimestop- հանցականգ**:

Նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում կիրառված թարգմանական մեթոդների, իսկ դրա հիման վրա նաև առաջացած բառակազմական անհետևողականությունների դեպքերի մանրամասն դիտարկումը կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ այդ անհետևողականություններն ուղղակիորեն հակասում են նորխոսքի՝ որպես սահմանափակող լեզվի պարզագույն լեզվական սկզբունքներին, այլև այն պատճառով, որ դրանք ուղղակիորեն ի հայտ են բերում նաև թարգմանչի որդեգրած համընդհանուր ռազմավարության մեջ նկատելի անհետևողականությունը:

Դիտարկված մեծաքանակ օրինակներից պարզ է դառնում, որ թարգմանիչը որոշ դեպքերում փորձել է ապահովել խիստ ձևային համարժեքություն բնագիր բառային միավորների ձևային կառույցների հետ՝ ձգտելով պահպանել դրանց ձևաբանական կառուցվածքն ու վանկային պատկերը, ինչի արդյունքում տեղի է ունեցել իմաստային

կորուստ: Որոշ բառային միավորներ ուղղակիորեն փոխառվել են թիրախ լեզու՝ չունենալով որևէ իմաստային արժեք: Այլ դեպքերում էլ անուշադրության են մատնվել նորխոսքի ձևային արտահայտման յուրահատկություններն ու դրա կազմության լեզվական առանձնահատկությունները, ինչի արդյունքում ստացված թարգմանությունները նորխոսքային կառույցներ չեն և չեն համապատասխանում նորխոսքի մտաշահարկային գործառույթին՝ իրականացված իր իսկ սահմանափակ լեզվական կառույցի միջոցով (տե՛ս Հավելված 2):

Հետևաբար կարելի է ասել, որ նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում կարևոր արժեքներ են և՛ բառերի արտահայտած իմաստն ու բովանդակությունը, և՛ դրանց արտահայտման լեզվական առանձնահատկությունները, մասնավորապես՝ *պարզունակ քերականական կառուցվածքը, կցկտուր առոգանությունը, նեղացված իմաստային շրջանակը և այլն:*

Այսպիսով, նորխոսքի բառերի թարգմանության գործում թարգմանչի որդեգրած ռազմավարությունը չի կարող ուղղված լինի կա՛մ միայն իմաստի, կա՛մ էլ միայն ձևային արտահայտման համարժեք փոխադրմանը, այլ պետք է ենթադրի թարգմանական մեթոդների այնպիսի կիրառություններ, որոնք կհանգեցնեն լեզվագործաբանորեն համարժեք թարգմանությունների:

Թարգմանության գործընթացում բնագրային նորխոսքը՝ որպես քաղաքական արհեստական լեզու, հարկ է դիտարկել որպես ինքնուրույն լեզվահամակարգ՝ ստեղծված հստակորեն սահմանված և հետևողականորեն կիրառվող լեզվական կանոնների հիման վրա: Բնագրային նորխոսքը հարկ է վերստեղծել թիրախ լեզվի, այս դեպքում՝ հայերենի հենքի վրա՝ վերջինիս լեզվական օրինաչափությունների համանման աղճատման և այլափոխման միջոցով: Այսինքն՝ եթե բնագրում հեղինակը, օրինակ, մակբայների համար սահմանել է կազմության մեկ հստակ օրինաչափություն (այս դեպքում՝ **-wise** մակբայակերտ վերջածանցի միջոցով), ապա դրանց լեզվագործաբանորեն համարժեք թարգմանություններ ստանալու համար հարկ է վերասահմանել կանոնը թիրախ լեզվում՝ դրանց կազմության համար առանձնացնելով, օրինակ՝ **-աբար** մակբայակերտ վերջածանցը՝ նույն գործընթացը կրկնելով մնացած բառային կարգերի համար:

Այսպիսով, նորխոսքի թարգմանությունը կարելի է համարել վերակառուցողական մի ողջ գործունեություն՝ կատարված թիրախ լեզվի լեզվաբանական հենքի

այլափոխման վրա, որի դեպքում թարգմանչի հիմնական գործունեությունը ենթադրում է ոչ թե բառային միավորների թարգմանություն, որպես այդպիսին, այլ դրանց ձևիմաստային վերաստեղծում՝ թիրախ լեզվում վերասահմանված կանոնների համաձայն:

3.4 ՀԱՆՐԱԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ «1984» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ

Իր դիստոպիկ հասարակական-քաղաքական սյուժեի միջոցով Օրուելի «1984» վեպը բավականին պատկերավոր կերպով արտահայտում է համատարած մտաշահարկման և բռնատիրության արդյունքում ձևավորված հասարակությունն ու վերջինիս խիստ բևեռացված շերտավորումը: Մտաշահարկված այդ հասարակության յուրաքանչյուր շերտի հեղինակը վերագրել է յուրահատուկ լեզվական արտահայտում: Դրանց միջև գոյություն ունեցող նկատելի լեզվական տարբերությունները նույնպես բավականին վարպետորեն են ներկայացված:

Վեպում գրական լեզվով է արտահայտված ներքին և արտաքին կուսակցության անդամների խոսքը, որոնք համապատասխանաբար ներկայացնում են հասարակության վերին և միջին խավերը: Լեզվի խոսակցական տարբերակն էլ օգտագործվում է հասարակ ժողովրդի՝ «պրոլետերի» կողմից, որոնք կազմում են հասարակության ցածր խավը:

Լեզվի կիրառությունը (*օգտագործած բառերը, խոսքի կառուցվածքը, կիրառած շարահյուսական կառույցներն ու ոճական հնարները, ինչպես նաև վերջինիս առոգանությունն ու խոսելաոճը*) պայմանավորված է այնպիսի առանցքային հասարակական գործոններով, ինչպիսիք են, օրինակ՝ անհատի պատկանելությունը հասարակության որևէ շերտի, նրա տարիքը, սեռը, ազգային պատկանելությունը, աշխարհագրական տեղակայումը, կրթության և կրթվածության մակարդակը և այլն:

Հասարակական կառույցի և լեզվի միջև գոյություն ունեցող բարդ փոխհարաբերություններն արժանացել են մանրակրկիտ դիտարկման հանրալեզվաբանության շրջանակներում: Իր բազմաթիվ ենթագիտակարգերով հանդերձ՝ այն փորձել է դիտարկել այնպիսի բազմաշերտ երևույթներ, ինչպիսիք են խոսողի հասարակական դիրքը, ամենատարբեր հասարակական իմաստները և դրանց արտահայտումը լեզվի միջոցով, լեզվական կառույցների միջև՝ տարբեր հասարակական գործոնների արդյունքում ձևավորված տարբերությունները, այն, թե ինչպես է հասարակական-հաղորդակցական դրվածքը պայմանավորում լեզվի

կոնկրետ միավորների գործածությունը և այլն (Wardhaugh and Fuller 2015, Trudgil 2000):

Կարևոր է նշել, որ հասարակական գործոնների լեզվական արտահայտումը տարբեր է յուրաքանչյուր լեզվամշակույթի համար: Որոշ լեզուներում, լեզվի գրական և ոչ գրական շերտերի միջև տարբերությունը կարող է արտահայտվել առավելապես բառային միավորների տարբերությամբ: Այլ լեզուներում դա կարող է լինել հնչյունական արտահայտումը, շարահյուսությունը, կամ էլ բոլորը միասին (Corder 1973):

Լեզվահասարակական սահմանազատումը լավագույնս արտահայտված է վեպի տարբեր կերպարների ասույթներում, որոնցում տեղ գտած հատընտիր լեզվական միավորների ու կառույցների շնորհիվ կարելի է հստակ պատկերացում կազմել խոսողի հասարակական պատկանելության և կարգավիճակի, ինչպես նաև նրան շրջապատող իրականության հետ կապված ամենատարբեր առանձնահատկությունների մասին: Ստեղծագործության մեջ տեղ գտած նմանատիպ լեզվական կառույցները վեպի հակամտաշահարկային հաղորդակցական ուղերձի առանցքային մասն են կազմում, քանի որ դրանց միջոցով հեղինակը փորձում է հնարավորինս պատկերավոր կերպով ներկայացնել ամբողջատիրական իշխանության իրականացրած մտաշահարկման արդյունքում ձևավորվող խարխիված հասարակությունը, կենցաղը, առօրյան ու կյանքը, որոնք իրենց լավագույն լեզվական արտահայտումն են գտնում հանրալեզվական կառույցների շնորհիվ:

Վեպում հատուկ ուշադրության են արժանի հատկապես համատարած բռնատիրության համատեքստում խիստ առանձնացված ցածր խավի ներկայացուցիչների՝ պրոլների ասույթները, որոնք բացահայտ կերպով ներկայացնում են իրենց հեղինակների անգրագիտությունն ու հասարակության ցածր խավին պատկանելությունը՝ արտահայտված այնպիսի լեզվական կառույցներով, ինչպիսիք են, օրինակ՝ քերականորեն սխալ կառույցները՝ **«didn't ought to»**, **«that's what come»**, **«I says»**, **«what I done»**, **«you ain't got»**, **«what I got»**, **«I takes»**, **«it were in February»**, **«no number...ain't won»**, **«I got the 'ole lot of 'em...wrote down on a piece of paper»**, արտասանական առանձնահատկություններն ընդգծելու համար ուղղագրական շեղումները՝ **«if you'd of been»**, **«you'd of done»**, թերարտասանված բառերի կրճատ գրելաձևերը՝ **«'ave» (have)**, **«'em» (them)**, **«'her» ([h]-ն չի արտասանվում)**, **«'as» (has)**, **«'ome» (home)**, **«'ole» (whole)**, **«reg'lar» (regular)**, **«An'» (And)**, ինչպես նաև մի շարք

խոսակցական արտահայտություններ՝ «*bleeding well*», «*bleeding*», «*pretty near tell you*»:

Իսկ թարգմանության գործընթացում, որի դեպքում միավորվում, և միևնույն ժամանակ հակադրության մեջ են դրվում երկու տարբեր լեզուներ և մշակույթներ, հասարակական շերտավորումն արտահայտող հանրալեզվական կառույցների համարժեք փոխադրումը, (որն այս դեպքում պարտադիր էր վեպի հակաբռնատիրական իրազեկային նշանակության պատճառով), բարդագույն նախաձեռնություն է հենց այն պատճառով, որ, ինչպես արդեն նշել ենք, տարբեր լեզվամշակույթներում այն ստանում է խիստ տարբեր լեզվական արտահայտում՝ գործարկված իրարից խիստ տարբեր լեզվական միավորների միջոցով:

Ջ. Օրուելի «1984» վեպում տեղ գտած հակաամբողջատիրական և հակամտաշահարկային նշանակություն ունեցող հանրալեզվական կառույցների թարգմանության համարժեքությունը գնահատելու նպատակով առանձնացրել ենք երկխոսությունների մի քանի թարգմանություն, որոնց վերլուծության միջոցով փորձել ենք վերհանել առկա թարգմանական անհամարժեքությունները՝ ուշադրություն դարձնելով, իհարկե, տարբեր հասարակական առանձնահատկությունների, մասնավորապես՝ դասի և տարիքային խմբի պատկանելության լեզվական արտահայտման յուրահատկություններին և թարգմանվածքում դրանց պահպանմանը:

“There, comrades! That’s how I want to see you doing it. Watch me again. I’m thirty-nine and I’ve had four children. Now look.” She bent over again. “You see my knees aren’t bent. You can all do it if you want to.” she added as she straightened herself up.” (Orwell 2012: 42)

«Տեսնու՞մ եք, ընկերներ: Ապացուցեք, որ դուք էլ կարող եք: Մեկ անգամ ևս հեղուկ եմ: Ես երեսունինը տարեկան եմ, ունեմ չորս երեխա: Հիմա նայեք,- նա նորից կռացավ: -Տեսնու՞մ եք՝ ծնկներս ծալված չեն: Բոլորդ էլ կարող եք անել, եթե ցանկանաք,- ավելացրեց նա և ուղղվեց:» (Օրուել 2012: 40)

Վերոնշյալ ասույթի հեղինակը մարմնամարզության կին հրահանգիչն է, որը հեռուստատեսությամբ վարում է առավոտյան մարմնամարզության հաղորդումը: Հրահանգիչը արտաքին կուսակցության, այսինքն՝ միջին դասի ներկայացուցիչ է, որը

խոսում է գրական լեզվով՝ դիմելով այս դեպքում միջին դասի ներկայացուցիչներին: Եվ չնայած ասույթում տեղ գտած որոշ կառույցներ բավականին տեղայնացվել են, դրա թարգմանությունը, արտահայտված լինելով գրական լեզվով, համարժեքորեն ներկայացնում է վերջինիս հեղինակի հասարակական դիրքը:

“They do get noisy,” she said. “They’re disappointed because they couldn’t go to see the hanging, that’s what it is.” (Orwell 2012: 28)

«Նրանք այնքան աղմկոտ են,- ասաց կինը: -Տխրել են, որ չկարողացան տեսնել կախաղան հանվողներին:» (Օրուել 2012: 26)

Այս օրինակում ևս, խոսակցությունը տեղի է ունենում արտաքին կուսակցության երկու անդամների՝ վեպի գլխավոր հերոս Ուինսթոն Սմիթի և հարևանուհու՝ տիկին Փարսոնսի միջև, որոնք գրական լեզվով են խոսում թե՛ աշխատանքային միջավայրում, և թե՛ առօրյա կյանքում: Չնայած ասույթը ձևակերպված է գրական լեզվով, իրադրությունը ոչ պաշտոնական է և ենթադրում է որոշակի խոսակցականություն: Թարգմանիչը ասույթի թարգմանության մեջ համարժեք կերպով պահպանել է այս յուրահատկությունը՝ **«They’re disappointed because they couldn’t»** ստորադասական կառույցը թարգմանելով ոչ թե **«Տխրել են, քանի որ/որովհետև չեն կարողացել»** (վաղակատար ներկա բայաձևով), որը բնագրի կառույցի թեև քերականորեն համարժեք, սակայն խիստ գրական թարգմանություն կլիներ, այլ **«Տխրել են, որ չկարողացան»**, որում ստորադաս բաղադրիչի **«չկարողացան»** բայը դրված է անցյալ կատարյալ ժամանակաձևով՝ որպես անցյալ ժամանակի ցուցման ավելի խոսակցական տարբերակ: Թարգմանիչը, այնուամենայնիվ, չի թարգմանել **«that’s what it is»** արտահայտությունը, որը հայերենում կարող էր թարգմանվել որպես **«էդքան բան»**:

“Why can’t we go and see the hanging?” roared the boy in his huge voice.

‘Want to see the hanging! Want to see the hanging!’ chanted the little girl, still capering round.” (Orwell 2012: 28)

«Ինչի՞ չենք կարող տեսնել ոնց են կախաղան հանում,- բամբ ձայնով գոռաց տղան:

Ուզում եմ տեսնեմ կախաղան հանվողներին, ուզում եմ տեսնեմ կախաղան հանվողներին,- երգում էր փոքրիկ աղջիկը՝ շարունակ թռչկոտելով:» (Օրուել 2012: 26)

Այս դեպքում աղբյուր տեքստի «**Why can't we go and see the hanging?**» նախադասությունը, որը շարադրված է գրական լեզվով, չի բացահայտում խոսողի տարիքը, որը երեխա է, կամ հաղորդակցության ոչ պաշտոնական դրվածքը: Հայերեն թարգմանության մեջ, սակայն, «**Why**» հարցական դերանունը թարգմանվել է «**հնչի**», որը «**հնչու**» հարցական դերանվան խոսակցական տարբերակն է, և մեծապես համապատասխանում է ասույթի հեղինակի տարիքին: «**Go and see the hanging**» շարահյուսական կառույցը, սակայն, թիրախ տեքստում ենթարկվել է որոշակի փոփոխության. «**Go**» բառը բաց է թողնվել, իսկ «**see the hanging**» բառակապակցությունը, որտեղ «**the hanging**»-ը գոյականով արտահայտված ուղիղ խնդիր է, թարգմանվել է «**տեսնել ոնց են կախաղան հանում**», որում «**ոնց են կախաղան հանում**» -ը ստորադաս երկրորդական նախադասություն է: «**Կարող**» և «**տեսնել**» բառերը նույնպես գրական լեզվի միավորներ են և կարող էին խոսակցականացվել: Մենք առաջարկում ենք ողջ նախադասությունը թարգմանել բառացի՝ միավորներից մի քանիսը փոխարինելով խոսակցական տարբերակներով: Այսպես, «**can't**» բառը «**չենք կարող**»-ի փոխարեն կարելի է թարգմանել «**չենք կարա**», որը նախորդի խոսակցական տարբերակն է, **go** և **see** բառերը կարելի է թարգմանել համապատասխանաբար **զնանք** և **տեսնենք**, որոնք այս դեպքում **զնալ** և **տեսնել** անորոշ դերբայների խոսակցական կիրառություններն են: Այստեղից էլ ամբողջ նախադասության թարգմանության մեր առաջադրած տարբերակը՝ «**հնչի՞ չենք կարա զնանք տեսնենք կախաղան հանելը**»:

Հաջորդ նախադասության մեջ նույնպես, «**Want to see**» արտահայտության «**to see**» անորոշ դերբայը թիրախ տեքստում թարգմանվել է «**տեսնեմ**», որն այս կառույցում «**տեսնել**» անորոշ դերբայի փոխարեն կիրառվող դիմային ձևն է: Հայերենի խոսակցական լեզվին հատուկ՝ անորոշ դերբայի բայաձևերի փոխարեն ըղձական եղանակի բայաձևերի կիրառությունը բնորոշ է ոչ միայն երեխաներին, այլև բոլոր տարիքային և դասային խմբերին: Այս դեպքում թարգմանիչը փորձել է տեղայնացնել բնագրի իրադրությունը, ինչի արդյունքում ասույթի հեղինակի տարիքի լեզվական

արտահայտումը համարժեքորեն պահպանվել է թիրախ տեքստում: Ահա ասույթի թարգմանության մեր առաջարկած տարբերակը.

**«-Ինչի՞ չենք կարա գնանք տեսնենք կախաղանը,- բամբ ձայնով գոռաց տղան:
-Ուզում եմ տեսնեմ կախաղան հանվողներին, ուզում եմ տեսնեմ կախաղան
հանվողներին,- երգում էր փոքրիկ աղջիկը՝ շարունակ թռչկոտելով:»**

“We didn’t ought to ‘ave trusted ‘em. I said so, Ma, didn’t I? That’s what come of trusting ‘em. I said so all along. We didn’t ought to ‘ave trusted the buggers.” (Orwell 2012: 39)

«-Ոչ մի դեպքում չպիտի վստահեինք նրանց: Ասում էի, չէ՞, այ կնիկ, ասում էի: Ահա նրանց վստահելու հետևանքը: Միշտ ասում էի: Ոչ մի դեպքում չպիտի վստահեինք այդ տակաճարների:» (Orwell 2012: 36)

Վերոնշյալ ասույթի հեղինակը ծեր պրոլ է՝ հարբած, դժբախտ, հավանաբար նաև անտուն, աշխատավոր դասին պատկանող մի մարդ, որը Լոնդոնի մետրոյի սալապատ հատակին մի ծեր կնոջ կողքին նստած՝ պատմում է տանջող ծանր և անտանելի ցավը:

Բնագրում ասույթի արտահայտման լեզուն խիստ խոսակցական է՝ արտահայտված գրական լեզվից նկատելի քերականական շեղումներով և կրճատ արտասանություններով, որոնք հանդիպում են նմանատիպ այլ ասույթներում ևս: **«Didn’t ought to»** and **«that’s what come»** քերականական կառույցները, ինչպես նաև **«’ave»** and **«’em»** կրճատումները վկայում են խոսողի անկիրթ լինելու և հասարակության ցածր խավին պատկանելության մասին:

Ասույթի հայերեն թարգմանությունը, սակայն, արտահայտված է գրական լեզվով: Այս դեպքում թարգմանիչը գրեթե ընդհանրապես չի պահպանել աղբյուր տեքստի հանրալեզվական յուրահատկությունները: **«Կնիկ»** բառն, ըստ էության, միակ խոսակցական բառն է, որը կիրառվել է ասույթի թարգմանության մեջ:

«Ոչ մի դեպքում» արտահայտությունն, օրինակ, գրական լեզվին հատուկ կառույց է, որը ցածր խավի, կրթական ցածր ցենզ ունեցող ներկայացուցչին հատուկ չէ, հետևաբար կարող է զեղչվել: **«Ought to ‘ave»** կառույցը, որը թարգմանվել է **«չպիտի»**,

կրկին գրական ձև է, որը կարելի է թարգմանել «**չպփի**»՝ որպես անգլերեն խոսակցական միավորի համարժեք:

«**Them**» դերանվան բառացի «**նրանց**» թարգմանությունը կարելի է փոխարինել «**դրանց**» դերանունով, որն իր ձևով պատկանում է երկրորդ դեմքին, բայց հայոց լեզվում երրորդ դեմքին հղում անելիս արտահայտում է խոսողի խտրական մոտեցումը: Թարգմանության այս տարբերակն ավելի է ընդգծում հեղինակի ատելությունն ու նողկանքը նշված անձանց նկատմամբ: Այստեղից էլ նախադասության թարգմանության մեր առաջարկած տարբերակը՝ «**Չպփի վստահեինք դրանց**»:

«**Ահա նրանց վստահելու հեղևանքը**» նախադասությունը նույնպես շատ գրական է հնչում: «**Ահա**» ցուցական մակբայը կարելի է փոխարինել խոսակցական «**էս էլ քեզ**» արտահայտությամբ, ինչն էլ ավելի ուժգին կերպով է ընդգծում հեղինակի հիասթափությունը: «**Հեղևանքը**» բառն էլ կարելի է փոխարինել խոսակցական, ինչպես նաև բարբառային «**խերը**» (օգուտ) բառով, որի կիրառությունը, թերևս, ավելի հատուկ է ցածր խավի մարդուն: Այստեղից էլ նախադասության մեր առաջարկած թարգմանությունը՝ «**էս էլ քեզ դրանց վստահելու խերը**»:

«**I said so all along**» նախադասության «**Միշտ էլ ասում էի**» թարգմանության մեջ «**միշտ էլ**» արտահայտությունը կարելի է փոխարինել «**հա էլ**» արտահայտությամբ, որում խոսակցական «**հա**» մակբայը ցույց է տալիս գործողության երկարատև շարունակականություն կամ կրկնողականություն:

Վերջին նախադասության «**ոչ մի դեպքում**» արտահայտությունը նույնպես կարելի է բաց թողնել՝ «**այդ**» ցուցական դերանունը փոխարինելով խոսակցական «**էդ**» տարբերակով:

Աղբյուր տեքստում առկա արտասանական կրճատումները՝ տեքստում արտահայտված ապաթարցի միջոցով, թիրախ լեզվում կարելի է փոխարինել որոշ բառերի խոսակցական տարբերակներով: Այդպիսով, առաջարկում ենք ասույթի թարգմանության հետևյալ տարբերակը:

«-Չպփի վստահեինք դրանց: Ասում էի, չէ՞, այ կնիկ, ասում էի: էս էլ քեզ դրանց վստահելու խերը: Հա էլ ասում էի: Չպփի վստահեինք էդ փականքներին:»

““Yes,” I says to ‘her, “that’s all very well,” I says. “But if you’d of been in my place you’d of done the same as what I done. It’s easy to criticize” I says, “but you ain’t got the same problems as what I got.”” (Orwell 2012: 95)

«–Այո՛, ասում եմ նրան, ամեն ինչ շատ լավ է, ասում եմ: Բայց իմ փոխարեն դու էլ նույնը կանեիր: Հեշտ է, ասում եմ, քննադատել, բայց որ իմ օրին լինեի՛ր...» (Օրուել 2012: 89)

Այս օրինակում ևս, բնագրի ասույթի հեղինակը պրոլ է: Հաղորդակցական իրադրության մեջ «երկու խոշորամարմին կանայք՝ վառ կարմիր թևերը գոգնոցներին կանթած, խոսում էին մուտքի մոտ»: (Օրուել 2012: 89)

Արտահայտման լեզուն կրկին խոսակցական է՝ արտահայտված հիմնականում քերականական սխալ կառույցներով՝ «*I says*», «*you’d of been*», «*you ain’t got*», «*the same...as what*», ինչպես նաև *her* դերանվան կրճատ՝ «*’her*» արտասանությամբ:

Այսպիսով, «*Yes*» բառը, որն անգլերենում կիրառվում է և՛ գրական լեզվում, և՛ խոսակցական լեզվում, թարգմանվել է «*Այո*», որը հայերենում հատուկ է միայն գրական լեզվին: Մենք առաջարկում ենք այն թարգմանել «*Հա*», որը «*Այո*» բառի խոսակցական տարբերակն է: Առաջարկում ենք նաև «*’her*» դերանունը «*նրան*»-ի փոխարեն թարգմանել «*իրան*», որն էլ՝ լինելով «*իրեն*» դերանվան խոսակցական տարբերակը, խոսքում հաճախ օգտագործվում է «*նրան*» դերանվան փոխարեն:

Աղբյուր տեքստի «*that’s all very well*» արտահայտությունը, որը խոսողի պատասխանն է զրուցակցի արտահայտած կարծիքին, բառացի է թարգմանվել և չի արտահայտում աղբյուր տեքստի արտահայտության միտքը: Մեր առաջարկն է թարգմանել այն «*Ճիշտ ես ասում*», որը գործաբանորեն ավելի համապատասխան է հաղորդակցական իրադրությանը և արտահայտում է բնագրի արտահայտության իմաստը:

«*But if you’d of been in my place you’d of done the same as what I done*» նախադասությունը նկատելիորեն խտացվել է՝ թարգմանվելով «*Բայց իմ փոխարեն դու էլ նույնը կանեիր*»: Թարգմանությունը, ինչպես երևում է, շարադրված է գրական լեզվով և չի արտահայտում բնագրի նախադասության խոսակցական առանձնահատկությունները: Առաջարկում ենք թարգմանել այն բառացի՝ գործածելով խոսակցական

լեզվի բառային միավորներ: Այսպիսով՝ *«if you'd of been in my place. . .»* արտահայտությունը կարելի է թարգմանել *«Դու էլ իմ տեղն ըլնեիր»*, որում *«ըլնեիր»* բառը *«լինեիր»*-ի խոսակցական տարբերակն է, իսկ *«you'd of done the same as what I done»* արտահայտությունը կարելի է թարգմանել *«հաստատ նույնը կանեիր»*, որտեղ *«հաստատ»* մակբայը ավելի է ընդգծում խոսողի համոզվածությունը: *«As what I done»* կառույցը կարելի է բաց թողնել, քանի որ *«նույնը»* բառն արդեն իսկ հղում է անում խոսողի նախորդ ասածին, և սույն ոչ պաշտոնական իրադրությունը դրա կիրառությունը չի պարտադրում:

«It's easy to criticize," I says,...» արտահայտությունը թարգմանվել է *«Հեշտ է, ասում եմ, քննադատել»* որտեղ *«ասում եմ»* բառակապակցությունը գտնվում է միջադաս դիրքում, ինչը շարահասակն տեսանկյունից բնորոշ է գրական լեզվին: Մենք առաջարկում ենք վերաձևակերպել *«Հեշտ է քննադատել»* արտահայտությունը՝ կիրառելով խոսակցական լեզվի միավորներ: *«է»* օժանդակ բայը կարելի է փոխարինել իր խոսակցական՝ *«ա»* համարժեքով, իսկ *«to criticize»* անորոշ դերբայը, գոյականացնելով թիրախ տեքստում, թարգմանել *«քննադատելը»*, որը հայերենի խոսակցական լեզվին բնորոշ փոխակերպում է: *«Ասում եմ»* արտահայտությունը կարելի է փոխարինել *«լսի՛»* հրամայական եղանակով դրված բայով, որը *«լսի՛ր»* գրական ձևի խոսակցական համարժեքն է և համարժեքորեն պահպանում է *«ասում եմ»* արտահայտության ողջ խոսողական-ներգործական ներուժը: Այստեղից էլ թարգմանության մեր տարբերակը՝ *«հեշտ ա քննադատելը, լսի՛»*:

«But you ain't got the same problems as what I got» նախադասությունը թարգմանվել է *«բայց որ իմ օրին լինեի՛ր...»*: Աղբյուր տեքստն, ըստ էության, արտահայտում է խոսողի անհամաձայնությունը՝ իր և խոսակցի իրավիճակների նույնը լինելու հետ կապված, այնինչ բնագրային նախադասությունը արտահայտում է պայման: Մենք առաջարկում ենք պահպանել բնագիր նախադասության կառուցվածքը, ինչպես նաև թիրախ տեքստի *«օրին լինել»* արտահայտությունը և թարգմանել այն *«բայց դու էլ հո իմ օրին չես»*, որում *«էլ»* and *«հո»* մասնիկները ապահովում են ասույթի խոսակցական տոնն ու շեշտում խոսողի համոզվածությունը: Այսպիսով, առաջարկում ենք ասույթի թարգմանության հետևյալ տարբերակը.

«–Հա՛, իրան ասում եմ: Ճիշտ ես ասում: Բայց որ դու էլ իմ տեղն ըլինեիր, հաստատ նույնը կանեիր: Հեշտ ա քննադատելը, լսի՛, բայց դու էլ հո իմ օրին չես:»

“Can’t you bleeding well listen to what I say? I tell you no number ending in seven ain’t won for over fourteen months!”

‘Yes, it ‘as, then!’

‘No, it ‘as not! Back ‘ome I got the ‘ole lot of ‘em for over two years wrote down on a piece of paper. I takes ‘em down reg’lar as the clock. An’ I tell you, no number ending in seven -’

‘Yes, a seven ‘as won! I could pretty near tell you the bleeding number. Four oh seven it ended in. It were in February – second week in February.’” (Orwell 2012: 98)

«Բթամի՛տ, չե՞ս լսում՝ ինչ եմ ասում: Ասում եմ՝ յոթով վերջացող ոչ մի թիվ չի հաղթել վերջին տասնչորս ամսվա ընթացքում:

-Ես էլ ասում եմ՝ հաղթել է:

-Ոչ, չի հաղթել: Տանը ունեմ երկու տարվա բոլոր գրանցումները: Գրանցում եմ ժամացույցի ճշտությամբ: Ասում եմ, յոթով վերջացող ոչ մի թիվ. . .

-Չէ՛, յոթը հաղթել է: Կարող եմ նույնիսկ անիծյալ թիվն ասել: Վերջանում էր չորս զրո յոթով: Փետրվարին էր: Փետրվարի երկրորդ շաբաթը:» (Օրուել 2012: 91)

Վերջին օրինակում ևս, երկխոսությունը տեղի է ունենում երկու պրոլետների միջև, որոնց նկարագիրը մեջբերվում է վեպից. «Շարքից առաջ ընկած, շենքի անկյունում կիպ կանգնել էին երեք տղամարդ. մեջտեղինը ձեռքում ծալված թերթ ուներ, որը մյուս երկուսը նրա ուսի վրայից ուսումնասիրում էին: ... Պարզ էր, որ ինչ-որ կարևոր նորություն են կարդում: Ուինսթոնը մի քանի քայլ հեռավորության վրա էր, երբ հանկարծ խումբը բաժան-բաժան եղավ, ու տղամարդկանցից երկուսը կատաղի վեճի բռնվեցին: Մի պահ թվաց՝ կանցնեն բռունցքների» (Օրուել 2012: 97-98):

Վերոնշյալ իրավիճակը նկարագրում է պրոլետների առօրյան. քաղաքական և կառավարական անցուդարձից կտրված անկիրթ ու կրթական ցածր ցենզ ունեցող մարդկանց մի ամբողջություն, ովքեր առավուտից իրիկուն պտտվում էին առօրյա հոգսերի, խմելու, գրագի, և վիճակախաղի անվերջանալի շրջապտույտում: Այս

տեսարանն այնուհետև էլ ավելի պատկերավոր է դառնում վերնշյալ երկխոսության շնորհիվ:

Երկխոսության լեզուն այս դեպքում ևս խիստ խոսակցական է, և կրկին արտահայտված է քերականական սխալ կառույցներով՝ *«ain't won»*, *«I says»*, *«It were»*, արտասանական կրճատումներով *«'home»*, *«'em»*, ինչպես նաև խոսակցական արտահայտություններով՝ *«bleeding well»*, *«the whole lot of»*, *«pretty near»*: Բնագրային այս տեքստում առկա խոսակցական լեզվի կառույցների միայն մի մասն է համարժեք կերպով փոխադրվել թիրախ տեքստ: Այսպիսով, բնագրային *«bleeding well listen»* արտահայտությունը, որում *«bleeding well»* նշում է խոսողի անզորությունը՝ համոզելու իր խոսակցին, թիրախ տեքստում փոխարինվել է *«Բթամիպ»* ածականով, որը չնայած համարժեք կերպով ներկայացնում է հեղինակի բարկացած տոնը, արտահայտում է վիրավորանք, որն առկա չէ թիրախ տեքստում: Մենք առաջարկում ենք *«Բթամիպ»* բառը փոխարինել *«Ա՛յ մարդ»* խոսակցական կոչական արտահայտությամբ, որը համարժեքորեն արտահայտում է բնագրի կառույցի կոչական, սակայն ոչ վիրավորական գործառույթը:

Նմանապես, *«I tell you no number ending in seven ain't won for over fourteen months!»* նախադասությունը, որը թարգմանվել է *«Ասում եմ՝ յոթով վերջացող ոչ մի թիվ չի հաղթել վերջին փասնչորս ամսվա ընթացքում»* ամբողջությամբ շարադրված է գրական լեզվով: *«Վերջացող»*, *«հաղթել»* և *«ընթացքում»* բառերը մասնավորապես, թարգմանությանը տալիս են խիստ գրական արտահայտում: Մենք առաջարկում ենք փոխարինել այդ բառերն իրենց խոսակցական համարժեքներով: *«Վերջացող»* բառը կարելի է փոխարինել *«պրծնող»* բառով, *«հաղթել»* բայը *«շահել»* բայով (քանի որ հայ լեզվամտածողության մեջ վիճակախաղում շահում են, այլ ոչ թե հաղթում), իսկ *«ընթացքում»* բառը կարելի է փոխարինել *«մեջ»* կապով: Առաջարկում ենք նաև *«վերջին»* բառը փոխարինել *«անցած»* բառով, որն այս դեպքում խոսակցական կիրառություն է: Բացի այդ, առաջարկում ենք *«շահել»* անորոշ դերբայի կազմությունից դուրս հանել *«լ»* վերջավորությունը՝ *«won»* բառի թարգմանությունն առաջարկելով *«շահե»* խոսակցական տարբերակը: Նախադասության մեր առաջարկած թարգմանությունն է *«Ասում եմ՝ յոթով պրծնող ոչ մի թիվ չի շահե անցած փասնչորս ամսվա մեջ:»*

«-Ոչ, **չի հաղթել**» նախադասության մեջ նույնպես, գրական «Ոչ» բառը կարելի է փոխարինել իր «չէ» խոսակցական համարժեքով, իսկ «**հաղթել**» բառը այս անգամ ևս փոխարինել «**շահե**» բայով, որի արդյունքում ստացվում է «**Չէ՛, չի շահե**» թարգմանությունը:

«**Back 'ome I got the 'ole lot of 'em for over two years wrote down on a piece of paper**» նախադասության մեջ, բացի արտասանական «'ome», «'ole», «'em» կրճատումներից, ինչպես նաև անցյալ կատարյալ ժամանակաձևի «**wrote**» բայից, որն այս դեպքում արտահայտում է նույն բայի վաղակատար ներկա «**written**» բայաձևի իմաստը, խոսակցական արտահայտությունն ապահովվում է նաև նախադասության տարբեր անդամների, ինչպես նաև շարահյուսական բուն կառույցի միջոցով, օր.՝ տեղի պարագա «**back 'ome**» արտահայտությունը, որը նախադասության մեջ նախադաս դիրք է զբաղեցնում, «**the whole lot of**» և «**wrote down on a piece of paper**»՝ որոշի գործառույթով կառույցները: Թարգմանության ընթացում, սակայն, դրանք ենթարկվել են կրճատման կամ բացթողման: «**The 'ole lot of them**» և «**wrote down on a piece of paper**» արտահայտությունները, ըստ էության, թիրախ տեքստում խտացվել են «**գրանցումները**» բառի մեջ, որն, իհարկե, չի արտահայտում հեղինակների հանրալեզվական առանձնահատկությունները: Մենք առաջարկում ենք թարգմանության մեջ պահպանել աղբյուր տեքստի բոլոր բաղադրիչները՝ նախադասությունը թարգմանելով հետևյալ կերպ՝ «**անցած երկու տարվա շահած թվերը տունը լրիվ թղթի վրա գրած պահում եմ:**»

«**Կարող եմ նույնիսկ անիծյալ թիվն ասել**» նախադասությունը նույնպես գրական և պաշտոնական է հնչում: «**Կարող եմ**» բայը կարելի է փոխարինել իր խոսակցական՝ «**կարամ**» տարբերակով: «**Նույնիսկ**» մակբայը, որը նույնպես գրական կիրառության միավոր է, կարելի է փոխարինել իր՝ համեմատաբար ավելի խոսակցական համարժեքով՝ «**անգամ**» մակբայով, իսկ «**ասել**» անորոշ դերբայը կարելի է փոխարինել ըղձական՝ «**ասեմ**» բայաձևով, որն, ինչպես նշել ենք, խոսակցական լեզվին հատուկ կիրառություն է: Հետևաբար, այս նախադասության թարգմանության համար առաջարկում ենք «**Կարամ անգամ էդ անտեր թիվն ասեմ**» տարբերակը:

«**Four oh seven it ended in.**» նախադասության դեպքում էլ, որը թարգմանվել է «**Չորս զրո յոթով էր վերջանում**», «**վերջանում**» բայը ավելի հատուկ է գրական

լեզվին: Մենք առաջարկում ենք «**չորս զրո յոթ էր վերջում**» տարբերակը, որն ավելի խոսակցական է: Այստեղից էլ երկխոսության մեր առաջարկած տարբերակը.

Ա՛յ մարդ, չե՛ս լսում՝ ինչ եմ ասում: Ասում եմ՝ յոթով պրծնող ոչ մի թիվ չի շահե անցած փասնչորս ամսվա մեջ:

-Ես էլ ասում եմ՝ շահել ա:

-Չէ՛, չի շահե: Անցած երկու փարվա շահած թվերը փունը լրիվ թղթի վրա գրած պահում եմ: Գրանցում եմ ժամացույցի ճշտությամբ: Ասում եմ, յոթով պրծնող ոչ մի թիվ. . .

-Չէ՛, յոթը շահել ա: Կարամ անգամ էդ անտեր թիվն ասեմ: Չորս զրո յոթ էր վերջում: Փեփրվարին էր: Փեփրվարի երկրորդ շաբաթը:

Վեպում տեղ գտած հանրալեզվական նշանակություն ունեցող կառույցների և լեզվական միավորների համարժեք թարգմանությունը խիստ կարևոր է՝ վեպի հակաբռնատիրական ու հակամտաշահարկային ուղերձը տեղ հասցնելու նկատառումից ելնելով: Վեպը, որն իր տեսակով հակաուտոպիա է, մտաշահարկված, խարխված ու կաշառված քաղաքական իրականության ու մարդկության ապագայի հետ կապված Օրուելի խորը անհանգստությունը ներկայացնում է հենց լեզվի միջոցով:

Ինչպես նորխոսքը, որի գործառույթն այս «ուղերձում» լեզվական կառույցի միջոցով մտաշահարկված իրականությունը գործաբանորեն արտապատկերելն էր, այնպես էլ հերոսների խոսքը ներկայացնող լեզվական կառույցները կիրառված են ներկայացնելու հեղինակի կանխատեսած սև ու մութ ապագան, դաժան ու դժվար կյանքը, մտաշահարկված և շահագործված հասարակությունը:

Ինչպես արդեն նշել ենք, թարգմանության ողջ գործընթացում թարգմանչի կողմից լեզվական միավորների ընտրությունն ուղղակիորեն պայամանավորված է առկա թարգմանական նորմերով, որոնք էլ իրենց հերթին կապված են գործող հանրալեզվական նորմերի հետ: Սույն վեպի՝ որպես գրական ստեղծագործության թարգմանությունն էլ, բնականաբար, ուղղորդվել է գրական թարգմանության ոլորտում գոյություն ունեցող նորմերով, որոնք էլ, հավանաբար, պայմանավորել են վեպում տեղ գտած խոսակցական ասույթների խիստ գրական լեզվով թարգմանությունը: Սակայն այս դեպքում, նմանատիպ կառույցների իրականացրած կարևոր հաղորդակցական գործառույթը պարտադրում է դրանց համարժեք փոխադրումը թիրախ լեզու համարժեք

հանրալեզվաբանական կառույցներով՝ անգամ ենթադրելով լեզվական կամ
թարգմանական արդի նորմերի որոշակի խախտում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Որպես մարդկային մտածողության շահարկման ամենաարդյունավետ միջոց, լեզվի շահադիտական և աղճատող կիրառությունը կոնկրետ խոսույթներում, մասնավորապես՝ քաղաքական խոսույթում ապահովում է մտքի՝ շատ ավելի կայուն ու հարատև շահարկում ու հանրային հնազանդություն, քան ցանկացած այլ միջոց, որ երբևէ կիրառվել է իշխանությունների կողմից: Այս յուրահատկությունն էլ պայմանավորում է ժամանակակից քաղաքակիրթ հասարակություններում հենց լեզվական մտաշահարկման համատարած առկայությունը:

Հատկապես ուշագրավ է լեզվական մտաշահարկման մտային-ճանաչողական հայեցակերպը, քանի որ մարդկային մտածողությունն ու օբյեկտիվ աշխարհընկալումը մտաշահարկային լեզվի առաջնային թիրախներն են: Այն կարողություն ունի ազդելու մարդկային այնպիսի մտային-հոգեբանական տիրույթների վրա, ինչպիսիք են մարդու կարճաժամկետ և երկարաժամկետ հիշողությունը, զգացմունքային դաշտը, տրամաբանությունը, դատողությունը, խիղճը և այլն՝ հասցնելով մարդուն երկու հակադիր գաղափարներին միաժամանակ հավատալու կարգավիճակին:

2. Քաղաքականության ոլորտում մտաշահարկային գործառույթ են իրականացնում լեզվի բոլոր շերտերը: Շահադիտական նպատակներով ստեղծված և գործարկված լեզվական կառույցները՝ բառերը, արտահայտությունները, զանազան քերականական կառույցները, ոճական հնարները, առոգանությունը և այլն, իշխանությանը թույլ են տալիս աղավաղել օբյեկտիվ իրականությունը, այլափոխել տեղեկատվությունը, սուտը ներկայացնել որպես բացարձակ ճշմարտություն՝ սրանով ձևավորելով մի խոսույթ, որի շրջանակներում շահադիտական կառավարումը չի արժանանում հանրության ընդդիմությանը:

Լեզվական միջոցները մտաշահարկային գործառույթ կարող են իրականացնել միայն որոշակի համատեքստային և խոսույթային պայմաններում՝ արտահայտած ներակա իմաստների շնորհիվ: Հետևաբար, մտաշահարկային գործառույթ կարող է իրականացնել ցանկացած լեզվական միավոր՝ նշանից մինչև տեքստ՝ կախված դրա

կիրառության խոսույթային առանձնահատկություններից: Հենց այս լեզվագործաբանական առանձնահատկությունների պատճառով էլ նմանատիպ մտաշահարկային լեզվական կառույցների թարգմանությունը արժանի է առանձնահատուկ ուշադրության:

